

891.71
m-97

19 NOV 2008

ՔԱՆԱՍՏԵՂԾԻ ՄԱՀԱՆ ՀԱՐՅՈՐԻԱՄՅԱԿՆ

ԱՍԴՈՒՇԿՆ



ԿԱՊԻՏԱՆԻ ԱՂԶԻԿԸ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՎՐԱԿԶՈՐԹՅՈՒՆ 1937 ՅԵՐԵՎԱՆ

891.71
7-90

ՊՈՒՇԿԻՆՆԵՍԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

891.71

9-97

ար

Ա. Ս. ՊՈՒՇԿԻՆ

01 JAN 2007

ԿԱՊԻՏԱՆԻ ԱՂԶԻԿԸ

173

Տ. Կ.

ՅԵՐԲՐԻ ԿՐԱՍՆԱՐԱՆՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ

ՊԵՏԶՐԱՏ

1937

1317



1044
37

Պատիվը ջանքերը պահպանիր:
Առած

ԳԼՈՒԽ I

ԳՎԱՐԴԻԱՅԻ ՍԵՐԺԱՆՏԸ¹

Վաղն և եթ իղաճնար դվարդիայի կապիտան:
— Հարկավոր չե՝ թող նա բանակում ծառայի:
Հրաշալի՜ յն ասված — քաշի թող մի...
...
Իսկ հայրն ո՞վ և նրա:

Կնյաժնին²

Հայրս՝ Անդրեյ Պետրովիչ Գրինյովը յերեսասարդ ժամա-
նակ ծառայել եր ևրմա Մինիսի մոտ և պրեմյեր-մայորի աստի-
ճանում պաշտոնաթող յեղել 17... թվին: Այդ ժամանակից նա
սպրում եր Սիմբիրսկի նահանգում գտնվող իր դյուղում, ուր և
ամուսնացել եր աշտեղի մի աղքատ աղնականի աղջկա՝ Սվեդո-
տյա Վասիլևնա Յու.—ի հետ: Մենք՝ յերեսաներս իննը հոգի
եյինք: Իմ բոլոր յեղբայրներն ու քույրերը մանուկ հասակում են
մեռել: Գվարդիայի մայոր՝ մեր մոտիկ ազգական իշխան Բ.—ի
վաղորդածությամբ յես դրված եյի Սեմյոնովսկի գնդում վոյ-
սկա սերժանտ: Մինչև ուսումնա ավարտելը համարվում եյի
արձակուրդի մեջ: Այն ժամանակ մենք այժմյան պես չեյինք
դաստիարակվում: Հինգ տարեկան հասակից ինձ տվել եյին առ-
սիանդակասկա Սավելիչի ձեռքը, վորին, չնորհիվ իր վողջախոհ

1 Գվարդիա — սկզբներում նեղ մտքով՝ զորամաս, վորի պարտականու-
թյունն եր պահպանել զորահրամանատարի անձը — թիկնապահ զորք: Հետո-
դայում գվարդիան ստացավ զորքի ընտիր մասի նշանակություն: Ռուսական
գվարդիան աղնականներից դուժարված հատուկ զորքն եր և ուներ շատ ար-
տոնություններ: Սերժանտ — յենթասպա:

2 Յա. Բ. Կնյաժնին (1742—1791) — XVIII դարի ուսու դրամատուրգ:

վարք ու բարքի, նշանակել էյին իմ դատարարակը: Նրա հսկողութեան տակ տառներովու տարեկան հասակում ուսանողներն դրել-կարգաւ սովորեցիւ եւ կարող էյի բավական առողջ դատել արագա-վազ քերծեյի հասկողութեանն ժամանակ: Այդ ժամանակ հայրս ինձ համար վարձեց մի ֆրանսիացի՝ մոսյե Բոպրեյին, վորին Մոսկւայից բերել տվին զինու և պրովանսի ձեթի մի տարվա պաշարով հանդերձ: Նրա գալը բոլորովին դուր չեկաւ Սալելի-չին: «Փա՛ռք աստծո, — փնթիւնթում եր նա քթի տակ, — կարծեա թե յերեսայի յերեսը մաքուր ե, մաղերը՝ սանրած, փորը՝ կուշտ: Ել ի՞նչ կարիք կա ասլորդ փող ծախսել և մուսյե վարձել. ի՞նչ ե, եստեղ մենք մեր մարդիկը չունեյինք»:

Բոպրեն իր հայրենիքում յեղել եր պարիկմախեր, հետո՝ Պրուսիայում — զինվոր, ապա յեկել եր Ռուսաստան pour être outchitel¹, այնքան ել լալ չհասկանալով այդ բառի իմաստը: Նա խաղաղ բնավորութեան տեր մարդ եր, սակայն՝ ծայր-աւտիճան թեթեւամիտ և անառակ: Նրա գլխավոր թուլութեանը զեպի գեղեցիկ սեռն ունեցած մուլութեանն եր. հաճախ, ի պատասխան իր քնքրութեանն իր, նա ստանում եր այնպիսի հարվածներ, վորոնցից ամբողջ ուրերով հառաչում եր: Բացի այդ, նա (ինչպես ինքն եր ասում) քշնամի չեր շշին, այսինքն, (ուսանողն ասած) — սիրում եր չափից ասլելի կոնծել: Բայց, քանի վոր մեր տանը գինին միայն ճաշին էյին տալիս, այն ել՝ մի փոքրիկ դաւաթով (ռյումոչկայով), ըստ վորում գասատուլին սովորաբար աչքաթող էյին անում, ուստի և իմ Բոպրեն շատ չուտով սովորեց ուսա-կան թրմողուն և մինչև անգամ սկսեց գերադասել այն իր հայրենիքի գինիններից՝ վորպես ստամոքսի համար չափազանց ոգտակար: Մենք իսկույն բարեկամացանք և թեև ըստ պայմանի նա պարտավոր եր ինձ սովորեցնել ֆրանսերեն, գերմաներեն և քովոր գիտութեանները, բայց նա գերադասեց կարճ միջոցում ինձնից մի կերպ ուսանողն կոտրատել սովորել և ապա մեղնից յուրաքանչյուրն արդեն իր գործով եր զբաղվում: Ապրում էյինք մի սիրտ, մի հոգի: Ուրիշ մենտոր² յես չէյի ել ուզում: Սակայն չուտով բախտը մեզ բաժանեց և ահա թե ինչ գիպվածով:

Լվացարարուհի Պալաչկան՝ հաստիկ ու չեչոտ մի աղջիկ և

¹ Ուսուցիչ լինելու համար (outchitel — ուս. учитель բառն ե):

² Փոխար. դաստիարակ՝ վորիցեւի վորդի Տեխմարի դաստուլի տունով:

մի աչքը կույր կովապահ Ակուլ'կան ինչպես յեղաւ, խոսք մեկ արած, մի որ յեկան, միասին մորս վտոներն ընկան, խոստովա-նեցին իրենց մեղքը և լաց ու կոծով դանդաղեցին մուսյեյից, վորը գալթակղել եր նրանց անկործութեանը: Մայրս չեր սիրում նման բանը հանաքի տալ, ուստի և դանդաղեց հորս: Նրա դա-տաստանն ել կարճ եր լինում: Նա իսկույն և եթ իր մոտ պա-հանջեց արիւկա ֆրանսիացուն: Ասացին, վոր մուսյեն ինձ դաս և տալիս: Հայրս յեկալ իմ սենյակը: Այդ պահին Բոպրեն անմեղադրված: Հարկ ե գիտենալ, վոր Մոսկւայից ինձ համար աչ-խարհադրական քարտեղ էյին բերել տվել: Սռանց վորեւ գործա-ծութեան այդ քարտեղը կախված եր պատից և վաղուց ինձ հրա-պուրել եր թղթի լայնութեամբ ու լայնորակութեամբ: Յես վճռե-ցի նրանից մի ողապարտել չինել և, ոգտվելով Բոպրեյի քնից, գործի անցա: Հայրս ներս մտալ հենց այն բոպրեյին, յերբ յես ճիւղայից չինած պոչը հարմարեցնում էյի Բարեհուտ հրվանդա-նին: Տեսնելով իմ վարժութեանները աշխարհագրութեան մեջ, հայրս քաշեց ականջս, ապա մոտ վազեց Բոպրեյին, շատ ան-դգուշ արթնացրեց նրան և սկսեց նախատինք. թափել գլխին: Եւթոված Բոպրեն ուզեց վեր կենա, կանգնի և — չկարողացաւ. դժբախտ ֆրանսիացին թուղ հարբած եր: Յո՛թը ցալին՝ մի դարման: Հայրս բռնեց նրա ոճիքից, բարձրացրեց մահճակալի վրայից, դռներից դուրս հրեց և՝ ի մեծ ուրախութեան Սալելի-չի, նույն որ և եթ արձակեց պաշտոնից: Դրանով ել ավարտվեց իմ կրթութեանը:

Յես ապրում էյի իբրեւ մի թերուս. աղաւնիներ էյի թոցնում և աթուրմա խաղում բակի յերեսաների հետ: Մինչ այս, մինչ այն՝ տանակեց տարեկան դարձա: Այդ ժամանակ իմ վիճակը փոխվեց:

Մի անգամ աշնանը մայրս մեղրով մուրաբա յեր յեկում հյու-րասենյակում, իսկ յես բերանիս ջուրը կուլ տալով, նայում էյի մուրաբայի յեռացող փրփուրին: Հայրս պատուհանի մոտ նըս-տած կարդում եր Պալատական որացույցը¹, վոր ամեն տարի նա

¹ Այս որացույցի մեջ գտնուվում էյին ուղմ. և քաղաքայական բարձր աստիճանավորների ցուցակները, պալատական ընդունելութեան տեղեկա-տուները և դանադառ ուրիշ նման նյութեր ազնվականների և արքունի ազնվա-տոհմիկների համար:

ստանում եր: Այդ գիրքը նրա վրա միշտ մեծ ազդեցություն էր թողնում. նա միշտ առանձին հետաքրքրություն էր կարգում այն և ամեն անգամ ընթերցումը նրա մեջ առաջացնում էր մաղձի դարմանալի հուզումն: Մայրս, վոր անգիր գրտեր նրա բոլոր սովորությունները, միշտ աշխատում էր այդ դժբախտ գիրքը վորքան կարելի յե հեռու պահել և այդպիսով Պալատական որացույցը հաճախ ամբողջ ամիսներ նրա աչքին չէր ընկնում: Բայց, յերբ նա պատահաբար գտնում էր, ապա յերբեմն ամբողջ ժամերով այլևս ձեռքից բաց չէր թողնում: Յեւ այդպես, հայրս կարդում էր Պալատական որացույցը, յերբեմնակի ուսերը վեր քաշում և կիսաձայն կրկնում. «Գինեբալ-սորոուչի՛կ... Իմ վաշտում նա սերժանտ էր... Ռուսական զույգ որդենների կա-վալե՛ր²... Իսկ վաղո՞ւց ե, վոր մենք»... Վերջապես հայրս որացույցը շարանց բազմոցի վրա և խորատուլից մտածմունքի մեջ, վոր վոչինչ լավ բան չէր գուշակում:

Հանկարծ նա դարձավ մորս. «Ավդո՛ւտյա Վասիլևի՛նա, Պետրուշան քա՞նի տարեկան ե»:

— Դեհ, ահա տասնյոթի մեջն ե,—պատասխանեց մայրս:— Պետրուշան ծնվեց հենց այն տարին, յերբ մեր հորաբույր Նաստասյա Գերասիմովնայի մի աչքը կուրացավ և յերբ դեռ...

«Բարի, — ընդհատեց հայրս, — ժամանակն ե, վոր նա ղինվորական ծառայության գնա: Հերիք ե, ինչքան վաղվղեց աղջկաների սենյակներով և մաղցեց աղամյառաների պատերով»:

Ինձնից չուտով բաժանվելու միտքն այնպես չձեցրեց մորս, վոր նա գզարը ձեռքից բաց թողեց կաթնալի մեջ և արցունքները հոսեցին նրա յերեսով: Ընդհակառակը, դժվար ե նկարագրել իմ հիացմունքը: Զինվորական ծառայության գնալու միտքն իմ մեջ խառնվում էր ազատության և Պետերբուրգի կյանքի վա-յելքների մասին ունեցած մտքերի հետ: Յես ինձ յերեակայում եյի գվարդիայի սպա, վոր, իմ կարծիքով՝ մարդկային ամենա-մեծ յերջանկությունն էր:

1 Ռազմական բարձրագույն աստիճաններից մեկը ռուսական հին բանա-կում, սկսած XVII դարից:

2 Կավալեր (Ֆր. — ձիավոր) — առաջ այդպես կոչվում էին ասպետները, հետագայում՝ շքանշան ունեցողները: Այստեղ նշանակում ե — պարզե-տեղիված յերկու բարձրագույն շքանշաններով՝ «Անդրեյ Պերմոգլաննու» և «Ալ. Նեկու»:

Հայրս չէր սիրում վոչ վոխել իր մտադրությունները, վոչ ել հետաձգել նրանց կատարումը: Իմ մեկնելու ուրն արդեն նը-չանակված էր: Նախորդակին հայրս հայտնեց, վոր մտադիր ե ինձ հետ նամակ ուղարկել իմ ապագա պետին և դրիչ ու թուղթ պահանջեց:

«Չմոռանա, Անդրեյ Պետրովիչ, — ասաց մայրս, — իմ կողմից ել վողջունել իշխան Բ.—ին. դրի, թե յես հուսով եմ, վոր նա Պետրուշային չի թողնի առանց իր շնորհների»:

— Ա՛յ թեղ հիմար բան, — պատասխանեց հայրս հոնքերը կիտելով: — Ինչո՞ւ համար յես պետք ե իշխան Բ.—ին նա-մակ դրեմ:

«Բայց դու ասացիր, վոր կամենում ես դրել Պետրուշայի պետին»:

— Ե՛, հետո ի՞նչ:

«Բայց չե՞ վոր Պետրուշայի պետն իշխան Բ.—ն ե: Չե՞ վոր Պետրուշան գրված ե Սեմյոնովսկի գնդում»¹:

— Գրվա՛ծ ե: Իմ ի՞նչ գործն ե, թե գրված ե: Պետրուշան Պետերբուրգ չի գնա: Ի՞նչ պիտի նա սովորի Պետերբուրգում ծառայելով: Դրամ վատնել և անպիտանություններ անել: Վո՛չ, թող նա բանակում ծառայի, թող նեղություններ քաշի, թող վատդի հոտն առնի, թող ղինվոր դառնա և վոչ թե չամա-տոն²: Գրվա՛ծ ե գվարդիայում... Վո՞րտեղ ե նրա պաշտոնը: Տո՛ւր ինձ:

Մայրս գտավ իմ պասպորտը, վոր պահվում էր նրա փոք-րիկ արկղիկի մեջ՝ իմ կնուքի չապիկի հետ և դողդոջուն ձեռ-քով ավեց հորս: Հայրս ուշադրություն կարդաց այն, դրեց իր առջև՝ սեղանի վրա և սկսեց իր նամակը:

Հետաքրքրությունն ինձ տանջում էր: Ապա ո՞ւր ես ուղար-

1 Պուշկինի նկարագրած ժամանակաշրջանում ազնվականների վորդիներին դեռևս մանուկ հասակից դրում էյին ռազմական ծառայության մեջ — վորպես հասարակ ղինվորներ: Այս յեղանակով նրանք ձևակառու են պահպանում եյին 1762 թվի կայսերական հրովարտակի կանոնները, վորոնց համաձայն սպայա-կան աստիճան ստանալու համար պետք էր 12 տարի շարքային ղինվոր լինել: Փաստորեն, ազնվականների վորդիները վոչ մի ռազմական ծառայության մեջ չլինելով հանդերձ, տանը նստած նորանոր բարձր աստիճաններ էյին ստանում և չափահաս տարիքում արդեն համարվում էյին սպա:

2 Անդործ մարդ, դատարկաբորտ, թեթևսովի:

կելու ինձ, յեթե վոչ Պետերբուրգ: Աչքս չեյի հեռացնում հորս գրչից, վոր շարժվում եր բավական դանդաղ: Վերջապես նա ավարտեց նամակը, պատպորտի հետ կնքեց մի ծրարում, ակնոցները հանեց և ինձ իր մոտ կանչելով, ասաց. «Ահա քեզ Անդրեյ Կարլովիչ Ռ.—ին՝ իմ վաղեմի ընկերոջն ու բարեկամին հանձնելու նամակը: Դու գնում ես Ուրենբուրգ՝ նրա հրամանատարութեան տակ ծառայելու»:

Յեւ վայրեն, իմ բոլոր փայլուն հույսերը խորտակվեցին: Պետերբուրգի ուրախ կյանքի փոխարեն ինձ սպասում եր ճանձրույթը հեռավոր ու խուլ մի վայրում: Զինվորական ծառայութեանը, վորի մասին մի բոպե առաջ մտածում եյի այնպիսի հիացմունքով, ինձ թվաց վորպես մի ծանր դժբախտութեան: Բայց հակաճառեմն անմտութեան եր: Մյուս ուր առավոտ ասան մուտքի պատշգամբիկին¹ մոտեցաւ ճամբորդական կիբիտկան², մեջը դրին մի չեմոդան, մի արկղ՝ թեյի պարագաներով և կապոցներ՝ մեջը բլիթներ ու կարկանդակներ — տնային փայփայանքի վերջին նշանները: Ծնողներս որհնեցին ինձ: Հայրս ասաց. «Դնաս բարով, Պյոտր: Հավատարիմ ծառայի նրան, ում յերդամ կտաս. մեծերիդ լսիր, նրանց փաղաքանքների հետևից չընկնես, ծառայութեան մեջ մի քծնի, ծառայութեանից չխուսափես և հիշիր առածը՝ շորդ նորուց պահպանիր, իսկ պատիվդ՝ ջահլիլուց»: Մայրս արտասուքն աչքերին ինձ խրատում եր պահպանել առողջութեանս, իսկ Սավելիչին պատվիրեց հոգալ յերեխայի մասին: Նապաստակի մորթուց կարած մի մուշտակ հագցրին ինձ, իսկ վրայից՝ աղվեսենու քուրք: Սավելիչի հետ նստեցի կիբիտկայի մեջ և ճանապարհ ընկա, հորդ արցունքներ թափելով:

Նույն գիշերն ևեթ հասա Սիմբիրսկ, ուր պիտի մնայի մի քանի օր՝ անհրաժեշտ իրեր գնելու համար, վոր հանձնարարված եր Սավելիչին: Իջևանեցի պանդոկում: Սավելիչն առավոտից դրնաց խանութները: Ձանձրանալով պատուհանից նայել ցեխոտ փողոցին, յես գնացի թափառելու պանդոկի բոլոր սենյակներում: Բելյարդանոց մտնելուս պես տեսա բարձրահասակ մի բարին³, յերեսունհինգ տարեկան, յերկար, սև բեխերով, խա-

¹ Տան մուտքի պատշգամբիկ — այսպես ենք թարգմանում ամեն տեղ առասկաի կրիլցո:

² Վերեից քաթանով կամ թաղիքով ծածկված սայլակ:

³ Տեր, պարոն, աղա:

լաթը հագնին, կիյը¹ ձեռքին և ծխամորճը ատամներով բռնած: Նա խաղում եր մարկյորի² հետ, վորը խաղը տանելու դեպքում մի դավաթ ողի յեր խմում, իսկ տարվելու դեպքում պետք է չորեքթաթ մտներ բելյարդի տակը: Սկսեցի դիտել նրանց խաղը: Վորքան յերկար եր տևում այն, այնքան չորեքթաթ արվող գրոսանքները հաճախակի եյին դառնում, մինչև վոր վերջապես մարկյորը պառկած մնաց բելյարդի տակ: Բարինը մի քանի թունդ խոսքեր ասաց նրա հասցեյին՝ վորպես դամբանական և ինձ առաջարկեց հետը մի պարտիա բելյարդ խաղալ: Յես հրաժարվեցի՝ խաղալ չիմանալու պատճառով: Ըստ յերեկոյթին այդ նրան պարտիանակ թվաց: Ասես ցավակցութեամբ նա ինձ նայեց, սակայն՝ խոսակցութեան բռնվեցինք: Պարզվեց, վոր նրան կոչում են Իվան Իվանովիչ Զուբին, վոր նա ** հուսարական³ գնդի ռոտմիստրն⁴ է և Սիմբիրսկի և յեկել ռեկրուտներ⁵ ընդունելու գործով, իսկ իջևանել է պանդոկում: Զուբինն ինձ հրավիրեց իր հետ ճաշել — աստված ինչ վոր տվել է, գինվորական: Յես հաճույքով համաձայնեցի: Սեղան նստեցինք: Զուբինը շատ եր խմում և ինձ ել հյուրասիրում եր, ասելով, վոր պետք է սովորել գինվորական ծառայութեանը: Նա ինձ պատմում եր բանակային այնպիսի անեկդոտներ, վոր ծիծաղից թուլացած, քիչ եր մնում թե վայր ընկնեմ, և մենք սեղանից վեր կացանք վորպես կատարյալ բարեկամներ: Այն ժամանակ նա առաջարկեց ինձ բելյարդ խաղալ սովորեցնել: «Դա, — ասում եր նա, — անհրաժեշտ է մեզ պես ծառայող մարդկանց համար: Արջավանքի ժամանակ, ասենք թե, հասար մի վորեւ հետ ընկած տեղ. ասա խեղրեմ, ինչո՞ւ պիտի դադարես: Հո միշտ ջհուղներին չսլախի՞ ծեծես: Ակամայից կգնաս պանդոկ և կսկսես բելյարդ խաղալ, իսկ դրա համար պետք է խաղալ իմանալ»: Յես միանգամայն համոզվեցի և մեծ յեռանդով սկսեցի սովորել: Զուբինը բարձր ձայնով խրատում եր ինձ, դարձանում եր իմ արագ առաջադիմութեանները վրա, և մի քանի դասերից

¹ Կիյ — բելյարդի յերկարավուն ձողը:

² Մարկյոր — բելյարդին ողատարիող, խաղի ժամանակ հաշիվը պահող:

³ Հուսարներ — թեթև հեծելազորի մի տեսակը:

⁴ Ռոտմիստր — հեծելապալ:

⁵ Ռեկրուտներ — նորակոչիկներ:

հետո առաջարկեց փողով խաղալ, մի-մի գրոշ դնելով, վոչ թե տանելու համար, այլ հենց ախարես, միայն, վարպետի դատարկ տեղը չխաղանք, վոր նրա ասելով, ամենավատ սովորությունն է: Յես դրան ել համաձայնեցի, իսկ Զուրինը հրամայեց պունչ տալ մեզ և համոզում եր ինձ վորձեւ այն, կրկինեւ, վոր պետք է վարժվել գինւորական ծառայությանը, իսկ առանց պունչի ծառայելն ի՞նչ բան է վոր: Յես լսեցի նրան: Ողորդ չարունակվում եր: Ինչքան հաճախ եյի խոսում իմ բաժակից, այնքան ավելի համարձակ եյի դառնում: Բիւրարդի գնդերն ամեն բոլե դուրս եյին թռչում սեղանի յեզերից, յես տաքացել եյի, հայհոյում եյի մարկյորին, վորը, աստված գիտե, թե ինչպես եր հաշվում, ժամ առ ժամ ավելացնում եյի խաղաղումարը, — մի խոսքով ինձ պահում եյի վորսես կապը կտրած մի տղա: Ժամանակն անցավ աննկատելի: Մեկ ել Զուրինը ժամացույցին նայեց, կիյը ցած դրեց և հայանեց ինձ, վոր տարվել եմ հարյուր ուրբի: Դա մի փոքր շփոթեցրեց ինձ: Իմ բոլոր դրամը Սալեիլի մոտ եր: Սկսեցի ներողություն խնդրել: Զուրինն ընդհատեց ինձ: «Ի սե՛ր աստծո, բնավ մի անհանգստանա: Յես կարող եմ սպասել, իսկ առայժմ՝ գնանք Արինուշկայի մոտ»:

Ի՞նչ կհրամայեք: Այդ ոքը յես վերջացրի նույնքան թեթեւամիտ, վորքան և սկսել եյի: Մենք ընթրեցինք Արինուշկայի մոտ: Զուրինն ամեն բոլե լցնում եր իմ դավաթը, կրկինեւ, վոր պետք է վարժվել գինւորական ծառայությանը: Սեղանից վեր կենալով յես հազիվ եյի կանգնում վորքի վրա. կես դիւրին Զուրինը կառքով ինձ տարավ պանդոկ:

Սալեիլիք մեզ գլխավորեց տան մուտքի մոտ: Տեսնելով դեպի ծառայությունն ունեցած իմ ջանասիրության աներկբա նշանները, նա ախ քաշեց: «Ես ի՞նչ որի յես, տեր իմ, — ասաց նա խղճալի ձայնով: — Եդ վո՞րտեղ ես եղպես տղիվել: Ա՛խ, աստված իմ, յերբեք ես տեսակ բան չեր յեղել»: Զայնդ կտրի՛, քալթառ, — հագիվ կապելով բառերը պատասխանեցի նրան. — յերեւի դու հարբած ես, վորիդ գնա քնելու... ինձ եր պառկեցրու:

Մյուս ոքը յես դարձեցի գլխացավով. աղոտ հիշում եյի յերեկվա դեպքերը: Իմ խորհրդածություններն ընդհատեց Սալեիլիք, վորը մի բաժակ թեյ ձեռքին մտավ սենյակս: «Շո՛ւս

ես միտամ, Պյոտր Անդրեյիչ, — ասաց նա գլուխը ճոճելով, — չուս ես սկսում քեֆ անել: Ախր դու ո՞ւմ ես քաշել: Կարծեմ թե վոչ հայրդ, վոչ ել պապդ խմողներ չեն յեղել. մորդ մասին խոսելն անգամ ավելորդ է. նրանք իրենց որում բացի կլասից ուրիշ իմիչք չեն բարեհաճել բերաններն առնել: Իսկ ո՞վ է ես բոլորի մեղավորը: Անիծյա՛լ մուսյեն: Պատահում եր, վոր, մեկ ել տեսար վաղեց Անտիպեյնայի մոտ. «Մաղամ, ժե վու պրի, արաղյու»¹: Այ քեզ ժե վու պրի: Ի՞նչ եմ ասել, չընորձ եր սովորեցնում եդ շան վորդին: Ասա ինչներե՞ս եր պետք բառերմանին² վերակացու վարձել, կասես մեր բարինը իր մարդիկը չունենք»:

Յես ամաչեցի: Յերեսս չուս տվի և ասացի. «Դուրս գնա, Սալեիլիչ, յես թեյ չեմ ուզում»: Բայց դժվար եր Սալեիլիչին բռնել, յերբ նա, պատահում եր, վոր սկսում եր իր քարոզը. «Ա՛յ, տեսնում ես, Պյոտր Անդրեյիչ, ի՞նչ ասել է կոնծել: Համ գլուխդ է ծանրացել, համ ել ուտել չես ուզում: Խմող մարդն ի՞նչացու յե... Արի դու վարունդի թիվաջուր խմիր մեղրով, իսկ ամենից բախ ե, խումարահան լինելու համար մի կես բաժակ թրմողի... Չե՞ս հրամայի բերեմ»:

Այդ ժամանակ մի տղա ներս մտավ և ինձ տվեց Ի. Ի. Զուրինի տոմսը: Թուղթը բացի և կարդացի հետևյալ տողերը.

«Սիրելի Պյոտր Անդրեյիչ, խնդրում եմ իմ տղայի հետ ուղարկես հարյուր ուրբին, վոր դու յերեկ ինձ տանուլ տվիր. Դրամի սատիկ կարիք ունեմ»:

Պատրաստ ծառայելու՝ Իվան Զուրին»:

Ճար չկար: Անվրդով տեսք տալով դեմքիս և դառնալով Սալեիլիչին, վորը և՛ դրամի, և՛ փախակեղեմի, և՛ գործերի իմ խնամակալն եր, հրամայեցի հարյուր ուրբի տալ այդ տղային: «Ի՞նչ քես, ինչո՞ւ համար», — հարցրեց աղջած Սալեիլիչը: — Պարտք եմ նրան, — պատասխանեցի յես վորքան կարելի յե ստան: «Պա՛րտք եմ, — առարկեց Սալեիլիչը, վոր քանի գնում այնքան ավելի յեր աղչում. — բայց տեր իմ, ախր եդ յե՛րբ դու կարողացար նրան պարտք մնալ: Չե՛, եդ-

¹ Տիկին, խնդրում եմ, արաղ:

² Բասուրման — ալալըն՝ վոչ ուղղափառ:

տեղ մի ինչ-վոր ոյին կա: Կամքը քոնն է, տեր, համա՛ յես
փող ավողը չեմ»:

Յես մտածեցի, վոր յեթե այդ վճռախոս րոպեին չկտարեմ
համառ ծերունուն, ապա հետագայում այլեւս դժվար կլինի ինձ
դուրս գալ նրա խնամակալութունից, ուստի և հարատ տայե-
լով նրան, ասացի. «Յես քո տերն եմ, խի՛ դու՛ իմ ծառան:
Դրամը իմն է: Յես տանուլ եմ ավել այդ դումարը, վորովհե-
տե քեֆս աղալես ե ուզել, խի՛ քեզ խորհուրդ եմ տալիս խել-
քիդ դու չտաս և անես այն, ինչ հրամայում են քեզ»:

Սալեղին այնպես եր աղչել իմ խոսքերից, վոր ձեռքերն
երար դարկեց և քարացավ: «Դե՛հ, ի՞նչ ես կանգնել», — յես
զուսացի բարկացած: Սալեղին լացեց: «Տեր իմ, Պյոտր Անդ-
րեյիչ, — արտասանեց նա դողդոջուն ձայնով, — ինձ մի՛
մեղցնի վշտից: Աչքիս լույսը, լսիւր ինձ՝ ծերունիս. գրիւր եղ
աղաղակին, վոր դու կատակ ես արել, վոր մենք եղ տեսակ
գումարներ խիլի՛ չունենք: Հարյուր ոտքի՛: Վողորմա՛ծ աս-
տված: Ասա՛, վոր ծնողներս շատ խիստ պատվիրել են ինձ՝
միայն ընկույզով խաղալ»... — Հե՛րիք ե տեր ասես, — ընդ-
հատեցի յես խստութեամբ. — դեսը տուր փողը, թե չե վա-
կութիւ տալով կվոնդեմ:

Սալեղին ինձ նայեց խորին վշտով և գնաց պարտքս բե-
րելու: Յես մեղքացա խեղճ ծերունուն, սակայն ուզում եյի ա-
զատվել և ապացուցել, վոր յես այլևս յերեխա չեմ: Դրամն
ուղարկվեց Զուրինին: Սալեղին շտապեց ինձ դուրս բերել ա-
նիծյալ պանդուկից: Նա յեկավ հայտնելու, թե ձիերը պատ-
րաստ են: Անհանգիստ խղճով և լուռ զղջումով յես դուրս յեկա
Սիմբիրսկից, առանց հրաժեշտ տալու իմ ուսուցչին և չմտածե-
լով, այլևս յերբեւ տեսնել նրան:

ԱՌԱՋՆՈՐԴԸ

Յերկի՛ր իմ, յերկիրս,

Յերկիր անծանոթ.

Յես չե՞մ, վոր յեկել եմ քո հողը ահա,

Ձիս չե՞, վոր բերել ե ինձ՝ ջահելիս,

Ճարպիկութունը ջահել կտրիճի,

Արիւթյունը, մեկ ել դիմետան

Գինարուքն ե բերել ջահելիս:

Հնամենի յերգ

Ճանապարհի խորհրդածութիւններս այնքան ել հաճելի չե-
լին: Իմ տանուլ տված գումարն այն ժամանակվա գներով քիչ
բան չեր: Հողուս խորքում յես չեյի կարող չխոստովանել, վոր
Սիմբիրսկի պանդուկում իմ արածը հիմարութիւն եր և ինձ
մեղավոր եյի դդում Սալեղիչի առաջ: Այդ բոլորն ինձ տանջում
եր: Ծերունին մոռայ նստած եր կիբիտկայի առջևի մասուկ՝
յերեսը ինձնից շուտ տված և լուծ եր, յերբեմն միայն հառա-
չելով: Յես անպատճառ ուզում եյի հաշտվել նրա հետ և չգի-
տելի ինչից սկսեմ: Վերջապես ասացի նրան. «Դե՛, դե՛, Սա-
վելիչ, հերիք ե, հաշտվենք, ներողութուն. ինքս եմ տես-
նում, վոր մեղավոր եմ: Յերեկ յես դժութիւն արի և քեզ ել
իզուր տեղը վիրավորեցի: Խոստանում եմ սրանից հետո խե-
յոք պահել ինձ և լսել քեզ: Դե՛, մի բարկանա, հաշտվենք»:

— Ե՛, տեր իմ, Պյոտր Անդրեյիչ, — պատասխանեց նա
խոր հոգոց հանելով: — Բարկանալը վոր ասում ես, ինքս ինձ
վրա յեմ բարկանում. բոլոր մեղքն իմն է: Ասա թե յես ի՞նչ
պես քեզ մենակ թողի պանդուկում: Ինչ պիտի անես, մեղքի
մեջ ընկա. խելքիս փչեց, ասի՝ գնամ տիրացուլի կնոջը՝ սա-
նամորս տեսնեմ: Եղպես ե, ելի, սանամորս մոտ մտա, ջուխտ
վտռելով բանտ ընկա: Փորձանք եր, ուրիշ վոչ մի բան. ել ի՞նչ
յերեսով յերևում իմ տերերի աչքին: Ի՞նչ կասեն նրանք, յերբ
իմանան, վոր յերեխան խմում ե և գումար խաղում:

Խեղճ Սալեղիչին մխիթարելու համար յես նրան խոսք տվի
առաջիկայում առանց նրա համաձայնութեան վոչ մի կոպեկի
ձեռք չտալ: Գիչ-քիչ նա հանդարտվեց, թեև ելի նորից մեկ-

մեկ ինքն իրեն մինթինթում եր գլուխը ճոճելով. «Հարյուր տուրքի՛, հե՛շտ բան ե»:

Յես մոտենում էյի իմ նշանակման վայրին: Շուրջ տարածվում էյին տխուր տափաստանները, տեղ-տեղ բլուրներով ու ձորերով կտրատված: Ամեն ինչ ձյունով եր ծածկված: Արև-վը մայր եր մտնում: Կիրիտկան ընթանում եր մի նեղ ճանապարհով, կամ ավելի ճիշտ՝ դեղջկական սահնակների թողած հետքով: Հանկարծ կառապանս սկսեց մի կողմ նայել. նայեց, նայեց և վերջապես գլխարկը հանելով դարձավ ինձ ու ասաց. «Բա՛րին, արդյոք չե՞ք հրամայի վերադառնալ»:

— Ինչո՞ւ վոր:

«Ժամանակը ձախ ե. քամին սկսում ե կամաց-կամաց ուժեղանալ. տեսնո՞ւմ ես, թե ինչպես ե արբում ձյունափոշին»:

— Ե՛, մեզ ինչ մնաս:

«Բա չե՞ս տեսնում, թե ինչ ե ենտեղ» (կառապանը մտրակը դեպի արևելք ուղղեց):

— Բացի ճերմակ տափաստանից և պարզ յերկնքից ուրիշ մոշինչ չեմ տեսնում:

«Ա՛յ, հրեն — հրեն՝ են փոքրիկ ամպը»:

Իսկապես, յերկնքի յեզրին մի փոքրիկ, սպիտակ ամպ տեսա, վորը սկզբում ինձ թվաց վորսես հեռավոր մի բլրակ: Կառապանը բացատրեց, վոր այդ ամպը բուք ե նախադուշակում:

Յես լսել էյի այդ կողմերի ձյունախառն բուք-բորանների մասին և դիտեյի, վոր դեպքեր են յեղել, յերբ ամբողջ սայր-խմբեր թաղվել են ձյան տակ: Սավելիչը, համաձայնելով կառապանի կարծիքին, խորհուրդ տվեց վերադառնալ: Սակայն քամին ինձ այնքան ել ուժեղ չերեաց. յես հույս ունեյի ժամ առաջ հասնել հետևյալ կայարան և հրամայեցի ավելի արագ քշել:

Կառապանը քշեց, բայց միշտ դեպի արևելք եր նայում: Ձիերը վազում էյին համընթաց: Այնինչ, քամին ժամ առ ժամ սաստկանում եր: Փոքրիկ ամպիկը դարձավ մի ահագին սպիտակ ամպ, վոր դանդաղ բարձրանալով մեծացավ և աստիճանաբար բռնեց յերկնքի յերեսը: Մանր ձյուն յեկավ և հանկարծ՝ թափվեց առատ-առատ փաթիլներով: Քամին վոռաց, բռն սկսվեց: Մի ակնթարթում մութ յերկնքը խառնվեց ձյան ծովի հետ: Ամեն ինչ կորավ: «Դե՛, բարին, — դուայ

կառապանը, — բաններս բուրդ ե, բուք-բորանս սկսվեց»...

Յես դուրս նայեցի կիրիտկայից — խախար եր և մրրիկ: Քամին վոռնում եր այնպիսի կատաղի արտահայտությամբ, վոր ասես շնչավոր եյակ լինեք. ձյունը ծածկում եր ինձ ու Սավելիչին. ձիերը համաքայլ առաջ էյին գնում և շուտով կանգ առան: «Ինչո՞ւ չես գնում», — անհամբեր հարցրի յես կառապանին: — Վո՞նց գնամ, — պատասխանեց նա նստատեղից իջնելով. — առանց են ել հայտնի չե, թե ես ուր յեկանք. ճանապարհ չկա և չորս կողմը մութ մշուշ ե: — Սկսեցի նախատել նրան: Սավելիչը նրա կողմը բռնեց: «Ասա ի՞նչ յսելք եր՝ չլսեյիր նրան, — խոսում եր նա բարկացած. — Կը վերադառնայիր իջևանատուն, թեյ կխմեյիր, առք-փառք կը քնեյիր մինչև լույս, բուքը կխաղաղվեր՝ կչարունակեյինք ճանապարհը: Յեմ ո՞ւր ենք շտապում, են ելի մի բան եր, թե հարսանիք գնայինք»: — Սավելիչն իրափայցի յեր: Ճար չկար: Ձյունը դալիս եր, հա՛ դալիս: Կիրիտկայի մոտ արդեն ձյան ահագին կույտ եր դոյացել: Ձիերը կանգնել էյին գլուխները խոնարհած և յերբեմն ցնցվում էյին: Կառապանը պտտվում եր շուրջը, պարտադրությունից լծաարքը կարգի բերելով: Սավելիչը մինթինթում եր. յես նայում էյի ամեն կողմ՝ հուսալով բնակատեղի կամ ճանապարհի գոնե մի նշան տեսնել, սակայն՝ բացի բուքի խոլական պտույտներից, միշինչ չկարողացա դա՛նադանել: Հանկարծ ինչ-վոր սե բան տեսա: «Ե՛յ, կառապան, — կանչեցի յես. — տես, ի՞նչ ե այնտեղ սևին տալիս»: Կառապանն սկսեց ուշի-ուշով դիտել: — «Աստված դիտի, բարին, — ասաց նա իր տեղը նստելով. — բեռ ասեմ՝ բեռ չե, ծառ ասեմ՝ ծառ չե. համա կասես չարժվում ե: Յերեւի — կամ գել ե, կամ՝ մարդ»:

Յես հրամայեցի քշել դեպի անձանոթ առարկան, վոր իսկույն եկեթ սկսեց դեպի մեզ շարժվել: Յերկու բորակից հետո մենք հախաարվեցինք մի մարդու հետ: «Հե՛յ, բարի մարդ, — ձայն տվեց նրան կառապանը: — Ասա՛, չգիտե՞ս ուր ե ճանապարհը»:

— Ճանապարհը հենց ետեղ ե. յես ամուր դետնի վրա յեմ կանգնած, — պատասխանեց ճամբորդը, — բայց ի՞նչ ոգուտ:

— Լսիր, չինական, — ասացի յես նրան. — դու այս կող-

մերին ծանոթ ես: Կհամաճայե՞ս արդյոք ինձ մինչև ոթեան հասցնելու:

— Ես տեղերն ինձ ծանոթ են, — պատասխանեց ճամբորդը. — փառք աստծո, ենքան ենք դեռ ու դեն դնացել վոր: Համա տեսնում ես, թե ի՞նչ յեղանակ ե. իսկույն կկորցնես ճանապարհը: Լսով ե ետեղ մնանք ու սպասենք: Կարելի չե թե բուքը հանդարտի և յերկինքը պարզվի. են ժամանակ ճանապարհը աստղերով կգտնենք:

Նրա ստոնարյունությունն ինձ ախր տվեց: Յես արդեն վորոշել եյի ինձ աստծու կամքին հանձնելով գիշերել բաց տափաստանում, յերբ հանկարծ ճամբորդն արագ շարժումով բարձրացավ, նստեց կիրիտկայի առջևի մասում և ասաց կառապանին. «Ե՛ փառք աստծու, բնակատեղը հեռու չի, ձիերի գլուխն աջ շուռ տուր տւ քչիւր»: — «Իսկ ինչի՞ աջ քչեմ», — հարցրեց կառապանը դժգոհությամբ: — Նդ վորտեղ ես տեսնում ճանապարհը: Թե, քեզանից ի՞նչ ե գնում՝ վոչ ձին ե քոնը, վոչ՝ ձիու սարքը. — քչի, հա՛ քչի»: — Ինձ թվաց, վոր կառապանն իրավացի չե. «Իսկապես, — ասացի յես. — ինչո՞ւ յես կարծում, վոր բնակատեղը հեռու չի»: — «Նրա համար, վոր քամին են կողմից փչեց, — պատասխանեց ճամբորդը, — և յես ծխի հոտ առա. ասեա ե թե գլուղը մոտիկ ե»: Նրա ուշիմությունն ու նուրբ հոտառությունն ինձ ապշեցրեց: Կառապանին հրամայեցի քչել: Խոր ձյան միջով ձիերը դժվարությամբ եյին քայլում: Կիրիտկան հանդարտ առաջ եր գնում մերթ բարձրանալով ձյունակույտերի վրա, մերթ՝ փոսերն ընկնելով և մեկ այս, մեկ այն կողմը շրջվելով: Դա նման եր արեկոծ ծովում նավի լողալուն: Սավելիչը ախ ու վախ եր քաշում, ամեն բոսի իմ կողերին բախվելով: Յես իջեցրի կիրիտկայի խտրը, փաթաթվեցի քուրքի մեջ և սկսեցի նիհնել՝ բուրանի յերգի և դանդաղ յերթի որոնով:

Մի յերազ տեսա, վոր հետո յես յերբեք չկարողացա մոռանալ և վորի մեջ մինչև հիմա ել ինչ-վոր մարդարեական բան եմ տեսնում, յերբ նրա հետ համեմատում եմ իմ կյանքի տարրերնալ հանգամանքները: Ընթերցողն ինձ կների, քանի վոր հավանորեն ինքն ել փորձով գիտե, վոր մարդ կարող ե անձնատուր լինել սնահավատության, չնայած դեպի նախապաշարումները տաճած ամեն տեսակի արհամարհանքը:

Յես գտնվում եյի զգացմունքների և հոգու այն վիճակում, յերբ իրականությունը տեղի տալով ցնորքներին, նրանց հետ ձուլվում ե անուրջների աղոտ տեսիլների մեջ: Ինձ թվում եր, վոր բուքը դեռ շարունակվում ե և մենք դեռևս խարխալում ենք ձյունոտ անապատում... Հանկարծ՝ մի դարպաս տեսա և կիրիտկայով մտա մեր կարճաժամիրական տան բակը: Սուղին միտքս այն յերկյուղն եր, վոր չլինի՞ թե հայրս բարկանա ինձ վրա՝ հայրենական հարկի տակ իմ ակամա վերադարձիս համար և չլինի՞ թե դա ընդունի վորտես դիտավորյալ անհնազանդություն: Անհնազանդությամբ դուրս ցատկեցի կիրիտկայից և տեսնեմ՝ տան մուտքի պատշգամբիկի մոտ ինձ դիմավորում ե մայրս խորին վշտի արտահայտությամբ: «Սո՛ւս կաց, — ասում ե նա ինձ, — հայրդ մահամերձ հիվանդ ե և ցանկանում ե հրաժեշտ տալ քեզ»: — Սարսափահար նրա հետեից քայլում եմ դեպի ննջարան: Տեսնեմ՝ սենյակը աղոտ լուսավորված ե, անկողնի մոտ մարդիկ են կանգնած տխուր դեմքերով: Կամացուկ մոտենում եմ անկողնուն. մայրս վորք ինչ բարձրացնում ե ծածկոցը և ասում.

«Անդրե՛յ Պետրովիչ, Պետրուշան յեկավ. լսելով վոր դու հիվանդ ես, նա վերադարձել ե. որհնի՛ր նրան»: Յես ծունկ չոքեցի և աչքերս սևեռեցի դեպի հիվանդը: Յե՛վ ի՞նչ... Հորս փոխարեն, տեսնեմ՝ անկողնում պտկած ե մի սեւամորուք մուժիկ՝ և ուրախ-ուրախ ինձ ե նայում: Տարակուսանքի մեջ դառնում եմ մորս, ասելով նրան. — «Այս ի՞նչ ե նշանակում: Սա հայրիկս չե: Յե՛վ ինչո՞ւ պետք ե յես մուժիկի որհնությունը խնդրեմ»: — «Միևնույն ե, Պետրուշա, — պատասխանում ե մայրս, — նա քո հարսանահայրն ե, համբուրի նրա ձեռքը և նա թող որհնի քեզ»... Յես չեյի համաճայնում: Այն ժամանակ մուժիկը վեր թռավ անկողնից, գոտիկից դուրս քաշեց կացինը և սկսեց ողի մեջ այս ու այն կողմը թափահարել: Ուզում եյի փախչել... և՛ չկարողացա, սենյակը լցվեց մեռած մարմիններով. դրանց դիպչելիս յես սաթթաբուժում եյի և վրտքս սահում եր արյան լճակների մեջ... Սարսափելի մուժիկը սիրալիկ ինձ իր մոտ եր կանչում, ասելով. «Մի՛ վախի, արի որհնեմ քեզ»... Սոսկումն ու տարակուսանքը պատեցին ինձ... Յե՛վ այդ բոսեյին դարձնեցի. ձիերը կանգնել

1 Мужик — գեղջուկ, շինական:

եյին. Սալեկիչը բռնել եր ձեռքս, ասելով. «Դուրս արի, տե՛ր իմ. տեղ հասանք»:

— «Ո՛ւր հասանք», — հարցրի յես աչքերս տրորելով. — «Ի՛նչ ևս անատուն. աստված ոգնեց մեզ, յեկանք, հե՛նց ցանկապատին դեմ առանք: Դուրս արի, տեր իմ, չո՛ւստ, և տաքացիր»:

Յես դուրս յեկա կիբխտկայից: Բուքը դեռ շարունակվում եր, թեև՝ ալեկի նվազ ուշժող: Այնպես մոռթն եր, վոր աչք աչքի չեր տեսնի: Իջևանատները մեզ դիմալորեց դարարատի մոտ, լապտերը փեշի տակ բռնած և ինձ առաջնորդեց վերնատուն, ուր նեղվածք եր, սալալն՝ բալական մաքուր. մարխի մի ձողիկ լուսավորում եր այն: Պատից կախված եր մի հրացան և՛ կաղակի բարձրադիր դլխարկը:

Իջևանատները՝ ծագումով Յաիցիկի կաղակ¹, վաթսուն տարեկան մի մուշիկ եր, դեռևս թարմ ու առույգ: Ինձնից հետո ներս մտավ Սալեկիչը, իր հետ բերելով մեզ փոքր արկղը. նա կրակ պահանջեց, վորպեսզի թեյ պատրաստի, վոր յերբեք այնքան հարկավոր չթվաց ինձ, վորքան այդ պահին: Իջևանատները դնաց պատրաստութիւն տեսնելու:

— Իսկ ո՛ւր մնաց մեր առաջնորդը, — հարցրի յես Սալեկիչին:

«Եստեղ եմ, ձերդ բարեծնողութիւն», — լսեց նրա ձայնը վերևից:

Յես նայեցի վերևի թախտին ու տեսա մի սև մորուք և մի զույգ փայլուն աչքեր: — «Հը, ի՞նչ ե, մրսեցի՞ր»: — «Մարդ ի՞նչպես չմրսի ես մի մաշված արմյակի² մեջ: Դուք ունեյի, համա մեղքս ինչ թաղցնեմ, — յերեկ իրիկուն ողբվածառի մոտ գրավ դրի՝ ասի ցուրտը ննքան ել խիստ չի»: Այդ րոպեյին ներս մտավ իջևանատները յեռացող ինքնայեռը ձեռքին: Մի բաժակ թեյ առաջարկեցի մեր առաջնորդին. մուշիկը ցած իջավ թախտից: Նրա արտաքինն ուշադրալ յերևաց ինձ: Կլինեք քառասուն տարեկան, միջահասակ եր, նիհարալուն և լայնաթիկուն: Նրա սև մորուքի մեջ տեղ-տեղ սպիտակ մադեր եյին յերևում: Մեծ և

1 Յաիցիկի կաղակները — Յաիկ դեռի ավերին թալոդ կաղակներն եյին, վորոնք իրենց հատուկ զորական կազմակերպութիւնն ունեյին, այսպես կոչված Յաիկյան զորքը: Պուզաշովի աղստամբութիւնից հետո Յաիկը վերանվանվեց Ուրալ դեռի:

2 Լայն փեշերով դեղջիկան շաբ վերնապնատ:

թիւ աչքերն անընդհատ շարժման մեջ եյին: Դեմքը բալական հաճելի, սակայն խորամանկ արտահայտութիւն ունեւ: Մազերը խուլված եյին բոլորակ. հազին մի պատառտոված արմյակ ունեւ և թաթարական շարվար: Մի բաժակ թեյ տվի նրան: Նա համա առավ և դեմքը կնճռուեց: «Ձե՛րդ բարեծնողութիւն, չնորհ արեք՝ հրամայեք՝ մի բաժակ արաղ տան ինձ. թեյը կաղակների սիրած խմիչքը չե»: Յես հաճույքով կատարեցի նրա ցանկութիւնը: Իջևանատները փոքրիկ պահարանից հանեց շոտֆը և բաժակը, մոտեցավ նրան և յերեքին նայելով. «Եհե՛, — ասաց նա, — ելի՛ր դու յերեքի մեկը կողմերում: Վո՛րտեղից եղպես, աստուծով»: — Առաջնորդը խորհրդավոր կերպով աչքով արեց նրան և ասացվածքով պատասխանեց. «Բանջարանոցում թռչում, կանսի եյի կտցում, տատիկը քար նետեց, համա՝ չկապ: Ե՛, ձերոնք ի՞նչ հալի յեն»:

— Մերոնց ի՞նչն ես հարցնում, — պատասխանեց իջևանատները, շարունակելով ալաբանական խոսակցութիւնը: — Են ե, ուղում եյին իրիկնաժամի զանգերը տան, համա յերեքիկներ չի թողնում. տերտերը հյուր ե դնացել, աստանաները գերեզմանոցում են»: — «Սո՛ւս կաց, քեռի՛, — առարկեց իմ չըմոլիկը, — անձրև վոր գա, սունկ ել կլինի, իսկ վոր սունկ յեղավ՝ կլինի և կողովը: Իսկ հիմա՝ (այստեղ նա նորից աչքով արեց) կացինդ դուտիկը խրի — անտառապահ ման ե դալիս: Ձե՛րդ բարեծնողութիւն՝ ձեր կենացը»: — Այդ խոսքերն ասելով նա վերցրեց բաժակը, խաչակնքեց և մի շնչով խմեց: Հետո ինձ դուռն տվեց ու վերադարձավ իր տեղը:

Գողերի լեզվով արած այդ խոսակցութիւնից այն պահին յես վոչինչ չկարողացա հասկանալ, սակայն հետո արդեն դլխի ընկա, վոր խոսքը Յաիցիկի զորքի գործերի մասին եր, վորը այդ ժամանակ նոր եր խաղաղացվել 1772 թվի բռնադից՝ հետո: Սալեկիչը մեծ անբավարկութեամբ եր լսում նրանց: Կատկածանքով նա մեկ իջևանատիրոջն եր նայում, մեկ՝ առաջնորդին: Իջևանատները, կամ ալտեղի լեզվով՝ ումնաք, ճանապարհից դուրս եր, տափաստանում, ամեն դուռից հեռու և շատ նման եր ա-

1 Խոսքը չբավոր կաղակների աղստամբութիւն մասին ե, վորի ժամանակ դեն. Տրաուրներդի դլխավորած կառավարչական զորամասը խաղա ընալնվեց աղստամբների ձեռքով: Շարժումը ճնշվեց ամենադաժան կերպով և կաղակների խլիցին նրանց բոլոր զորական արտոնութիւնները:

վաղակախութիւն: Սակայն ճարձեքս լինչ եր: Ճանապարհը շարունակեցիւ մասին մտածել անգամ չէր կարելի: Սասկելիչի անհանդուրժողութիւնն ինձ մեծ զվարճութիւն եր պատճառում: Մինչ այս, մինչ այն՝ յետ պատրաստվելի զիշերելու և պատկեցի յերկար նստարանի վրա: Սասկելիչը վորոչեց քաշվել վատարանի վրա, իջեանաւորը պատկեց հատակին: Շուտով ամբողջ խրճիթը խորժվաց և յետ մեռածի պէս քնեցի:

Սոսկիտոյան բախակաւ ուշ դարձնելով տեսա, վոր բոքանք հանդարտվել է: Արեւը վաղում եր: Անծայրածիր տախտատանի վրա ձյունը վաղում եր շացնող շղարշով: Զիբը լծել էյին: Յետ վճարեցի իջեանաւորոջը, վորը մեղնից ախպարի չափովոր վարձ վերցրեց, վոր մինչև իսկ Սասկելիչը չվիճեց նրա հետ և հակառակ իր սովորութիւնն չսկսեց քակարկել ու նրա յերեկվա կատկածներն իսպառ վարատելէն: Յետ մոտ կանչեցի առաջնորդին, շնորհակալութիւն հայտնեցի նրա ցույց տված ոգնութեան համար և Սասկելիչին հրամայեցի կես-մանթ տալ նրան՝ վորպէս արաղի փող: Սասկելիչը հոնքերը կլտեց: «Կես-մանթ արաղի համար, — ասաց նա, — եղ ի՞նչ խաբար է: Նրա համար, վոր դու բարեհաճեցիք նրան հետը մինչև իջեանաւորոյն հասցնել: Կամքը քոնն է, տեր իմ, համա մենք ավելորդ կես-մանթ Թանոցներ չունենք: Ամենքին վոր արաղի փող տանք, եղպես ինքներս չուտով սոյլած կմնանք»: Յետ չեյի կարող վիճել Սասկելիչի հետ: Համաձայն իմ խոստման, բոլոր դրամը լիովին դանդում եր նրա տնորինութեան տակ: Սակայն յետ դժգոհ եյի, վոր չեմ կարողանում յերախտահատույց լինել մի մարդու, վորը ինձ փրկեց յեթե վոր փորձանքից, համեմայն դեպք մի շատ անհաճո գրութիւնից: Լավ, — ասացի յետ ատմարյուն. — յեթե չես ուզում կես-մանթ տալ, ասա հանիր նրա համար իմ շորերից մի վորեւե բան: Նա շատ թեթեւ և հազնված: Տո՛ւր նրան իմ նապաստակի մուշտակը:

«Վորոքմա՞ծ տեր, Պոտըր Անդրեյիչ, — ասաց Սասկելիչը: — Նրա ինչի՞ն է պետք քո նապաստակի մուշտակը: Այդ շունը առաջին պատահած կարակումն արաղի կտա»:

— Երբո՛ւկ, եղ մեկն արդեն քո ցափը չի, — ասաց իմ չքմութիւնը, — կլամեմ թե չե: Նորին բարեճնողութիւնն ինձ նվեր և

տալիս իր հագի մուշտակը, նրա աղայական քեֆն եղպես և ուշտամ, իսկ քո ծառայական գործն ե՛ չվիճել և լսել նրան:

«Դու ասածուց չես վախենում, ավագա՛կ, — պատասխանեց նրան Սասկելիչը բարկացած ձայնով: — Տեսնո՞ւմ ես, վոր յերեկի ինքը բան չի կորում, իսկ դու ողտվելով նրա միամտութիւնից, ուրախ ես նրան պղծելու: Դու ինչի՞ն է պետք աղայական մուշտակը: Դու գոռով ել չես կարա վրա քաշի քո եղ աւելոյալ ուտելիք»:

— Խնդրում եմ ինքըդ գոռ չտա, — ասացի յետ իմ խնամարկուն. — իսկույն և եթ մուշտակը բեր եստեղ:

«Տե՛ր իմ աստված, — հառաչեց իմ Սասկելիչը: — Նապաստակի մուշտակը համարյա թե բոլորովին նոր է: Գլուխը քարը, Ե՛ւր եր, թե մի լավ մարդու եյինք տվել և վնչ թե ես հարեցող ավելորին»:

Այնուամենայնիւ նապաստակի մուշտակը հայտնվեց: Դեղջուկը տեղնուտեղն սկսեց իր վրա չափել այն: Յեւ իսկապես մուշտակը, վոր ինձ արդեն վորը եր դալիս, նրա համար մի քիչ նեղ եր: Սակայն, նա մի կերպ հնար գտավ և հազալ այն, կարեւոր արաքացնելով: Ինչ մնաց, թե Սասկելիչը լաց լինեք, լսելով թե թեյերն ինչպէս են ճաշթում: Երջմովիկը չափազանց դոհ եր իմ նվերից: Նա ինձ մինչև կիրիտկա ճանապարհ դրեց և խոնարհ գլուխ տալով ասաց. «Շնորհակալ եմ, ձերդ բարեճնողութիւն: Ձեր յախութեան համար աստված ձեզ հառուցի: Հալիտոյան չեմ մոռանա ձեր շնորհները»: — Նա գնաց իր ճամբով, իսկ յետ իմ ուղին շարունակեցի, ուշք չդարձնելով Սասկելիչի զայրույթի վրա և չուտով մոռացա թե՛ նախորդ ոքիւ բուքը, թե՛ իմ առաջնորդին և թե՛ նապաստակի մորթուց կարած մուշտակը:

Որենքուրդ հասնելով ուղղակի ներկայացա քեներային: Յետ տեսա բարձրահասակ մի տղամարդ, վորը սակայն ճերմութիւնից կորացած եր: Նրա յերկար մազերը բոլորովին ճերմակ էյին: Հին ու խոնացած համադրեստը հիշեցնում եր Աննա Իոանովնայի ժամանակի ռազմիկներին, իսկ նրա խոսակցական լեզվի մեջ վորոշակի նկատելի յեր գերմանական առողանութիւնը: Յետ նրան հանձնեցի հորս նամակը: Նրա անունը լսելով նա արաղ ինձ նայեց. «Ասֆա՛ց իմ, — ասաց նա: — Կասեա թե յերեկ եր, վոր

1 Խմբիչներն իսկույն ցարական Ռուսաստանում, «միկիտան»:

1 Ռուս թարգմ. ի, գրահալարել և 1730—1740 թ.:

Մենք եւ Պետրովիչը դեռ քո տարիքի մարդ եր, իսկ հիմա տես, թե ինչ մի կտրիչ տղա ունի: Ա՛խ, շամանակ, շամանակ»: — Նա բացեց նամակը և սկսեց կիսաձայն կարդալ, իր նկատողութիւններն անելով. «Վողորմած տեր Սնդրեյ Կարբովիչ, հուսով եմ, վոր ձեր գերազանցութիւնը...» սա ի՞նչ ցեղականութիւն է: Թո՛ւ, չի ել ամաչում: Իհարկեւ, դիպցիալինան առաջին բանն է, բայց մի՞թե այսպէս են գրում հին կամուսկին... «ձեր գերազանցութիւնը չի մոռացել»... հմ... և... յերբ... հանդուցյալ ֆելդմարշալ Մին...² արշավանքի... ինչպէս և... Կարովինկային... ևհէ՛, բրուդեր³. նա դեռ հիշում է մեր հին չարանիւր-բշուկները: «Հիմա գանձ դործին... Ձեզ մոտ իմ փոքր վորդուն»... հմ... «պսեխ վոզնու ցեռնոցներում»⁴... Ի՞նչ ասել է վոզնու ցեռնոցներ: Դա յերեւի ուսանական ասացվածք է... Ի՞նչ ասել է «պահել վոզնու ցեռնոցներում» — կրկնեց նա ինձ դառնալով:

— Դա նշանակում է, — պատասխանեցի յես նրան վորքան կարելի յե անմեղ դեմքով. — հետո սիրալիւր վարվել՝ վոչ այնքան խիստ, վորքան կարելի յե ազատ թողնել ինձ, — այդ է նշանակում պահել վոզնու ցեռնոցներում:

«Հ՛մ, հատկանում եմ... «և նրան ազատ չթողնել»... Հէ՛, յերեւում է՝ վոզնու ցեռնոցները ուրիշ բան են նշանակում: «Սրա հետ և... նրա պատկուտը»... Հապա ո՛ւր է պատկուտը: Ահա, սա յե... «սեղեկացնել Սեմյոնովսկի գնդին»... Լալ, լալ, ամեն ինչ կարվի... «Ինձ թույլ կտաս առանց աստիճանի դանադանութեան գրկել քեզ և... հին ընկերն ու բարեկամը» — աա՛, վերջապէս գլխի ընկալ... և այլն, և այլն... — «Ե, սիրելիս, — ասաց նա նամակը կարդալուց հետո և մի կողմ դնելով իմ պաս-

¹ Կամուսկ (գերմ.) — ընկեր:

² Մինիս, Բուրխարդ-Քրիստոֆոր (1683—1767) — սկեսական գործիչ և զորահրամանատար, վոր մեծ ազդեցութիւն ունի Սննա Իոաննովնայի որով: Մասնակցել է մի շարք պաշտակական հեղաշրջումների: 1741 թվին աքսորված է յերկ Պելիմ, վորտեղից նրան վերադարձրել է Պյոտր III-ը: Վերջինիս դահլիճեցութիւնից հետո ծառայել է Յեկատերինա II-ի արքունիքում:

³ Բրուդեր (գերմ.) — յեղբայր:

⁴ Պահպանված է քաղրի դարձվածքը՝ «держать в ежовых рукавицах», վոր նշանակում է — մեկի նկատմամբ խիստ հսկողութիւն ունենալ, մեկին թր բռնած պահել:

պոլտը, — ամեն ինչ կանենք. թալայի աստիճանով դու կտեղա-վորվես *** դունդը և վորպեսզի ժամանակ չկորցնես, ասա վաղն և եթ մեկնիր Բելոգորսկի բերդը, ուր դու կլինես կապիտան Մի-րոնովի՛ մի բարի և ազնիւ մարդու գործակալ: Սննեղ դու իսկական ծառայութեան մեջ կլինես, կվարժվես դիպցիալինային: Որենքուրդում դու գործ չունես անելու. թրե գալը վնաս է յե-րիտասարդ մարդուն: Իսկ այսոր, համեցեք ինձ մոտ ճաշելու»:

«Քանի դեռ քան ձախողվեց, — մտածում եյի յես. ա՛յ թե ուր բերեց ինձ այն, վոր յես համարյա թե մոռա արգանդում արդեն դվարդիայի սերժանտ եյի: Ո՛ւր հասցրեց դա ինձ: *** դունդը և Կիրգիզ-Կայսացիկ¹ տալիստտանների սահմանի վրա դանկող մի խուլ բե՛րդ...» Յես ճաշեցի Սնդրեյ Կարբովիչի մոտ յերեքով՝ նրա ծեր աղջկատանտի հետ: Գերմանական խիստ վնասյողութիւնն էր իշխում նրա սեղանի վրա և յես կարծում եմ, վոր ինձ բերդապահ գործի մեջ շտապ ուղարկելու պատճառը մասամբ և այն էր, վոր նա վախենում էր յերբեմնակի ալիւրդ հյուր տեսնել իր՝ մենակացի սեղանի շուրջը: Մյուս ուր յես հրա-ժեշտ տվի դենեւալին և մեկնեցի իմ նշանակման վայրը:

ԳԼՈՒԽ III

Բ Ե Ր Դ Ը

Մենք ամբողջում ենք ապրում,
Հաց ենք ուտում, ջուր խմում.
Հենց վոր դաժան թշնամին
Գա աչք գցի մեր հացին —
Հյուրին խնջույք կտրեմք՝
Կարտեզով թով կը լցնենք:
Ձինվորների յերգ

Հնախնդ մարդիկ եյին, հայր իմ:
«Նեղորոյ»²

Բելոգորսկի բերդը դանկում էր Որենքուրդից քառասուն վերատի վրա: Ճանապարհն ընկած էր Յաիկի դառնվայր ամրով:

¹ Կիրգիզ-Կայսացիկ տալիստտանները — այսպէս եյին կոչվում Ուրալ գե-տից արեւելք ընկած հարթութիւնները (այժմյան Կազախստանի սահմաննե-րում):

² Հրեանու ումբ, մեջը կլիք գնդակներով լցված, վորոնք նույնպէս կարտեզ են կոչվում:

³ «Նեղորոյ» — կատակերգութիւն XVIII դարի նշանավոր ուս դրող Դ. Ի. Յոնսկիի (1745—1792):

Գետը դեռևս չէր սառել և նրա կապարագույն ավիքները տխուր սեխն եյին տալիս սպիտակ ձյունով պատած միապաղաղ ափերին: Գետի աջն կողմը տարածվում էյին Կիրգիզյան տափաստանները: Յես խորացա մտքերիս մեջ, մեծ մասամբ՝ տխրալի: Կայաղորտային կյանքը քիչ գրավելու թյուն ուներ ինձ համար: Յես ջանում էյի պատկերացնել կապիտան Միրոնովին, իմ ապագա պետին և տեսնում էյի նրան վարպես խիստ, ցատկոտ մի ծերունի, վորը բացի իր ծառայությունից, ուրիշ բան չգիտե և պատրաստ է ամեն մի ջնջին առիթով ինձ կարանքի յենթարկել, կապելով լոկ հաց ու ջրի: Մինչ այս, մինչ այն՝ ակսեց միջին: Մենք բավական արագ եյինք ընթանում: «Բերդը հեռու է, — հարցրի յես իմ կառավարին»։ — «Մոտիկ է, — պատասխանեց նա: — Հրեն, արդեն յերևում է»։ — Յես նայեցի ամեն կողմ, ակնկալելով տեսնել ահարկուս բաստիոններ¹, աշտարակներն ու պարիսպը, բայց մոչինչ չտեսա, բացի մի փոքրիկ գյուղից, վոր շրջապատված էր ցանկապատով: Գյուղի մի ծայրին յերեք թե չորս խոտադեղեր կային, կիսով չափ ձյունով ծածկված, մյուս կողմը՝ մի ծովափած քամաղաց, ծովը կախված անշուք թեքերով: «Հապա բերդը ո՞ւր է», — հարցրի յես դարմանքով: — «Հրեն, ելի», — պատասխանեց կառավարը, ցույց տալով գյուղակը, և այդ խոսքերի հետ մենք բերդը մտանք: Բերդի դռները մոտ մի հին, թուջե թնդանոթ տեսա. փողոցները նեղ էյին և ծուռումուռ, խրճիթները ցած և մեծ մասամբ հարդով ծածկված: Յես հրամայեցի ղեկ գնալի բերդապետի տունը և մի բոսկայից հետո մեր կիրիտիսն կանգ առավ փայտե տնակի առաջ, վոր շինված էր բարձր տեղում, իր նման փայտաշեն յեկեղեցու մոտ:

Ինձ վոչ վոր չգիտալորեց: Յես գնացի դեպի սրահը (сени) և բաց արի նախասենյակի դուռը: Մի ծեր ինվալիդ, սեղանին նստած, կապույտ կտորից կարկատան էր ձգում իր կանաչ համադեպտի արմուշկին: Յես հրամայեցի նրան դեկուցել իմ մարտին: «Մտի՛ր, տեր իմ, — պատասխանեց ինվալիդը. — մերոնք տանն են»։ Յես մտա մի մաքուր սենյակ, կահավորված հին յեղանակով: Անկյունում ամանեղենի պահարանն էր. պատից կախած էր սպալական դիպլոմը՝ ասպակու տակ և շրջանակի մեջ: Նրա մոտ աչքի էյին ընկնում եթանաղին նկարներ, վոր պատկե-

¹ Բերդի, ամրոցի բուրգ:

րում էյին Կիստրինի և Ոչակովի առումը¹, լինչպես և հարսնացու ընտրելն ու կատվի թաղումը²: Պատահանի մոտ նստած էր մի պառավ կին՝ հազին քաթիպա, գլխին թաշկինակ կապած: Նա կծկում էր թեխի կծիկը, վոր ձեռքերին ողակած պահում էր սպալական համադեպտ հագած մի աչքը կույր ծերունին: «Ի՞նչ կկամենայիք, յեղբայրս»³, — հարցրեց պառավը շարունակելով իր գործը: Յես պատասխանեցի, վոր ծառայության եմ յեկել և ըստ իմ պարտավորության ներկայանում եմ իմ պարոն կապիտանին և այդ խոսքերի հետ այն է ուղում էյի դիմել միաջանի ծերուկին, կարծելով թե բերդապետը նա յե, սակայն տանտիրուհին ընդհատեց իմ անդիր արած ճառը: «Իման կուզմիչը տանը չե, — պատասխանեց նա. — Գյուր է գնացել հայր Գերասիմի մոտ. ասենք, միևնույն է, յեղբայրս, — յես նրա տիրուհին եմ: Խնդրեմ, բարով յեկար, հազար բարի: Նստի՛ր, յեղբայրս»։ Նա ձայն տվեց աղջկան և նրան հրամայեց կանչել ուրյադնիկին: Ծերունին իր միակ աչքով հետաքրքրությամբ դիտում էր ինձ: «Համարձակվում եմ հարցնել, — առանց նա, — դուք վո՞ր դնդամն եք հաճել ծառայել»։ Յես բավարարեցի նրա հետաքրքրությունը: «Համարձակվում եմ հարցնել, — շարունակեց նա, — իսկ ինչո՞ւ հաճեցիք գլխադիպյից դուրս գալ և մտնել բերդապահ դորքի մեջ»։ Յես պատասխանեցի, վոր, այդպես էր իմ պետի կամքը: «Յերեկ թե գլխադիպյի սպային անվայել արարմունքների համար», — շարունակեց անխոնջ հարց ու փորձ անողը: — «Հերի՛ք է դատարկ դուրս տաս, — անաց նրան կապիտանի կինը. — դու տեսնում ես, վոր յերիտասարդը ճանապարհին հոգնել է, նա գյուլս չունի քեզ հետ խոսելու... (ձեռքերդ ուղի՛ղ բռնիր...): Իսկ դու, յեղբայրս, — շարունակեց նա ինձ դառնալով, — մի տխրի, վոր քեզ նետել են մեր այս խուլ տեղերը: Դու վոչ առաջինն ես, վոչ՝

1. Կիստրին — Կյուստրին, իր ժամանակ հայանի բերդ էր Պրուխայում: Ոչակովը տանկակառ բերդ էր Սև ծովի ափերին. Ֆելդաբաշալ Մինիսը այն դրավել էր 1737 թ.:

2. «Մկները թաղում են կատվին» — քաղաքական բովանդակություն ունեցող ամենատարածված նկարներից մեկը. ուղղված էր Պյոտր I-ի գեմ:

3. «Յեղբայրս» բառով մենք մի շարք տեղերում թարգմանում ենք ռուսական «բառյուչկա» (братюшка) բառը, վորը թեև նշանակում է «հայր», բայց գործածվում է վորպես դիմում ամեն մի խոսակցի հետ և ունի մոտավորապես «յեղբայրս», «ախպեր» բառերի նշանակությունը:

վերջինը: Կհամբերես, կտիրես: Շվարերինը, Ալեքսեյ Իվանիչը ահա
հինգ տարի յե, վոր տեղավորված ե մեզ մոտ—մարդասպանու-
թյան համար: Աստված ե իմանում, թե ինչ մեղք ե նրա միտքը
պղտորել. արի տես, վոր նա քաղաքից դուրս ե դնում մի պորու-
չիկի հետ. հա՛, թրերն ել հետներն են վերցնում ու մեկ ել՝
սկսում են միմյանց ծակոտել, իսկ Ալեքսեյ Իվանիչը թրով սպա-
նում ե պորուչիկին, այն ել՝ յերկու վկաների ներկայութեամբ:
Ինչ պիտի անես, մարդ մեկ ել տեսնում ե, վոր մեղքի մեջ ե
ընկել»:

Այդ բոլորներն ներս մտալ ուրյաղնիկը՝ յերկտասարդ ու բա-
րեկազմ մի կազակ: «Մակսիմիչ, —ասաց նրան կապիտանի
կինը:—Պարոն սպային տար բնակարան հասկացրու, միայն թե՝
մաքուրը»։—«Լսում եմ, Վասիլիսա Յեդորովնա, —պատասխանեց
ուրյաղնիկը:—Արդյոք լսալ չի՞ լինի նորին բարեծնությունը
տեղավորել Իվան Պալեժանի մոտ»։—«Ստում ես, Մակսիմիչ, —
ասաց կապիտանի կինը. —Պալեժանի մոտ առանց այն ել նեղ-
վածք ե. դե նա իմ կնքահայրն ե և գիտե, վոր մենք իր պետերն
ենք: Պարոն սպային տար... Ի՞նչպես ե ձեր անուն—հայրանու-
նը, յեղբայրս»։—«Պյոտր Անդրեյիչ»։—«Պյոտր Անդրեյիչին տար
Սեմյոն Կուզովի մոտ: Սրբիկան իր ձին իմ բանջարանոցն եր թո-
ղել: Հը, Մակսիմիչ, ամեն ինչ բարեհաջող ե»:

— Ամեն ինչ, վրադ ասածո, խաղաղ ե, —պատասխանեց կա-
զակը. —միայն թե կապրալ՝ Պրոխորովը բաղնիքում կռվել ե Ուս-
տինյա Նեդուլինայի հետ մի սման տաք ջրի համար:

«Իվան Իգնատիչ, —ասաց կապիտանի կինը մի աչքով կռւյր
ծերուկին:—Քննիր Պրոխորովի և Ուստինյայի դործը՝ ո՛վ ե ար-
դար, ով՝ մեղավոր և յերկուսին ել պատժիր: Դե՛հ, Մակսիմիչ,
դնա, աստված քեզ հետ:—Պյոտր Անդրեյիչ, Մակսիմիչը ձեզ
կտանի ձեր բնակարանը»:

Յես հրաժեշտ տվի: Ուրյաղնիկն ինձ տարալ դետի բարձր
ափին կանգնած, բերդի հետ ծայրին գտնվող խրճիթը: Խըր-
ճիթի կեսը բռնել եր Սեմյոն Կուզովի ընտանիքը, մյուս կեսն
ինձ հատկացրին: Դա մի բախական մաքուր սենյակ եր, միջուր-
մով կիսած: Սալեյիչը սկսեց կարգի բերել մեք իրերը, յես սկսե-
ցի դուրս նայել նեղիկ պատուհանից: Իմ առջև ընկած եր տխուր

տախտատանը: Շեղակի կանգնած եյին մի քանի խրճիթներ, փո-
ղոցում մի քանի հայեր եյին ման դալիս: Մի պատալ կին տան
առաջ տաչտի մոտ կանգնած, կանչում եր խողերին, վորոնք նրան
պատասխանում եյին ուրախ խանչյունով: Ահա թե ի՞նչ տեղում
եյի յես դատասարդում անցկացնել իմ յերկտասարդութունը:
Թախիծն ինձ պատեց. յես հեռացա պատուհանից և առանց ընթ-
րիքի պառկեցի քնելու, ուշադրութուն չդարձնելով Սալեյիչի
հորդորանքներին, վորը սրտաբեկ ձայնով կրկնում եր. «Տե՛ր իմ
աստված. վոչինչ չի ուզում ուտել... Հապա ի՞նչ կասի տիրու-
հին, յեթե յերեխան հիվանդանա»:

Մյուս ուրը առափոտյան յես նոր եյի սկսել շորերս հագնել,
յերբ իմ տենյակը մտալ մի յերկտասարդ սպա, հասակով վոչ
բարձր, թուխ և խիստ տղեղ, բայց՝ չափազանց կենդանի դեմ-
քով: «Ներեցեք ինձ, —ասաց նա ֆրանսերեն, —վոր յես առանց
ձևականության յեկել եմ ձեզ հետ ծանոթանալու: Յերեկ իմացա
ձեր գալը. մարդկային դեմք տեսնելու ցանկութունն ի վերջո
այնպես գրավեց ինձ, վոր յես չհամբերեցի: Այս վիճակը դուք
կհասկանաք, յերբ մի առ ժամանակ կապրեք այստեղ»։ Յես
դլխի ընկա, վոր նա մեծամարտի հետևանքով դվարդիայից դուրս
գրված սպան ե: Մենք իսկույն և եթ ծանոթացանք: Շվարերինն
այնքան ել հիմար չեր: Նրա խոսակցութունը սրամիտ եր և հե-
տաքրքիր: Մեծ աշխուժով նա ինձ նկարագրեց բերդապետի ըն-
տանիքը, նրա շրջապատը և վայրը, ուր ինձ բերել, հասցրել եր
իմ ճակատագիրը: Յես անկեղծ սրտով ծիծաղում եյի, յերբ
ներս մտալ այն ինկալիդը, վոր բերդապետի նախասենյակում իր
համադրեստն եր կարկնատում, և Վասիլիսա Յեդորովնայի անու-
նից ինձ ճաշի հրավիրեց նրանց մոտ: Շվարերինը ցանկութուն
հայտնեց ինձ հետ միասին դնալու:

Բերդապետի տանը մոտենալիս վորքիկ հրապարակի վրա
մենք տեսանք քանի չափ ծեր ինկալիդներ, —յերկար ծամբելով և
յետանկունի դլխարկներ ծածկած: Նրանք ճակատ եյին կազմել:
Առջևում կանգնած եր բերդապետը՝ մի առույգ և բարձրահասակ
ծերունի, դլխին թատակ և հաղին դեղնավուն խալաթ: Մեզ տես-
նելով նա մոտեցալ, մի քանի սիրալիր խոսքեր ասաց ինձ և նո-
րից սկսեց հրամաններ տալ: Մենք կանգ առանք, վոր դիտենք
վարժությունը, սակայն նա խնդրեց մեզ դնալ Վասիլիսա Յեդո-

բովանալի միտ, խոստանալով մեր հետեւից ինքն ել դալ: «Իսկ այստեղ,—ամբարշտեց նա,—նայելու բան չունե՞ք»:

Վասիլիսա Յեզորովնան մեզ ընդունեց պարզ ու սրտաբաց և ինձ հետ վարելեց վորպես վաղեմի ծանոթ: Ինվալիդը և Պալաշկան սեղանն ելին ծածկում: «Այո ի՞նչ է, Իվան Կուզմիչ այսոր խելքը ուսումնի յե տվել,—ասաց բերդապետի կինը:—Պալաշկա, բարինն ճաշի կանչիր: Իսկ Մաշան ո՞ւր է»:—Այդ բոպեյին ներս մտալ տասնութ տարեկան մի աղջիկ, կլոր, կարմիր յերեսով, բաց-չիկահեր մազերով՝ կով ամերկած ականջները յետեւ, վորոնք ասես վառվելիս լինեյին: Առաջին հայացքից նա ինձ այնքան ել դուր չեկալ: Յես նրան նայում եյի կանխակալ կարծիքով. Մաշային Շվաբրինն ինձ նկարագրել եր վորպես մի կատաբայս հիմար աղջկա: Մարիա Իվանովնան նստեց անկյունում և ակեց կար անել: Մինչ այս, մինչ այն՝ մեզ ըջէի մատուցին: Վասիլիսա Յեզորովնան ամուսնուն չտեսնելով, Պալաշկային յերկրորդ անգամ ուղարկեց նրա հետեւից: «Բարինն կասե, վոր ասը հյուրերը սպասում են, կերակուրը կատչի. վառք ասածո, ուսուցումը ձեռքից չի փախչի. դեռ այնքա՞ն դուռ վոր»:—Կապիտանը շուտով հայտնեց միաջրանի ծերուկի ուղեկցութեամբ: «Սա ի՞նչ բան է, հեր որհնած,—ասաց նրան կինը:—Ճաշը վաղուց դրել ենք, համա քեզ կանչել չի լինում»:—«Լսու՞մ ես, Վասիլիսա Յեզորովնա,—պատասխանեց Իվան Կուզմիչը,—ծառայութեանում եյի զբաղված, զինվորիկներին եյի վարժեցնում»:

«Ե՛, հերիք յեղալ,—ասարկեց կապիտանի կինը:—Հենց մի գլուխ այն եմ լսում, վոր զինվորներին վարժեցնում ես: Վոչ նրանք ծառայութեան սովորող են, վոչ ել դու մի բան ես հասկանում դրանից: Լալ եր, թե տանը նստեյիր և ասածուն աղոթք անեյիր, աղբւրս ավելի լավ կլիներ: Թանկադին հյուրեր, համեցեք նստեք»:

Նստեցինք ճաշի: Վասիլիսա Յեզորովնան չեր լսում և վոչ մի բոպե ու հարցերի տարափ տեղաց զլխիս. ուղեք՞ր են իմ ծնողները, կենդանի՞ յեն արդյոք, վորոտեղ են ապրում նրանք և ի՞նչ հարստութեան տեր են: Լսելով, վոր հայրս յերեք հարյուր գլուղացիներ ունի՝ միթե հե՞ղտ է,—ասաց նա.—ա՛յ թե հարուստ մարդիկ կան աշխարհում: Իսկ մենք, յեղբայրս, ունենք չունենք մի հոգի ունենք՝ աղջիկ Պալաշկան, բայց դե վառք ասածու, քիչ-միչ ապրում ենք: Յսմն այն է մենակ՝ Մաշան

մարդու տալու յե, իսկ ունեցած ո՞ժիտն ի՞նչ է՝ մի խիտ սանր, մի ավել՝ ու մեկ ել մի շահի փող (մեղա՛ քեզ աստված)—բաղանիք զնալու համար: Լալ է, թե գտնվի մի բարի մարդ, թե չե՝ հավիտյանս տանը կմնա իբրև հարսնացու»: Յես նայեցի Մարիա Իվանովնային. նա ամբողջովին կարմրեց և մինչև իսկ արցունքներ գլորվեցին նրա ավառի մեջ: Յես խղճացի նրան և շատարեցի խոսակցութեանը փոխել: «Լսել եմ,—ասաց յես բավական անտեղի,—վոր բաշլիկները պատրաստում են հարձակում գործել ձեր բերդի վրա»:—«Այդ ո՞ւմից ես լսել, հեր որհնած»,—հարցրեց Իվան Կուզմիչը:—«Որենքուրդում ինձ աղբւրս տալին»,—պատասխանեց յես: «Դատարկ խոսքեր են,—ասաց բերդապետը:—Մեղանում վաղուց է, վոր վոչինչ չի լսվում: Բաշլիկները վախկոտ ժողովուրդ են, կիրգիզներին ել լավ դաս ենք տվել: Հազիվ թե մեզ վրա հարձակվեն: Իսկ թե հարձակվեն, մի այն տեսակ սասան տամ նրանց, վոր տաս տարով խաղաղվեն»:—«Իսկ դուք չե՞ք վախենում,—չարմախեցի յես, դիմելով կապիտանի կնոջը,—մնալ այսպիսի վտանգները յենթակա բերդում»:—«Սովորութեան է դարձել, յեղբայրս,—պատասխանեց նա:—Քսան տարի կլլնի, վոր մեզ զնդից տեղափոխել են այստեղ և աստված գիտե, թե ինչպե՞ս եյի վախենում այդ անիծյալ անհավաստներից: Պատահում եր, հենց վոր տեսնում եյի լուսանի մորթուց կարած նրանց դըակներն ու լսում եյի նրանց ճղճողոց, հախտում ես, յեղբայր, արտա վորա եր ընկնում: Բայց հիմա՛ այնպե՞ս եմ սովորել, վոր տեղիցս ել չեմ շարժվի, յեթե դան մեզ սսեն, թե չարագործները վխտում են բերդի մոտերքում»:

«Վասիլիսա Յեզորովնան քաջարի կին է,—ծանր ու լուրջ նկատեց Շվաբրինը:—Իվան Կուզմիչը կարող է հաստատել այդ»:

«Այո՛, գիտե՞մ,—ասաց Իվան Կուզմիչը.—իմ կինը վախկոտներեց չե»:

«Իսկ Մարիա Իվանովնա՞ն, — հարցրի յես. — նա ե՞ր ձեզ նման արի յե»:

«Մաշան արի՛,—պատասխանեց նրա մայրը:—Վո՛չ, Մաշան

1 Ռուսները հիմա ել բաղանիքներում ուղտվում են ցարապետու (կեչու) բարակ ճյուղերից կաղած տերեւախիտ ավելով. քրտնասենյակի տախտակամած բարձրացած, նրանք այդ ավելով հարվածներ են տեղում շողեպատ մարմիններին:

միայնակուտ ե, մինչև հիմա ել նա չի կարողանում լսել հրացանի կրակոցը. հենց իսկույն կողոպտեց իսկ յերբ յերկու տարի առաջ իմ անվանակոչութեան որը բա՛ն հնարեց իման Կողմիչը՝ կրակել մեր թնդանութից, իմ աղափնյակս քիչ եր մնում միայն այն աշխարհը գնար: Այդ որից ել չենք կրակում՝ անխիճալ թնդանութի»:

Մենք մեր կացանք: Կատարտանն ու նրա կլինը գնացին քնելու, իսկ յես գնացի Շվաբրինի մոտ, վորի հետ և անցկացրի ամբողջ յերեկոն:

ԳԼՈՒԽ IV

Մ Ե Ն Ա Մ Ա Ր Տ Ը

— Դե՛հ, խնդրեմ սրահի քո սրղիտուրանը.
Տես՝ ի՛նչպես կծակեմ յես քո ֆիզուրան:
Կնյամնին

Անցալ մի քանի շաբաթ և իմ կյանքը Բելոդորսկի բերդում դարձալ վոչ միայն տանելի, այլ նույնիսկ և հաճելի: Բերդապետի տանն ինձ ընդունում եյին վորպես հարազատի: Մարդ ու կին ամենահարգելի մարդիկն եյին: Իման Կողմիչը, վոր հասարակ զինվորի վորդի լինելով սպայութեան աստիճանին եր հասել, միանուստ և ուսարդ մարդ եր, սակայն՝ շատ աղնիկ և բարի: Կինն եր կստավարում նրան, և դա հարմարվում եր նրա անհոգութեան հետ: Վասիլիսա Յեգորովնան ծառայութեան գործերին ել այնպես եր նայում, ինչպես իր տնտեսութեան գործերին և բերդը կատարարում եր ճիշտ այնպես, ինչպես իր տնակը: Շուտով Մարիա Իվանովնան դադարեց ինձնից քաջել: Մենք ծանոթացանք: Նա ինձ յերևաց վորպես մի խոհեմ և գլուրազուտ աղջիկ: Աննկատելի կերպով յես կապեցի այդ բարի ընտանիքի հետ, մինչև իսկ իման Իգնատիչի՝ միաջամբի կայազորային սրբույնի² հետ, վորի մասին Շվաբրինը հնարել ար, թե իբր նա անթույլատրելի կապ ե ունեցել Վասիլիսա Յեգորովնայի հետ, վոր ճշտութեան սովեր անգամ չունեի. սակայն—դա Շվաբրինի հոգը չեի:

¹ Մարմնի դիրքը սուսերամարտի ժամանակ:

² Սպայական կրտսեր աստիճան:

Ինձ տվին սպայի աստիճան: Ծառայութեան ինձ չեի նեղում: Աստիճու սպահանաժ այս բերդում վոչ գորատեսեր կային, վոչ՝ վարժութեաններ, վոչ ել սպահակային հակողութուն: Բերդապետն իր անձնական ցանկութեամբ յերբեմն վարժեցնում եր զինվորներին, բայց դեռ չեի կարողացել սովորեցնել, վոր նրանք բոլորն ել իմանային, թե վորն ե աջ կողմը, վորը՝ ձախ: Շվաբրինի մոտ մի քանի ֆրանսերեն գրքեր կային: Յես սկսեցի կարդալ և իմ մեջ արթնացալ սեր դեսլի գրականութեանը: Առավոտները յես կարդում եյի, վարժվում թարգմանութեանների, հաճախ և բանաստեղծութեաններ եյի շարադրում: Համարյա միշտ ճաշում եյի բերդապետի մոտ, վորտեղ և անց եյի կացնում որևա մնացորդը և ուր յերեկոնները յերբեմն դալիս եր հայր Գևրասիմը իր կնոջ՝ Ակուլինա Պամֆիլովնայի հետ, վորը առաջին համբավաբեր կինն եր ամբողջ թաղում: Հասկանալի յես, վոր Ալեքսեյ Իվանովիչ Շվաբրինի հետ յես տեսնվում եյի ամեն օր, սակայն քանի զնում նրա զրույցն ինձ տհաճ եր դառնում: Նրա ամենուրյա կատակները բերդապետի ընտանիքի հասցեյին ինձ բոլորովին դուր չեյին դալիս, մանավանդ նրա կծու նկատողութեանները Մարիա Իվանովնայի մասին: Բերդում ծանոթների այլ չըջան չկար, բայց յես ուրիշը չեյի ել ուզում:

Չնայած նախադուշակութուններին, բաշկիրները չեյին հուզվում: Խաղաղութուն եր իշխում մեր բերդի շուրջը: Սակայն այդ խաղաղութեանը խզվեց հանկարծակի յերկպառակութեամբ: Յես արդեն ասացի, վոր սրարապում եյի գրականութեամբ: Իմ այս վորձերը այն ժամանակվա համար նշանակալից եյին և Ալեքսանդր Պետրովիչ Սումարոկովը¹ մի քանի տարի անց դրանք շատ գովեց: Մի անգամ ինձ հաջողվեց մի փոքրիկ յերդ դրել, վորից դո՛հ եյի: Հայտնի յես, վոր գրողները հաճախ խորհուրդներ ունենալու պատրվակով լսողներ են փնտրում: Յեմ այդպես, յերդս արտագրելուց հետո յես այն տարա Շվաբրինի մոտ. ամբողջ բերդում միայն նա կարող եր գնահատել բանաստեղծի գործը: Կարճ առաջաբանից հետո զրույանից յես հանեցի իմ տետրը և կարդացի նրան հետևյալ տողերը.

¹ Ա. Պ. Սումարոկով (1718-1777)— բանաստեղծ, առաջին ուսու դրամատիկը և արիստոկրատիկ սրբեկայի ալպես կոչված կառսիցիդի ամենափայլուն ներկայացուցիչը, վորի ստեղծագործությունները մեծ համբավ են ունեցել մասնավորապես ժամանակի արտոնյալ դասերի մեջ:

Սիրո մըտքերս ալբելով
Ջանում եմ քեզ ո՛ր, մոռանալ,
Բայց Մաշայից խոստովելով
Աղատություն չեմ ստանալ:

Աչքեր պայծառ զիս գերեցին,
Սիրոս եմ մաշում ամենայն ժամ.
Նրանք հոգիս խռովեցին,
Խորտակեցին հանդիսս անդամ:

Ձախողությունըս իմանալով,
Մաշա, խղճա դու ինձ հիմա,
Դառն վիճակս տեսնելով,
Վոր քեզնով եմ գերված ահա:

— Համարձե՞ս ես, — հարցրի յես Շվաբրինին, նրանից դուռնա-
սանք սարսելով, վորպես մի տուրք, վորն ինձ անպայման հատ-
նում ե: Սակայն ի մեծ տհաճություն իմ, միշտ ներողամիտ
Շվաբրինը վճռականապես հայտնեց, վոր իմ յերգը լավը չե:

— Ինչո՞ւ համար, — հարցրի յես տհաճությունս թաղցնելով:
«Նրա համար, — պատասխանեց նա, — վոր աղբյուրի բանաս-
տեղծությունները արժանի յեն իմ ուսուցիչ Վասիլի Կիրիլիչ
Տրետյակովսկուն¹ և ինձ շատ են հիշեցնում նրա սիրային կուպ-
լետները»:

Այս ասելով նա ինձնից առավ տետրակը և սկսեց անողորմա-
բար փերուծել ամեն մի տունը և ամեն մի բառը, ամենակծու
յեղանակով ինձ ծաղրելով: Յես չհամբերեցի, նրա ձեռքից խեցի
տետրակս և ասացի, վոր այլևս յերբեք նրան ցույց չեմ տա իմ
բանաստեղծությունները: Շվաբրինը ծաղրեց և՛ այդ սարսնա-
լիքը: — «Տեսնենք, — ասաց նա, — խոսքդ կպահանջի թե չե. բանաս-
տեղծներին ունենդիր և պետք, ինչպես Իվան Կուզմիչին ողու
փորձիկ գրաֆինը՝ ճաշից առաջ: Իսկ ո՞վ ե այդ Մաշան, վորին
դու քնքույշ կիրք և սիրային տանջանք ես բացատրում: Զի՞նի՞
թե Մարիա Իվանովնան ե»:

— Բո գործը չե՛, — ասացի յես հոնքերս կիտելով, — թե ով ե

1 վ. Կ. Տրետյակովսկի (1703—1769) — պոետ, քննադատ և թարգմա-
նիչ, վորը Լոմոնոսովի հետ միասին համարվում ե XVIII դարի ռուս դրամա-
տուրգան հիմնադիրներից մեկը: Նրա բանաստեղծությունները աչքի ելին ընդ-
նամ ծայրահեղ ծանր ու ճոռոմ վճռով, վոր և Տրետյակովսկուն դարձրել և
ժամանակակիցների և հետնորդների մշտական ծաղրանքի առարկան:

այդ Մաշան: Յես վոչ քո կարծիքն եմ ուզում, վոչ ել քո յենթա-
դրությունները:

«Ոհո՛ւ: Ինքնասեր բանաստեղծ և համեստ սերեկան, — չարու-
նակեց Շվաբրինը ինձ ավելի ու ավելի գրգռելով. — բայց լսի՛ր
բարեկամական խորհուրդս. յեթե ուզում ես նպատակիդ հասնել,
խորհուրդ եմ տալիս գործել վոչ թե յերգերով»:

— Այդ ի՞նչ ե նշանակում, պարո՛ն: Խնդրեմ բացատրու-
թյուն տաս:

«Հաճույքով: Դա նշանակում ե, վոր յեթե դու ուզում ես,
վոր Մաշա Միրոնովան մի՞նով քեզ մոտ գա, ապա քնքույշ գո-
վասանքների փոխարեն նրան մի գուլգ զինդեր նվիրի»:

Արյունս յեռաց: «Իսկ ինչո՞ւ համար դու նրա մասին այդ-
պիսի կարծիք ունես», — հարցրի յես, դժվարությամբ զսպելով իմ
դայրույթը:

«Նրա համար, — պատասխանեց նա դժոխային քմիծաղով, —
վոր փորձով գիտեմ նրա վարքն ու բարքը»:

— Սառ՛ւմ ես, դարչելի՛, — գոռացի յես կատաղած, — դու
ստում ես ամենաանամոթ կերպով:

Շվաբրինի դեմքն այլայլեց: «Այս մեկը դու չես մարսի, —
ասաց նա թևս սեղմելով: — Դուք ինձ սատիսֆակցիա՛ կտաք»:

— Խնդրեմ, յերբ ուզում ես, — պատասխանեցի յես ուրախա-
ցած: Այդ բույնի յես պատրաստ եյի հոշոտել նրան:

Յես խալույն և եթ գնացի Իվան Իգնատիչի մոտ և նրան տե-
սա թեկասեղը ձեռքին. բերդապետի կնոջ հանձնարարությամբ
նա սունկ եր շարում թեյի վրա, ձմեռյա համար չորացնելու
նպատակով: «Ա՛հ, Պյոտր Անդրեյիչ, — ասաց նա ինձ տեսնելով. —
բարով յեկաք: Բարի լինի դաշներդ, համարձակվում եմ հարց-
նել՝ ի՞նչ գործով»: Յես կարճառոտ պատմեցի նրան, վոր ընդ-
հարել եմ Ալեքսեյ Իվանիչի հետ, իսկ նրան՝ Իվան Իգնատիչին
խնդրում եմ, վոր իմ սեկունդանտը՝ լինի: Իվան Իգնատիչը ու-
շաղրությամբ լսեց ինձ, յերեսիս չոելով իր միակ աչքը: «Դուք
հաճեցիք ասել, — դարձավ նա ինձ, — վոր ուզում եք Ալեքսեյ

1 Սատիսֆակցիա (լատ.) — բավարարում. սատիսֆակցիա պահանջել — նե-
րողություն խնդրել տալ հասցրած վերափորանքի համար կամ պահանջել, վոր
հակառակորդը մենամարտի դուրս գա:

2 Մենամարտողներից մեկի միջնորդը և վկան:

Իվանիչին սրախողխող անել և կամենում եք, վոր յես դրան ներկա՞ լինեմ: Այնպես չե՞, համարձակվում եմ հարցնել»:

— Իսկ և իսկ:

«Ի սեր աստուծո, Պյոտր Անդրեյիչ: Այդ ի՞նչ եք հնարել: Դուք և Ալեքսեյ Իվանիչը իրար մի թեթև հայհոյե՞լ եք: Ի՞նչ մեծ բան ե յեղել վոր, հո աշխարհը չքանդվեց: Նա ձեզ հայհոյեց, դուք ել նրան մի պինդ ուշուց տվեք. նա ձեր քիթ ու մոռութիւն տվեց, դուք ել նրա ականջին, մի ուրիշ տեղին տվեք և բաժանվեք, իսկ մենք արդեն ձեզ կհաշտեցնենք: Թե՛ չե, ի՞նչ մի բարի գործ ե իր մերձակից մարդուն սրախողխող անելը, համարձակվում եմ հարցնել: Լսա՛լ ե, յեթե դուք նրան սրախողխող անեք, աստիճան նրա՝ Ալեքսեյ Իվանիչի հետ. յես ել նրան այնքան չեմ տիրում: Հասա՛ր յեթե նա ինքը ձեզ չչատի՞: Ինչի՞ նման կլինի դա: Ո՞վ հիմար կ'մնա, համարձակվում եմ հարցնել»:

Խոհեմ պորուշիկի դատողություններն ինձ չխրատեցին: Իմ դիտավորությունն անխախտ մնաց: «Ինչպես կուղեք,—ասաց Իվան Իգնատիչը.—արեք այն, ինչ խելքներդ կկտրի: Համա յես ինչո՞ւ համար պետք ե այնտեղ վկա լինեմ: Ինչի՞ց դրդված: Մարդիկ կուվում են. ի՞նչ մի չտեսնված բան ե վոր, համարձակվում եմ հարցնել: Փա՛ռք աստծո, չլիեղների զեմ ել կոխվ եմ դնացել, թուրքերի ել. այնքան բա՛ն եմ տեսել, վոր կշտացել եմ նայելուց»:

Յես մի կերպ սկսեցի բացատրել նրան սեկունդանտի պարտականությունը, սակայն Իվան Իգնատիչը ամենեւին չկարողացավ հասկանալ ինձ: «Ձեր կամքն ե,—ասաց նա:—Յեթե յես պետք ե միջամտեմ այդ գործին, ապա լսա՛լ կլինի զնամ Իվան Կուզմիչի մոտ և ըստ որինաց ծառայության՝ տեղեկացեմ նրան, վոր ֆորտեյիայի մեջ չարագործություն ե նյութվում ընդդեմ պետական չահերի. բերդապետն արդյոք չի՞ բարեհաճի պատշաճ միջոցներ ձեռք առնել»...

Յես վախեցա և սկսեցի Իվան Իգնատիչին խնդրել, վոր նա վոչինչ չսառի բերդապետին. զուով համոզեցի նրան, նա ինձ խոսք տվեց և յես մի՞նչեցի ձեռք բաշել նրանից:

Իմ սովորության համեմատ յերեկոն յես անցկացրի բերդապետի մոտ: Յես ջանում եյի ուրախ և հանդիստ յերեսել, վորպեսզի վոչ մի կատկած չհարուցեմ և կուսարիեմ ձանձրալի

հարցերից, բայց խոստովանում եմ, վոր չունեյի այն սառնասրտությունը, վորով միշտ հարարտանում են նրանք, ուղբեր իմ վիճակումն են գտնվել: Այդ յերեկո յես տրամադրված եյի քընքչանքով ու գորովանքով: Մարիա Իվանովնան ինձ դուր եր գալիս սովորականից ավելի: Այն միտքը, վոր մի գուցե նրան վերջին անգամն եմ տեսնում, — նրան իմ աչքերում ինչ-վոր հուզիչ պատկեր եր յաղիս: Շվարքինն ել յեկավ այնտեղ: Յես նրան մի կողմ տարա և տեղեկացրի Իվան Իգնատիչի հետ ունեցած իմ խոսակցության մասին: «Մեր ինչի՞ն են պետք սեկունդանտները, — ասաց նա ինձ սառնությամբ. — առանց նրանց ել կարող ենք»: Մենք պայմանավորվեցինք մենամարտել բերդի մոտ գտնվող զեղերի այն կողմում և այնտեղ լինել հաջորդ որը առավոտյան ժամը յոթին: Ըստ յերեկոյի մենք այնքան սիրալիք եյինք խոսում, վոր Իվան Իգնատիչն ուրախությունից բերանից թոցրեց. «Ա՛յ, ապրե՛ք, — ասաց նա ինձ գոհունակ գեմքով,— վատ հաշտությունը լսա՛լ ե բարի վեճից, թեպետ և անպատիվ ե, բայց՝ վողջ-առողջ կ'մնաս»:

«Ի՞նչ, ի՞նչ, Իվան Իգնատիչ, — ասաց բերդապետի կինը, վորն անկյունում նստած խաղաթղթերով ֆալ եր բացում. — յես լսա՛լ չլսեցի»:

Իվան Իգնատիչը նկատելով իմ անբավականության նշանները և հիշելով իր խոստումը, չվոթվեց և չդիտել ինչ պատասխանի: Շվարքինը նրան ողնության հասավ:

«Իվան Իգնատիչը, — ասաց նա, — գտվում ե մեր հաշտվելը»:

— Իսկ այդ ո՞ւմ հետ ես դու կովել, յեղբայրս:

«Մենք՝ քիչ մնաց, վոր բավական թունդ կովելինը Պյոտր Անդրեյիչի հետ»:

— Ինչի համար վոր:

«Մի դատարկ բանի պատճառով. մի յերդի պատճառով, Վա-սիլիսա Յեգորովնա»:

— Դուք ել բա՛ն եք գտել իրար հետ կովելու: Մի յերդի համար... Ախր այդ ի՞նչպես պատահեց:

«Ահա թե ինչպես. Պյոտր Անդրեյիչը վերջերս մի յերդ եր հնարել և այսոր յերդեց ինձ, յես ել իմ սիրած յեղանակն սկսեցի»:

Աղջիկ կապիտանի,
Կես գիշերին զրոսանք մի՛ անի:

Գիտութիւնն սկսվեց: Պյոտր Անդրեյիչը քիչ եր մնում բարկանալ, բայց հետո միտք արեց, վրո ամեն վրք աղատ ե յերդեւ ախ, ինչ իր քեֆը տալիս ե: Դրանով ել բանը վերջացավ:

Քիչ մնաց, վրո Շվարբիւնի անամոթութիւնն ինձ կատաղեցներ, սակայն բացի ինձանից վրո վրք չհասկացավ նրա կոպիտ ակնարկները, համենայն դեպս վրո վրք դրանց վրա ուշադրութիւն չդարձրեց: Յերգերից ել պրծնելով, խոտակցութիւնն անցավ բանաստեղծներին և բերդապետը նկատեց, վրո նրանք բոլորն ել անառակ ու թունդ հարբեցող մարդիկ են և բարեկամաբար ինձ խորհուրդ տվեց թողնել վրոտանալորներ դրելը, վրոպես ծառայութիւնն գործին ընդդեմ և վրո մի լավ բանի չհասցնող դրամուսնը:

Շվարբիւնի ներկայութիւնն ինձ համար անտանելի յեր: Յետ շուտով հրաժեշտ տվի բերդապետին և նրա ընտանիքին: Տուն գալով յես դնեցի իմ սուսերը, փորձեցի նրա ծայրը և պառկեցի քնելու, Սալեյիչին հրամայելով արթնացնել առաւոտյան ժամը վեցն անց:

Մյուս որը նշանակված ժամին յես արդեն կանգնել ելի դեպերի ախ կողմը, սպասելով իմ հակառակորդին: Շուտով նա ել յերեւաց: «Կարող են մեզ տեսնել, — ասաց նա ինձ. — պիտոյ յես շտապել»: Մենք հանեցինք համազգեստները, մնացինք միայն կամդոններով և մերկացրինք սուսերները: Այդ բոպեյին դեպերի յետեից հանկարծ հայտնվեց Իվան Իգնատիչը և հինդ հոգի ինվալիդներ: Նա պահանջեց, վրո դնանք բերդապետի մոտ: Դրոկամութիւնը հնազանդվեցինք. զինվորները մեզ շրջապատեցին և մենք դեպի բերդն ուղղվեցինք Իվան Իգնատիչի հետեից, վրոք մեզ հանդիսավորութիւնը տանում եր, քայլելով դարմանալի հպարտութիւնով:

Մենք մտանք բերդապետի տունը: Իվան Իգնատիչը դուռը բացեց, հանդիսավոր կերպով հայտարարելով. «Բեքեցի՛ն»: Մեզ զիմաւորեց Վասիլիսա Յեգորովնան: «Ախ, դուք հեր որհնածներ: Սա ինչի՞ նման ե, ի՞նչպես, ի՞նչ—մեր բերդում մարդ սպանել: Իվան Կուզմիչ, իսկո՛ւյն ևեթ արանց ձերբակալիր: Պյոտր Անդ-

րեյիչ, Ալեքսեյ Իվանիչ, դեսը տվեք ձեր սուսերները, տվե՛ք, տվե՛ք: Պալա՛չկա, ախ սուսերները տար նկուղ: Պյոտր Անդրեյիչ, այդպիսի բան չեյի սպասում քեզանից: Ամոթ չե՞ քեզ: Լավ, ասենք թե Ալեքսեյ Իվանիչը մարդասպանութիւնն համար համ զվարդիսայից ե դուրս դրված, համ ել նա ստոծուն չի հաւատում. համա դո՛ւ, դու ե՞լ նույնն ես ուղում անել»:

Իվան Կուզմիչը միանգամայն համաձայն եր իր կնոջ հետ և մեջ ընդ մեջ խոսում եր, ավելացնելով. «Հա, լսո՛ւմ ես, Վասիլիսա Յեգորովնան ճիշտ ե ասում: Մենամարտերը ձեռկանորեն արդելված են զինվորական արտիկուլով»: Այդ միջոցին Պալաչկան մեզնից առավ մեր սուսերները և տարավ նկուղ: Յես անկարող յեղա ծիծաղա դսպել: Շվարբիւնը պահեց իր լրջութիւնը: «Դեպի ձեզ տածած իմ բոլոր հարգանքով հանդերձ, — սատարյուն կերպով ասաց նա Վասիլիսա Յեգորովնային, — չեմ կարող չնկատել, վրո դուք իդուր եք կամենում անհանգրտանալ՝ մեզ ձեր դատաստանին յենթարկելով: Այդ դուք թողեք Իվան Կուզմիչին, դա նրա գործն ե»: — Ախ, հեր որհնած, — առարկեց բերդապետի կինը. — բա մի՞ թե մարդ ու կին մի հոգի և մի մարմին չեն: Իվան Կուզմիչ, ի՞նչ ես հորանջում: Իսկույն ևեթ արանց դատ—դատ բանտ նստացրու միայն հաց ու ջուր տալով, վրո խնդները դուլաները գա՛. մեկ ել՝ թող հայր Դերասիմը նրանց վրա ապաշխարանք դնի, վրո աստծուց թողութիւնն խնդրեն և զղան մարդկանց առաջ:

Իվան Կուզմիչը չգիտեր, ինչ վճռեր: Մարիա Իվանովնան սատարիկ գունատ եր: Փոթորիկը մի քիչ հանդարտվեց. բերդապետի կինը հանգստացավ և ստիպեց մեզ համբուրել միմյանց: Պալաչկան բերեց մեր սուսերները: Բերդապետի տնից մենք դուրս յեկանք ըստ յերեւույթին հաշտված: Իվան Իգնատիչն ուղեկցում եր մեզ: — Ամոթ չե՞ր ձեզ, — ասացի յես նրան զայրացած, — մեր մասին տեղեկացնել բերդապետին ախ բանից

1 Ռազմական որենքների ժողովածու, վրով 18-րդ դարի սկզբից մինչև 19-րդ դարի կեսերը կառավարվում եր ռուս միապետական բանակը: Կիրառվում եր և՛ քաղաքացիական արդարադատութիւնն մեջ: «Ձինվորական արտիկուլ»-ով «խոտակցութիւնն արդելված ելին» մենամարտերը. մասնակցողներին մահապատիժ (կախաղան) եր սպառնում: Այս որենքը ձեռնարկներն պահել եր իր ուլիք մինչև Պուշկինի ժամանակները, սակայն անհամապատասխան մեղմ պատիժներով:

հետո, յերբ դուք ինձ խոսք տվիք չանել այդ: — «Աստված վրկա, վոր այդ մեկը յե՛ս չեմ ասել ի վան Կուզմիչին, — պատասխանեց նա. — Վասիլիսա Յեզորովնան ամեն ինչ դուրս քաշեց իմ բերանից: Ամեն բան ել նա կարգադրեց առանց բերդապետի դիտութեան: Ասենք, փառք ասածո, վոր ամեն ինչ այսպես վերջացավ»: Այդ խոսքերն ասելով նա շրջվեց դեպի տուն, իսկ Շվարբինը և յես մնացինը մենակ: — Մեր դործը սըրանով վերջանալ չի կարող, — ասացի յես նրան: — «Իհարկե, պատասխանեց Շվարբինը. — դուք ձեր արյունով ինձ պատասխան կտաք ձեր հանդերձութեան համար. բայց, հալանորեն մեկ կսկսեն հետևել: Մի քանի ուր մենք պետք ե ցույց տանք, թե հաշտ ենք: Յտեաութիւն»: — Յե՛վ մենք բաժանուցինք, քարծես թե վոչինչ չեք յեղել:

Վերադառնալով բերդապետի տունը յես, ըստ իմ սովորութեան, նստեցի Մարիա Իվանովնայի մոտ: Իվան Կուզմիչը տանը չեր. Վասիլիսա Յեզորովնան տնային դործերով եր դբաղված: Մենք խոստով ելինք կիսաձայն: Մարիա Իվանովնան քրնքջութեամբ կշտամբում եր ինձ այն անհանդատութեան համար, վոր պատճառել եր բոլորին իմ վեճը Շվարբինի հետ: «Իմ չունչը կտրվեց, յերբ մեզ ասացին, վոր դուք մտադիր եք սուսերնեքով կռվել: Ի՛նչ զարմանալի յեն տղամարդիկ: Մի խոսքի պատճառով, վոր մի չարաթ հետո անկասկած կմոռանային, նրանք պատրաստ են միմյանց սրակոտոր անել և զոհել վոչ միայն իրենց կյանքը, այլև խիղճն ու բարորութիւնը նրանց, ովքեր... բայց յես հալատացած եմ, վոր վեճը սկսողը դուք չեք: Իրոք մեղավոր ե Ալեքսեյ Իվանիչը»:

— Իսկ ինչո՞ւ յեք դուք այդպես կարծում, Մարիա Իվանովնա:

«Հենց այնպես... նա այն տեսակ խեղկատակն ե: Յես չեմ սիրում Ալեքսեյ Իվանիչին. անչափ զգովում եմ նրանից, բայց տարորինակ ե, և վոչ մի դեպքում, յես չեյի կամենա, վոր յես ել նրան այդպես դուր չգայի: Դա ինձ սաստիկ անհանդատութիւն կպատճառեր»:

— Իսկ ինչ եք կարծում, Մարիա Իվանովնա. դուք արդյոք դո՞ւր եք գալիս նրան, թե վոչ:

Մարիա Իվանովնան կարկամեց ու կարմրեց: «Ինձ թվում ե, — ասաց նա, — յես կարծում եմ, վոր դուք եմ գալիս»:

— Իսկ ինչո՞ւ յե ձեզ այդպես թվում:

«Վորովհետև նա խնդրել եր իմ ձեռքը»:

— Խնդրե՞լ եր: Նա խնդրել եր ձեր ձեռքը: Այդ յե՞րբ:

«Անցյալ տարի: Ձեր դալուց յերկու ամիս առաջ»:

— Յե՛վ դուք չգնացի՞ր նրան:

«Ինչպես տեսնում եք: Ալեքսեյ Իվանիչն իհարկե, թե՛ փերք մարդ ե, թե՛ լավ ընտանիքից ե և թե՛ հարուստ. բայց, յերբ մտածում եմ, թե պետք ե պատկի տակ բոլորի ներկայութեամբ նրա հետ համբուրվել... Վո՛չ մի դեպքում և վո՛չ մի յերջանկութեան համար»:

Մարիա Իվանովնայի խոսքերն աչքերս բաց արին և ինձ շատ բան սրարեցին: Յես հասկացա այն համառ չարախոսութիւնը, վորով Շվարբինը հետապնդում եր նրան: Հալանորեն նա նկատել եր մեր փոխադարձ մտերմութիւնը և աշխատում եր մեզ հեռու պահել միմյանցից: Մեր վեճին առիթ տվող խոսքերը հիմա առաւել ևս դադրելի թվացին ինձ, յերբ կոտրեալ և անվայել ծաղրանքի փոխարեն դրանց մեջ յես տեսա միտումնավոր բամբասանքը: Հանդուգն չարախոսին պատժելու ցանկութիւնն իմ մեջ ավելի ուժեղացավ և յես անհամբեր սպասում եյի հարմար առիթի:

Շատ չսպասեցի: Մյուս ուրը, յերբ յես դբաղված եյի երեւդիր՝ դրելով և հարմար հանգի սպասելով դրիչն եյի կրծում, Շվարբինը բաղիսց իմ պատուհանը: Յես դրիչը վայր դրի, սուսերա վերցրի և դուրս յեկա: «Ինչո՞ւ հետաձգեցեք, — ասաց ինձ Շվարբինը. — մեզ չեն հետևում: Ի՞նչեք դեպի դետը: Այնտեղ վոչ վոք մեզ չի խանդարի»: Մենք լուռ քայլեցինք: Զատովայր արահետով յիջնելով, հենց դետեղրին կանգ առանք և մերկացրինք մեր սուսերները: Շվարբինն ինձնից վարպետ եր, սակայն յես՝ ավելի ուժեղ և համարձակ եյի և monsieur² Բոպրեն, վորը յերբեմն ղեկավոր եր յեղել, ինձ սուսերամարտի մի քանի դաս եր տվել, վորոնցով և յես ոգտվեցի: Շվարբինը չեր սպասում հանձնին ինձ դռնել այդքան վտանգավոր հակառակորդի: Յերկար ժամանակ մենք չեյինք կարողանում միմյանց վրեժն վնաս հասցնել. վերջապես, նկատելով, վոր Շվարբինը թուլանում և,

1 Ելեգիա (հուն.) — յեղերերգ՝ տիւր, թախճալի յերգ:

2 Monsieur (Փր.) — պարոն:

յես սկսեցի յեռանդուն կերպով հարձակել նրա վրա և համա-
բյա մինչև գետը քչեցի նրան: Հանկարծ յես լսեցի իմ անունը՝
արտասանված բարձր ձայնով: Յես շրջվեցի և տեսա Սալեիչին,
վոր լեռնային արահետով դեպի ինձ եր վազում... Հենց այդ
ժամանակ աջ ուսից ներքև կրծքի մեջ ուժեղ ծակոց պայտի.
յես ընկա և վորցրի գիտակցությունս:

ԳԼՈՒԽ V

Ս Ե Ր Ը

Ա՛խ, դու աղջիկ, սիրուն աղջիկ,
Ջահել-ջահել մարդ մի առնի,
Հարցում արա հորից, մորից,
Հորից-մորից, ազգ ու տոհմից,
Խելքդ գլուխդ հավաքի,
Խելք հավաքի, նաև ոժիտ:

Ժողովրդական յերգ

Թե վոր ինձնից լավին դռնես՝ կմոռնաս ինձ,
Յեթե ինձնից վատը դռնես, — կհիշես ինձ:

Նալնեղես

Ուշքի գալով յես մի առ ժամանակ չկարողացա սթափվել և
չեյի հասկանում, թե ինձ ինչ և պատահել: Ինձ անծանոթ մի
վերնատան մեջ յես պառկած եյի թախտի վրա և սաստիկ թու-
լություն եյի զգում: Իմ առջև կանգնած եր Սալեիչը, մոմը
ձեռքին: Մի ինչ վոր մարդ զգուշությամբ քանդում եր վիրա-
կապերը, վորոնցով փաթաթված եյին իմ կրծքն ու ուսը: Քիչ-
քիչ մտքերս պարզվեցին: Յես հիշեցի իմ մեղամարտը և գլխի
ընկա, վոր մի րապրով եմ: Այդ րոպեյին դուռը ճուռաց: «Հը՞,
ի՞նչպես ե», — չչուկով հարցրեց ձայնը, վորից յես թարտա-
ցի: — Միշտ նույն վիճակումն ե, — պատասխանեց Սալեիչը
հոգոց հանելով. — բոլոր ժամանակ ուշքը վրան չե, արդեն
հինգ ուր ե: — Յես ուզում եյի շրջվել, բայց չկարողացա: —
«Վո՞րտեղ եմ յես, ո՞վ կա այստեղ», — ասացի յես գժվարու-
թյամբ: Մարիա Իվանովնան մոտ յեկավ իմ մահճակալին և կը-
ռացավ դեպի ինձ: «Ի՞նչ ե, ի՞նչպես եք ձեզ զգում», — ասաց
նա: — Փառք աստծո, — պատասխանեցի յես նիստած ձայ-

նով: — Այդ դո՞ւք եք, Մարիա Իվանովնա. ասացեք ինձ... —
յես այլևս ուշ չունեցա շարունակելու և լռեցի: Սալեիչն ախ
քաշեց: Նրա դեմքին ուրախություն յերևաց: «Ուշքի՞ յեկավ,
ուշքի՞ յեկավ, — կրկնում եր նա: — փա՛ռք քեզ տեր: Հա՛մա
թե վախեցրի ինձ, տեր իմ, Պյոտր Անդրեյիչ. հե՛շտ բան ե,
եսոր հինգ ուր ե...» Մարիա Իվանովնան ընդհատեց նրան: «Շատ
մի՛ խոսի նրա հետ, Սալեիչ, — ասաց: — Նա դեռ թույլ ե»: Մարիա
Իվանովնան դուրս յեկավ և կամացով ծածկեց դուռը:
Մտքերս ալեկոծվեցին: Յե՛վ այսպես, յես բերդապետի տանն ե-
յի, Մարիա Իվանովնան գնում-գալիս եր ինձ մոտ: Յես ու-
զում եյի Սալեիչին մի քանի հարցեր տալ, սակայն ծերուկը
գլուխն ուրորեց և ականջները խցկեց: Դժկամելով յես աչքերս
վառեցի և շուտով խոր քնի մեջ ընկավ:

Զարթնելով, յես մոտ կանչեցի Սալեիչին և նրա փոխարեն
իմ առջև տեսա Մարիա Իվանովնային. ինձ վողջունեց նրա հը-
րեղտակալին ձայնը: Չեմ կարող նկարագրել այն քաղցր զգացու-
մը, վոր պատեց ինձ այդ րոպեյին: Յես հալիչտակեցի նրա ձեռ-
քը, սեղմեցի շրթունքներին ու խանդավառանքի արցունքներով
թրջեցի այն: Մաշան ձեռքը չե՛ր քաշում... և հանկարծ՝ նրա
շրթունքները հարկեցին իմ այտին և յես զգացի նրանց ջերմ ու
թարմ համբույրը: Մարմնովս կրակ անցավ: «Իմ սիրելի, բարի՛
իմ Մարիա Իվանովնա, — ասացի յես նրան, — յեղի՛ր իմ կլինը,
յերջանկացրու ինձ»: — Նա սթափվեց: «Ի սեր աստծո, հան-
գըստացե՛ք, — ասաց նա ձեռքը ինձնից խլելով: — Դուք դեռևս
վտանգի մեջ եք, վերքը կարող ե քայքայել: Պահպանեցե՛ք ձեզ
դռն ինձ համար»: Այս խոսքերի հետ նա գնաց, թողնելով ինձ
հրճվանքի արեցման մեջ: Յերջանկությունն ինձ հարուժյուն
տվեց: Նա ի՞մը կլինի, նա ինձ սիրո՞ւմ ե: Այս միտքը համակեց
իմ վողջ եյուրթյունը:

Այդ րոպեյից ժամ առ ժամ դրությունս լավացավ: Ինձ բը-
ժըվում եր գնդի վարսավիրը, քանի վոր բերդում ուրիշ բժիշկ
չկար և փառք աստծո՝ նա այնքան ել խելքին չե՛ր զորում: Յե-
րտաարգուլթյունս և ինքը ընությունը արագացրին իմ առող-
ջանալը: Բերդապետի ամբողջ ընտանիքը խնամում եր ինձ: Մա-
րիա Իվանովնան ինձնից չե՛ր հեռանում: Հասկանալի յե, վոր ա-
ռաջին իսկ հարմար առիթով յես վերսկսեցի ընդհատված բա-
ցատրությունը և Մարիա Իվանովնան ավելի համբերատար եր

լսում ինձ: Առանց վորևե սեթևեթության նա խոստովանեց իր ունեցած սրտի հակումը դեպի ինձ և ասաց, վոր իր ծնողները, իհարկե՝ իր յերջանկությանն ուրախ կլինեն: «Բայց դու լավ մտածիր, — ասելացրեց նա. — ըո ծնողների կողմից արդյոք չես լինի արգելքներ»:

Յես մի վտըր մտածեցի: Իմ մոր քնքշության մասին յետ կասկած չունեցի, բայց խմանալով հորս բնավորությունն ու մրտածեկակերպը, յես զգացի, վոր իմ սերը այնքան ել չի հուզի նրան և նա այդ կհամարի վորպես յերկտասարդ մարդու քմահաճություն: Յես այդ անկեղծորեն խոստովանեցի Մարիա Իվանովնային և սակայն վորոշեցի՝ վորքան կարելի յե մի պերճախոս նամակ գրել հորս, խնդրելով նրա ծնողական որհնությունը: Նամակը յես ցույց տվի Մարիա Իվանովնային, վորն այնքան համոզիչ և սրտաչարժ գտավ այն, վոր չեք կասկածում նրա հաջողությանը և յերկտասարդությանն ու սիրո վողջ դյուրահաջավատությամբ անձնատուր յեղավ իր քնքույշ սրտի զգացմունքներին:

Շվաբրինի հետ յես հաշտվեցի առողջանալուս առաջին օրերը: Իվան Կուզմիչը հանդիմանելով ինձ մենամարտի համար, ասաց. «Ե՛հ, Պյոտր Անդրեյիչ, ա՛յ թե քեզ բանտարկել եյի. ամենք դու առանց դրան ել պատժված ես: Իսկ Ալեքսեյ Իվանիչը հենց մի գլուխ նստած ե հացատանը, պահակի հսկողության տակ, իսկ նրա սուսերը կողպեքի տակ ե, Վասիլիսա Յեդրովնայի մոտ: Թող ինքն իրեն խելքի դա ու զղջա»: Յես չափազանց յերջանիկ եյի, վորպեսզի կարողանայի սրտիս մեջ թշնամական զգացմունք պահել: Յես սկսեցի խնդրել Շվաբրինի մասին և բարի բերդապետը, իր ամուսնու համաձայնությամբ վճռեց աղատել նրան: Շվաբրինն յեկավ ինձ մոտ. նա խոր ափսոսանք հայտնեց այն մասին, ինչ պատահել եր մեր միջև և խոստովանեց, վոր բոլոր մեղքը իրենն ե և ինձ խնդրեց մոռանալ տեղի ունեցածը: Բնությունից անհիշաչար լինելով, յես անկեղծությամբ ներեցի նրան թե՛ մեր վեճը և թե՛ վերքը, վոր յես ստացել եյի նրանից: Նրա զրպարտության մեջ յես տեսնում եյի վիրավորված ինքնասիրության և մերժված սիրո զայրույթը և մեծահոգաբար ներեցի իմ դժբախտ ախոյանին:

Շուտով յես առողջացա և կարողացա տեղափոխվել իմ բնակարանը: Անհամբեր սպասում եյի իմ ուղարկած նամակի պա-

տասխանին, չհամարձակելով հույս ունենալ և ջանալով իմ մեջ խլացնել տխուր նախազգացումը: Վասիլիսա Յեդրովնայի և նրա ամուսնու հետ ղեռ չեյի բացատրվել, սակայն իմ առաջարկությունը նրանց չպետք ե դարձացներ: Վոչ յես, վոչ եր Մարիա Իվանովնան չեյինք աշխատում նրանցից թազցնել մեր զգացմունքները և մենք առաջուց արդեն հավատացած եյինք, վոր համաձայն են:

Վերջապես մի անգամ առավոտյան Սավելիչը մտավ իմ սենյակը, ձեռքին մի նամակ: Դողդողալով խլեցի այն: Հասցեն հորս ձեռքով եր գրված: Այդ նախապատրաստեց ինձ մի ինչ-վոր կարևոր բանի, քանի վոր ատվորաբար մայրս եր ինձ նամակներ գրում, իսկ հայրս վերջում ավելացնում եր մի քանի տող: Յերկար ժամանակ յես չեյի բացում ծրարը և նորից ու նորից կարդում եյի հանդիսավոր մակագրությունը. «Իմ վորդի Պյոտր Անդրեյիչ Գրինյովին, Որենբուրգի Նահանգում, Բելոգորսկի բերդում»: Յես ջանք եյի թափում ձեռաբերեց խմանալ այն հոգեկան տրամադրությունը, վորով գրված եր նամակը: Վերջապես վճռեցի բանալ այն և առաջին իսկ տողերից տեսա, վոր ամեն ինչ խորտակվում ե: Նամակի բովանդակությունը հետևյալն եր.

«Վորդի իմ Պյոտր.

Գո նամակը, վորով դու խնդրում ես մեզ տալ մեր ծնողական որհնությունն ու համաձայնությունը՝ Միրնոմի աղջիկ Մարիա Իվանովնայի հետ ամուսնանալու համար, մենք առաջանք սույն ամսի 15-ին և վոչ միայն մտադիր չեմ քեզ տալ վոչ իմ որհնությունը, վոչ ել իմ համաձայնությունը, այլև դեռևս պատրաստվում եմ զալ այդտեղ և ըո այդ արարքներին համար քեզ մի լավ դաս տալ, ինչպես վտըրիկ աղային են խրատում, չնայած ըո աղայական աստիճանին, վորովհետև դու աղացուցեցիր, վոր դեռևս արժանի չես սուսեր կրելու, վորը քեզ տրված ե հայրենիքը պաշտպանելու և վոչ թե քեզ պես թոկից փախածներին հետ մենամարտելու համար: Անհապաղ պիտի գրեմ Անդրեյ Կարլովիչին, խնդրելով, վոր նա քեզ Բելոգորսկի բերդից տեղափոխի վորևե այլ վայր, վորպեսզի այնտեղ ըո հիմարտություն անցնի: Մայրդ, խմանալով ըո մենամարտի մասին և այն, թյունն անցնի: Մայրդ, խմանալով ըո մենամարտի մասին և այն, վոր դու վիրավորված ես, վչտից տկարացավ և հիմա պառկած ե: Արդյոք վերջդ ի՞նչ ե լինելու: Աղոթում եմ աստծուն, վոր

դու ուղղվես, թեպետ և չեմ համարձակվում հուսալ նրա մեծ վողորմածությունը:

Հայր քո՝ Ա. Գ.»

Նամակի ընթերցումն իմ մեջ առաջացրեց զանազան զգացումներ: Այն խիստ արտահայտութիւնները, վոր հայրս չեք զլացել գործածել, խորապէս վերաւորեցին ինձ: Արհամարհանքը, վորով նա հիշում էր Մարիա Իվանովնայի մասին, ինձ այնքան անսպասելի թվաց, վորքան և անխաղաղ: Բեկդորսկի բերդից տեղափոխվելու միտքը ինձ սարսափեցրեց, բայց ամենից շատ ինձ վշտացնում էր մորս հիվանդութեան լուրը: Յես չարացած եյի Սափելիչի վրա, չկասկածելով, վոր իմ մենամարտը ծնողներիս հայտնի յե յեղել նրա միջոցով: Հետ ու առաջ քայլելով իմ նեղ սենյակում, յես կանգ առա նրա դիմաց և ասացի, խտուրթամբ նրան նայելով. «Յերեւում ե՛ք քեզ համար քիչ ե, վոր յես քո յերեսից վերաւորվել եմ և մի ամբողջ ամիս վտառ գերեզմանի դուռն եր. այժմ ել մո՞րս ես ուղում մեռցնել»: Սափելիչն ասուչ կտրեց, ասես շանթահարեցին նրան: «Վողորմի՛ր, տեր իմ, — ասաց նա և քիչ մնաց հեկեկալ, — այդ ի՞նչ հրամայեցիր ասել: Յե՞ս եմ պատճառը, վոր դու վերաւորվել ես: Աստված գիտի, վոր յես վաղեցի իմ կրծքով քեզ պաշտպանելու Ալեքսեյ Իվանիչի սուտերից: Անխիճալ ծերությունը խանգարեց: Հապա մայրիկիդ ի՞նչ եմ արել»: — «Ինչ ես արե՛լ, — պատասխանեցի յես: — Ո՞վ եր քեզ խնդրում իմ մասին տեղեկութիւններ գրես, մի՞թե քեզ լրտեսելու համար են ուղարկել ինձ հետ»: — «Յես քո մասին տեղեկութիւններ եմ գրե՛լ, — պատասխանեց Սափելիչն արցունքն աչքերին: — Աստվա՛ծ, յերկնային թաղավոր: Դե՛, հրամայեցիր կարդալու, թե բարինն ի՞նչ ե գրում ինձ. կտեսնես, թե ինչպէս եմ լրտեսել քեզ»: Այս ասելով նա գրպանից հանեց նամակը և յես կարդացի հետեւյալը.

«Ամոթ քեզ, քափթառ չուն, վոր դու, չնայած իմ խիստ հրամաններին, ինձ չես տեղեկացրել իմ վողոր Պյոտր Անդրեյի վիչի մասին և վոր կողմնակի մարդիկ են հարկադրված հայտնել ինձ նրա ստահակութիւնները: Այդպե՛ս ես դու կատարում քո պաշտոնը և տերունական կամքը: Յես քեզ, քափթառ չուն, խոզ արածացնելու կուղարկեմ, վոր իսկութիւնը թաքցրել ես ինձնից և յերես ես տվել յեթիտասարդ տղային. նամակս աստաւորապէս պէս հրամայում եմ անմիջապէս գրել ինձ, թե հիմա

ինչպէս ե նրա առողջութիւնը, վորի մասին ինձ գրում են թե լավացել ե, նաե թե վո՛րտեղից ե վերաւորվել և արդյոք լա՞վ են բժշկել»:

Ակներե եր, վոր Սափելիչն իմ հանդեպ իրաւ եր և վոր յես իզուր վերաւորեցի նրան հանդիմանութեամբ և կասկածանքով: Յես ներողութիւն խնդրեցի նրանից, սակայն ծերունին անմխիթար եր: «Ա՛յ թե ինչ որի հասա յես, — կրկնում եր նա. — ա՛յ թե ինչ վողորմածութիւնների արժանացա իմ տերերից: Յես հա՛մ քափթառ չուն եմ, համ խողարած, համ ել յե՞ս եմ քո վերքի պատճառը: Ձե, տեր իմ Պյոտր Անդրեյիչ, վոչ թե յես, այլ անխիճալ մուսկէն ե մեղավորը. այդ նա՛ք քեզ սովորեցրեց յերկաթե շամփուրներով իրար ծակոտել ու վտառելով դովդովել. կտեսնա՛ այդպիսով չար մարդուց ասպահոված կմասս: Ինչ-ներին՝ս եր պետք մուսկէ վարձել և ավելորդ վող ծախսել»:

Բայց ո՞վ եր տեղեկութիւն կրել հորս տեղեկացնելու իմ վարքի մասին: Գեներալը: Սակայն նա, թվում եր թե իմ մասին այնքան ել հոգ չի տանում. իսկ Իվան Կուզմիչը կարեւոր չեք համարել նրան տեղեկացնել մեր մենամարտի մասին: Գլուխս կորցրել եյի յենթադրութիւններից: Կասկածներս ընկան Շվարբինի վրա: Միայն նա չահ ունեւ տեղեկացնելուց, վորի հետեւանքը կարող եր լինել իմ հեռացումը բերդից և անջատումը բերդապետի ընտանիքից: Յես գնացի այդ բոլորի մասին Մարիա Իվանովնային հայտնելու: Նա ինձ դիմաւորեց տան դռանը: «Այդ ի՞նչ ե պատահել, — ասաց նա ինձ տեսնելով: — Ի՛նչպէս դու նաո եք դուք»: — Ամեն ինչ վերջացած ե, — պատասխանեցի յես և տվի հորս նամակը: Իր հերթին նա ել դունատվեց: Նամակը կարդալուց հետո նա այն վերադարձրեց դողացող ձեռքով և ասաց դողողուն ձայնով. «Յերեւում ե՛ք յես բախտ չունեմ... Ձեր ծնողները չեն ուղում ինձ իրենց ընտանիքն ընդունել: Թող ամեն բանում տիրոջ կամքը լինի. աստված մեզնից լավ գիտե, թե մեկ ինչ ե պետք: Ինչ անենք, Պյոտր Անդրեյիչ, դունե դուք բախտավոր յեղեք...» — «Այդ չի՛ լինի, — գոչեցի յես նրա ձեռքը բռնելով. — դու ինձ սիրում ես, յես պատրաստ եմ ամեն ինչի: Գնանք, ընկնենք քո ծնողների վտառքը, նրանք պարզ մարդիկ են և վոչ թե խստասիրտ գոռոցներ... Նրանք մեկ կորհնեն, մենք կպսակվենք, իսկ հետո, կդա ժամանակ, յես

Համախառնացած եմ, վոր կհամոզենք իմ հորը: Մայրս մեր կողմը կընեն, նա կենքի ինձ...»: «Վոչ, Պյոտր Անդրեյիչ, — պատասխանեց Մարիա իմանովնան. — առանց քո ծնողների որհրոթյան յես չեմ ամուսնանա քեզ հետ: Առանց նրանց որհրոթյան դու բախտ չես ունենա: Հնազանդիկներ ասածու կամքին: Թե վոր դռնես քեզ վիճակվածին, թե վոր սիրես ուրիշին — աստված քեզ հետ, Պյոտր Անդրեյիչ. իսկ յես ձեր յերկուսի համար...» Այս խոսքերի հետ նա լացեց և հեռացավ ինձնից. յես աչքն ե, ուզում եյի նրա հետեւից աննյակ մտնել, տակայն դռացի, վոր ի վիճակի չեմ ինքս ինձ պահել և վերադարձա տուն:

Որքին մտատանջության մեջ նստած եյի, յերբ հանկարծ Սամելիչն ընդհատեց իմ մտածմունքները: «Ահա՛, տեր իմ, — ասաց նա, ինձ տալով լրիվ գրված մի թերթ թուղթ. — տե՛ս, թե յես արդէ՞ր լրտեսություն արե՞լ եմ և մի՞թե յես աշխատում եմ հայր ու վորդի գտնեցնել միմյանց հետ»: Նրա ձեռքից յես վերցրի թուղթը. դա Սամելիչի պատասխանն էր իր ստացած նամակին: Ահա նա՛ բառ առ բառ:

«Տե՛ր եմ, Անդրեյ Պետրովիչ, մեր վողորմած հայր:

Ձեր վողորմածիկ գրությունը յես ստացա, վորի մեջ բարեհաճել ես բարկանալ ինձ՝ ձեր ճորտի վրա, վոր իբր ամոթ ե ինձ չկատարել տերունական հրամանները. — իսկ յես քաֆթառ շուն չեմ, այլ ձեր հավատարիմ ծառան, լսում եմ տերունական հրամանները և միշտ ձեզ պարտաճանաչ ծառայել և հասել եմ մինչև որ ծերության: Դե յես Պյոտր Անդրեյիչի վերքի մասին ձեզ վոչինչ չգրեցի, վորպեսզի իզուր չլիսեցնեմ ձեզ և հիմա իմանում եմ, վոր տիրուհին, մեր մայր Սելդույա Վասիլևնան առանց իմ գրելու ել վախից հիվանդացել ե և յես պետք ե ազոթք անեմ նրա առողջության համար: Իսկ Պյոտր Անդրեյիչը վերալուրջ եր աջ ուսի տակ՝ կրծքից, վոսկորի հենց տակը, մեկ ու կես վերջուկ խորությամբ և նա պառկած եր բերդապետի տանը, ուր մենք նրան գետախից տարանք և նրան բժշկում եր ախտեղի վարսալիք Ստեպան Պարամոնովը, և Պյոտր Անդրեյիչը հիմա, սխառ ասածու, առողջ ե և նրա մասին բացի լավից ուրիշ գրելու բան չկա: Մեծավորները, ինչպես իմանում եմ, գոհ են նրանից, իսկ Վասիլևսա Յեզորովնայի տանը նա կասես

հարազատ վորդի լինի: Իսկ թե ինչպես յեղավ, վոր այդ տեսակ վորձանք պատահեց, ապա յեղածն անցած ե, մեր յերխառարդը մեղք չունի. ձին վոր ձի յե չորս վոտքով՝ ելի սայթաքում ե: Յեվ բարեհաճել եք գրել, վոր ինձ կուղարկեք խոզ արածացնելու. այդ ել ձեր աղնլական կամքը գիտի: Յեվ ընդ այսմ վողջունում եմ խոնարհաբար:

Ձեր հավատարիմ ճորտ՝ Արխիպ Սամելիչ»:

Բարի ծերունու գրությունը կարդալիս յես չեյի կարող մի քանի անգամ չժպտալ: Յես ի վիճակի չեյի պատասխանել հորս, իսկ մորս հանդատացնելու համար Սամելիչի նամակն ինձ բավարար թվաց:

Այդ ժամանակից սկսած իմ գրությունը վոխակեց: Մարիա իմանովնան համարյա թե չեր խոսում ինձ հետ և ամեն կերպ աշխատում եր խուսափել ինձնից: Բերդապետի տանը ինձ համար պատ դառավ: Հետզհետե յես սովորեցի տանը մենակ նստել: Սկզբում Վասիլևսա Յեզորովնան այդ բանի համար հանդիմանում եր ինձ, սակայն տեսնելով իմ համառությունը, ինձ հանդիստ թողեց: Իման Յուզմիչի հետ հանդիպում եյի միայն ըստ ծառայության պահանջի: Շվարքիներ հազվադեպ եյի հանդիպում և՛ ակամա, քանի վոր նրա մեջ յես նկատում եյի դեպի ինձ ուղղված թաղուն թշնամանք, վոր և հաստատում եր իմ կասկածները: Իմ կյանքն անտանելի դարձավ ինձ համար: Յես ընկա մոայլ մտածմունքների մեջ, վոր արդյունք եր մենակության և անդործումության: Սերս բորբոքից առանձնության մեջ և քանի զնաց գրության: Սերս կորցրի ընթերցանության և գրականության սերը: Հոգիս ընկճվեց: Յես վախենում եյի, թե կամ կխլազարկեմ, կամ կսկսեմ անտակ կյանք վարել: Անտանալ դեպքերը, վոր կարևոր ազդեցություն ունեցան իմ ամբողջ կյանքի վրա, հանկարծ իմ հոգուն մի ուժեղ ու բարեբար ցնցում տվին:

ՊՈՒԳԱԶՈՎՇԵՒՆԱ՝

Դուք, ջահել աղերք, լսեցե՞ք մեզ,
Թե մենք՝ ծերերս հին ինչ կտատենք ձեզ:
Յերգ

Նախքան անցնեմ նկարագրելու արտասովոր դեպքերը, վորոնց ինքս ակամատեսս յեղա, յես պետք է մի քանի խոսք ասեմ այն դրուժյան մասին, վորի մեջ դառնվում եր Որենբուրգի նահանգը 1773 թվի վերջին:

Սույն լայնարձակ և հարուստ նահանգում բնակվում եյին բազմաթիվ կիսալայրենի ժողովուրդներ, վորոնք միայն վերջերս եյին ճանաչել ուստական թագավորների դերիշխանությունը: Նրանց մշտական խռովությունները, որենքներին և քաղաքացիական կյանքին անսովոր լինելը, թեթևամտությունն ու դաժանությունը անընդհատ հակողություն եյին պահանջում կառավարության կողմից՝ նրանց հնազանդության մեջ պահելու համար: Բերդերը չինված եյին հարմար վայրերում և բնակեցված եյին մեծ մասամբ կաղակներով՝ Յաիկի ափերի վաղեմի տերերով: Բայց Յաիկի կաղակները, վորոնք պետք է պահպանեյին այս յերկրի անդորրությունն ու անվտանգությունը, մի առ ժամանակ հետո իրենք դարձան կառավարության համար անհանգիստ ու վտառամտ հպատակներ: 1772 թվին խռովություն առաջացավ նրանց գլխավոր քաղաքում: Դրա պատճառն այն խիստ միջոցներն եյին, վոր ձեռնարկել եր դեմեքալ-մայոր Տրաուբենբերգը, վորպեսզի պատշաճ հնազանդության բերի գործին: Հետևանքն յեղել եր Տրաուբենբերգի բարբարոսական սպանությունը, կառավարման ինքնակամ սիտիսիսությունը և վերջապես բունտի խաղաղացումը կարտեջով և դաժան պատիժներով:

Այս ամենը պատահել եր իմ՝ Բերդերսկի բերդը դալուց մի քանի ժամանակ առաջ: Ամեն ինչ արդեն հանդարտ եր կամ թվում եր թե՛ այդպես է. իշխանությունը չափազանց հեշտ հավատաց նենդ խռովարարներին կարծեցյալ զղջմանը, վորոնք թագուն դա-

վեր եյին նյութում և հարմար առիթի սպասում՝ անկարգությունները վերակենդան համար:

Վերադառնում եմ իմ պատմությանը:

Մի անգամ յերեկոյան (1773 թվի հոկտեմբերի սկզբին եր աղբ) յես միայնակ նստած եյի տանը, աչնախային քամու վորոնցը լսելով և պատահանից դիտելով լուսնի մոտով փախչող սմարերը: Յեկան և ինձ կանչեցին բերդապետի անունից: Յես խալոյն դնացի: Բերդապետի մոտ յես տեսա Շվարբինին, իվան իդնատիչին և կաղակներին ուրյադնիկին: Սենյակում չկային վո՛չ վաարիլաա Յեդոթովնան, վոչ ել Մարիա իվանովնան: Բերդապետն ինձ բարեկց մտահոգ դեմքով: Նա դուռը փակեց, բոլորին նստեցրեց, բացի ուրյադնիկից, վորը կանգնած եր դռների մոտ, — ասլա դրպանից մի թուղթ հանեց և ասաց մեզ. «Պարոնայք սպաներ, կարեւոր նորություն: Լսեցե՞ք, թե ինչ է գրում գեներալը»: Այդ խոսքերի հետ նա ակնոցները դրեց և կարդաց հետեւյալը.

«Բերդերսկի բերդի պարոն բերդապետ կապիտան Միրոնովին.

Գաղտնի

Այսու հայտնում եմ, վոր պահակային հակողությունից փախած Դոնի կաղակ և հերձվածող Յեմելյան Պուդաչովը աններելի հանդուժյամբ իր վրա ընդունելով հանգուցյալ արքա Պյոտր III-ի¹ անունը, չարագործների խումբ և հավաքել իր շուրջը և խռովություն հարուցել Յաիկի գյուղերում և արդեն գրավել ու ալերել է մի քանի բերդեր, ամեն տեղ կողոպուտներ և սպանություններ կատարելով: Վասն վորո, սույն գրությունն ստանալով, պարոն կապիտան, անհապաղ պետք է պատշաճ միջոցներ ձեռք առնեք հիշյալ չարագործին և ինքնակոչին հետ մղելու, իսկ թե հնարավոր է՝ նրան խալառ վոչնչացնելու, յեթե նա կչարժվի դեպի ձեր հոգացությանն հանձնված բերդը»:

«Պատշաճ միջոցներ ձեռք առնել, — ասաց բերդապետը ակնոցները հանելով և թուղթը ծալելով: — Լսո՞ւմ ես, ասե՛լն է

1 Յեմելյան կաղակներից կազմված զորամասերում:

2 Պյոտր III (1728—1762)—ուսաց կայսր, վորին, մոտ մի տարի թագորդելուց հետո—1762 թ. դահլիշից արեց իր կինը՝ հեռագայում Յեկատերինա II-ը և կարճ ժամանակից հետո սպանեցին վերջինիս համախոհները:

1 Տարական միապետությունը Պուդաչովի անունից կազմած այս արքահառելի բառով է վորակել 1773—75 թ. թ. դուրդացիական մեծածավալ հեղափոխական ապստամբությունները Ռուսաստանի մի շարք նահանգներում:

հեշտ: Չարագործը, ինչպես յերևում է՝ զորեղ է, իսկ մենք ուսնենք ընդամենը հարյուր յերեսուն մարդ, չհաշված կաղախներին, վորոնց վրա հույս դնել չի կարելի, խաթրիդ չգլխալի, Մակսիմիչ: (Ուրյադնիկը քմծիծաղ տվեց): Բայց ճար չկա, պարոնա՛յք սպաներ: Ճշտապահ յեղեք, պահակներ ու գիշերադետներ նշանակեք: Իսկ հարձակման դեպքում դարպասները ծածկեք և զինվորներին դուրս բերեք: Դո՛ւ, Մակսիմիչ, ուշի-ուշով հետևիր քո կաղախներին: Թնդանոթը կարգի բերեք ու մի լավ մաքրեք: Իսկ վոր ամենից կարևորն է, այս բոլորը զաղտնի պահեք, վոր պետի բերդի մեջ վոչ վոք այդ մասին ժամանակից չուտ չիմանա»:

Այս հրամանները տալով Իվան Կուզմիչը մեզ արձակեց: Յես դուրս յեկա Շվաբրինի հետ միասին, խոսելով մեր լսածի մասին: — «Ի՞նչ ես կարծում, տա ինչո՞վ կվերջանա», — հարցրի յես նրան: «Աստված գիտե, — պատասխանեց նա. — տեսնենք: Առայժմ առանձին կարևոր վոչ մի բան չեմ տեսնում: Իսկ յեթե...»: Այդ ասելով նա մտածումների մեջ ընկավ և անխույժ կերպով սկսեց սուրբ Գրանսիական մի արխա՛:

Չնայած մեր բոլոր նախազուգույթյուններին, Պուզաչովի յերևան դալու լուրը տարածվեց բերդում: Թեպետ և Իվան Կուզմիչը չափազանց հարգում էր իր ամուսնուն, սակայն վոչ մի դեպքում նրան չեր հաղորդի այն զաղտնիքը, վոր իրեն հալատացել էյին ըստ ծառայության: Գնեկրալից նամակն ստանալուն պես նա բավական հմուտ ճանապարհ էր դրել Վասիլիսա Յեզորովնային, ասելով նրան, թե իբր հայր Գերասիմը Որենբուրգից ինչ վոր խիստ զարմանալի տեղեկություններ է բերել, վոր պահում է վորպես մեծ զաղտնիք: Վասիլիսա Յեզորովնան խելույն և եթ ցանկացել էր հյուր դնել յերեցկնոջ մոտ և Իվան Կուզմիչի խորհրդով իր հետ վերցրել էր Մաշային, վորպեսզի նա միայնակ մնալով չձանձրանա:

Իվան Կուզմիչը մնալով տան կատարյալ տերը, խելույն և եթ ուղարկել էր մեր հետևից, իսկ Պալաչկային փակել էր նկուղում, վորպեսզի նա չկարողանա լսել մեր խոսածը:

Վասիլիսա Յեզորովնան տուն է վերադառնում, չկարողանալով վորեւե բան իմանալ յերեցկնոջից և տեղեկանում է, վոր իբր

բացալայության ժամանակ Իվան Կուզմիչի մոտ խորհրդակցություն է յեղել և վոր Պալաչկայի վրա դուռը կողպել են: Նա գլխի յե ընկնում, վոր ամուսինն իրեն խաբել է և սկսում է նրան հարց ու վորձ անել: Բայց Իվան Կուզմիչը պատրաստվել էր հարձակման: Նա բնավ չի շիտթվում և յեռանդուն կերպով պատասխանում է իր հետաքրքրմանը կենակցին. «Լսում ես, ա՛յ կին, մեր կնանոց խելքին փել է վառարանները հարդով վառել և քանի վոր դրանից կարող է դժբախտություն առաջանալ, ուստի յես խիստ հրաման տվի, վոր սրանից հետո կնանիք վառարանները հարդով չվառեն, այլ վառեն ցախ ու խոխի»: — «Հապա դու ինչո՞ւ համար ես Պալաչկային փակել, — հարցնում է բերդապետի կինը: — Ինչո՞ւ համար է ինչ՞ աղջիկը նկուղում նստել մինչև մեր դալը»: — Իվան Կուզմիչն անպատրաստ է լինում այդ հարցին. նա կմկմում է և ինչ վոր անկապ խոսքեր քթմնջում: Վասիլիսա Յեզորովնան տեսնում է իր ամուսնու խարդախանքը, սակայն լավ իմանալով, վոր նրանից վոչինչ չի իմանա, ընդհատում է հարց ու վորձը և խոսք ձգում աղած վարունքների մասին, վոր Ակուլինա Պամֆիլովնան պատրաստել էր միանգամայն առանձնահատուկ յեղանակով: Ամբողջ գիշերը Վասիլիսա Յեզորովնան չի կարողանում քնել և վոչ մի կերպ գլխի չի ընկնում, թե ամուսնու մտքումն ի՞նչ կարող էր լինել, վոր ինքը չպիտի իմանար:

Մյուս ուրը, պատարագից վերադառնալիս նա տեսնում է Իվան Իզնատիչին, վորը թնդանոթի միջից դուրս էր հանում փախսներ, մանրիկ քարեր, տաշեղներ, փայտի կտորներ և ամեն տեսակ աղբ, վոր յերեկանները խցկել էյին թնդանոթի մեջ: «Արդյոք ի՞նչ կարող են նշանակել այս ռազմական նախապատրաստությունները, — մտածում է բերդապետի կինը. — չլինի՞ հարձակում է սպասվում կիրդիկների կողմից: Բայց մի՞թե Իվան Կուզմիչն ինձից կթագցներ այդ տեսակ չնչին բաները»: Նա ձայն է տալիս Իվան Իզնատիչին, հաստատ գիտալորություն ունենալով նրանից դուրս կորզել այն զաղտնիքը, վոր տանջում էր նրա կանացի հետաքրքրությունը:

Վասիլիսա Յեզորովնան նրան մի քանի նկատողություն է անում տնտեսության վերաբերյալ, ինչպես մի դատավոր, վորը քննությունն սկսում է կողմնակի հարցերով, վորպեսզի նախ թմբեցնի պատասխանողի գգուչությունը: Հետո, մի քանի բոպի

լուելով, նա խոր հոգոց ե հանում և ասում զլուխն ուրորելով.
«Տեր իմ աստված. տես թե ի՞նչ նորութիւններ կան: Սրա վերջն
ի՞նչ կլինի»:

— Ե՛, մերըս, — պատասխանում ե իվան Իգնատիւն: — Աստ-
ված վողորմած ե. բաւական զինվորներ ունենք, վառողը՝ շատ,
թնդանոթն ել յես մաքրեցի: Գուցէ թե հաջող զիմադրութիւն
ցուցց տանք Պուզաչովին: Ասածու պահած զատը զայլը չի ուտի:

«Իսկ ի՞նչ մարդ ե այդ Պուզաչովը», — հարցնում ե բերդա-
պետի կինը:

Այդտեղ իվան Իգնատիւն նկատում ե, վոր բերանից խոսք ե
թոցրել և կծում ե լեզուն: Բայց արդեն ուշ եր: Վասիլիսա Յե-
զորովնան նրան հարկադրում ե ամեն ինչ խոստովանել, խոսք
տալով վոչ վոքի չպատմել այդ մասին:

Վասիլիսա Յեզորովնան պահում ե իր խոստումը և վոչ վոքի
վոչ մի բառ չի ասում, բացի յերեցիկնովից, այն ել միայն այն
պատճառով, վոր նրա կովը տակաւին տախտատան եր գնում ա-
րածելու և կարող եր ընկնել չարադործների ձեռքը:

Շուտով բոլորը խոսեցին Պուզաչովի մասին: Տարբեր լուրեր
էին լսվում: Բերդապետը ուրյաղնիկին հանձնարարութեամբ ու-
ղարկեց հարեան գյուղերն ու բերդերը՝ ամեն ինչի մասին մի բալ
հետախուզելու: Ուրյաղնիկը վերադարձավ յերկու օրից և հարչո-
նեց, վոր բերդից վաթսուս վերստի վրա նա բաղմաթիվ կրակներ
ե տեսել և բաշխիւններից լսել ե, վոր անհայտ ուշի ե գալիս:
Բայց դրական վոչինչ նա չկարողացավ հայտնել, վորովհետեւ
վախեցել եր ամբիջի հեռուն գնալ:

Բերդում, կազակները մեջ նկատելի յեր մի անսովոր հու-
զում. բոլոր վողոցներում նրանք խումբ-խումբ հախաբում էին,
ցած ձայնով խոսում միմյանց հետ և ցրվում — վորեւե դրագուն
կամ կայազորային զինվոր տեսնելով: Նրանց մոտ լրտեսներ ու-
ղարկեցին: Յուլայը՝ մկրտված կաթիկը բերդապետին մի կա-
րեւոր տեղեկութիւն հայտնեց: Յուլայի ասելով ուրյաղնիկի
ցուցմունքները սուտ էին. հետախուզութիւնից վերադառնալուն
պես նենդամիտ կազակը հայտարարել եր իր ընկերներին, վոր նա
յեղել ե խռովարարների մոտ, ներկայացել ե նրանց ամենազխա-
վոր առաջնորդին, վորը նրան իր աջն ե ամէլ և յերկար խոսել ե
նրա հետ: Բերդապետն անմիջապէս պահակները հակողութեան
տակ դրեց ուրյաղնիկին, իսկ Յուլային նշանակեց նրա տեղ: Այս

նորութիւնը կազակներն ընդունեցին ակնհայտ անբավականու-
թեամբ: Նրանք բարձրագոյ տրտունջներ էին հայտնում և իվան
Իգնատիւնը՝ բերդապետի կազաղութիւնը կատարողը, իր ա-
կանջով լսել եր, թե ինչպէս նրանք ասել են. «Սպասիր, տես թե
քեզ ի՞նչ կանենք, բերդի մուկ»: Բերդապետն ուղում եր հենց
նույն օրն և եթ հարցաքննել վալանաւորին, սակայն ուրյաղնի-
կը փախել եր պահակների ձեռքից, — համանորեն ի՞նչ համախոհ-
ները ողնութեամբ:

Մի նոր հանգամանք ուժեղացրեց բերդապետի անհանգստու-
թիւնը. բռնվել եր մի բաշխիւր, հետն ել՝ վողովեցուցիչ թոռ-
ցիկներ: Այս առիթով բերդապետը մտադիր եր նորից հախաբել
իր սպաներին և դրա համար ուղում եր մի վորեւե բարեւոտ պա-
տըրվակով նորից հեռացնել Վասիլիսա Յեզորովնային: Բայց
քանի վոր իվան Կուզմիւն շատ պարզասիրտ և ճշմարտախոս մի
մարդ եր, ուստի այլ յեղանակ չգտավ, քան մի անդամ արդեն
գործադրածը:

«Լսո՛ւմ ես, Վասիլիսա Յեզորովնա, — ասաց նա հազալով: —
Ասում են հայր Գերասիմը քաղաքից տաքել ե...» — «Հերի՛ք ե
սուտ խոսես, իվան Կուզմիւն, — ընդհատեց բերդապետի կինը. —
իմանում եմ, դու ուղում ես խորհրդակցութիւն գումարես և ա-
ռանց ինձ խոսեք Յեմելյան Պուզաչովի մասին, բայց ինձ չե՛ս
խորհի»: — Իվան Կուզմիւն աչքերը չոնեց: «Ե՛հ, այ կնիկ, — ասաց
նա, — յեթե դու ամեն ինչ արդեն գիտես, ապա լսով ե մնաս.
մենք քո ներկայութեամբ ել կխոսենք»: — «Այդպէս, — պատասխա-
նեց կինը, — քո ի՞նչ գործն ե խորամանկութիւն բանացնել. դե՛հ,
մարդ ուղարկիր սպաների հետեից»:

Մենք նորից հախաբելեցինք: Իվան Կուզմիւն կնոջ ներկայու-
թեամբ կարդաց Պուզաչովի վոչը, գրված մի վորեւե կրատա-
գետ կազակի ձեռքով: Այնպէս չհայտարարում եր իր մտա-
դրութեան մասին՝ անհապաղ հարձակել մեր բերդի վրա. կա-
զակներին և զինվորներին հրաւիրում եր իր հրոսակաւաճի մեջ,
իսկ հրամանատարներին հորդորում եր չդիմադրել, հակառակ
դեպքում՝ մահապատիժ ապրումալով: Կոչը գրված եր կոպիտ,
սակայն խիստ արահայտութիւններով և պետք ե վտանգաւոր
տպաւորութիւն: Թողնել հասարակ մարդկանց մտքերի վրա:

«Տե՛ս, ի՞նչ սրիկանս ե, — բացականչեց բերդապետի կինը, —
ինչեւ ե դեռ համարձակվում մեզ առաջարկել: Նրան զիմաւորել

դուրս գալ և նրա վտարելի տակ դնել դրոշակները: Շո'ւն չան վորդի: Ախր մի՞թե նա չգիտի, վոր մենք ահա քառասուն տարի յե ծառայութեան մեջ ենք և փառք ատածո, ամեն ինչ տեսել ենք: Մի՞թե գտնվել են այնպիսի հրամանատարներ, վորոնք լսել են այդ սրիկային»:

— Կարծեմ՝ չսխալուի և լինեն, — սրտասխանեց Իվան Կուզմիշը: — Բայց ասում են չարագործն արդեն շատ բերդեր և դրաւիւ:

«Յերեւում և, վոր նա իրոք ուժեղ է», — նկատեց Շիվարինը:

— Ա՛յ, հիմա կիմանանք նրա իսկական ուժը, — ասաց բերդապետը: — Վասիլի՛սա Յեգորովնա, տուր ինձ ամբարի բանալին: Իվան Իգնատիչ, հասար մի ալտուղ բեր բաշկիրին, և Յուլային ել հրամայի՝ մտրակներն առնի դա:

«Կա՛յ, Իվան Կուզմիշ, — ասաց բերդապետի կինը տեղից վեր կենալով: — Թող յես Մաշային տնից մի տեղ տանեմ. թե չե կլսի աղաղակը և կբախենա: Ասենք յես ել, ճիշտն ասած, դուրս չունեմ հարցաքննութեան: Բարո՛ւ մնաք»:

Տանջելով հարց ու փորձ անելը հնուամեջ այնպես էր արմատացած դատաւարութեան սովորութիւններում, վոր այն վորջընչացնող բարեկար հրովարտակը յերկար ժամանակ մնում էր ատանց վորեւե աղբեցութեան: Կարծում էին, վոր հանցավորի անձնական խոստովանութիւնն անհրաժեշտ էր նրա մեղքը լիովին ապացուցելու համար, — մի միտք, վոր վորջ միայն անհիմն է, այլև միանգամայն հակառակ իրավարանական առողջ դատողութեան, քանի վոր, յեթե դատաւարայալի ժխտումը չի ընդունվում վորպես ապացույց նրա անմեղութեան, ապա նրա խոստովանութիւնն առավել ևս չսխալուի և ապացույց լինի նրա մեղավորութեան: Մինչև իսկ հիմա ել ինձ առիթ է լինում լսել ծեր դատավորների, վորոնք ախտոսում են բարբարոսական սովորութեան վերացումը: Մեր ժամանակ սակայն, վորջ վորջ չեք կասկածում տանջելով հարցաքննելու անհրաժեշտութեան մեջ, վորջ դատավորները, վորջ ել դատաւարայալները: Յեւ վորջպես, բերդապետի հրամանը մեղինից վորջ վորջ չլարմացրեց և չանհանգստացրեց: Իվան Իգնատիչը գնաց բաշկիրի հետեից, վորին ամբարում փակել էր բերդապետի կինը, և մի քանի բոսիցից հետո կալանավորին բերին նախասենյակ: Բերդապետը հրամայեց, վոր նրան ներկայացնեն իրեն:

Բաշկիրը դժվարութեամբ քայլեց չեմքից (նրա վտարելը կոճղի մեջ էին) և հանելով իր յերկար գլխարկը, կանգ առավ դռների մոտ: Յես նայեցի նրան և ցնցվեցի: Յերբեք չեմ մոռանա այդ մարդուն: Յոթանասունից անց կլինեք: Վորջ քիթ ուներ, վորջ՝ ականջներ: Գլուխը անլիւս էր. մորուքի փոխարեն ցցված էին մի քանի սպիտակ մազեր. կարճահասակ էր, վտիտ ու կորացած, սակայն նեղլիկ աչքերում դեռեւ կրակ էր փայլում: «Եհէ՛», — ասաց բերդապետը, արտաքին սոսկալի նշաններից ճանաչելով 1741 թվին սրաժակած խոռվարներին մեկին: — Բանից դուրս ե գալիս, վոր դու՝ հի՛ն գայլ, մեր թակարդներում յեղել ես արդեն: Ասել և, թե դու առաջին անգամը չե, վոր ապստամբ ես արդեն: Ասա՛, ո՞վ ե քեզ ուղարկել այս կողմերը»:

Ծեր բաշկիրը լուռ էր և կատարյալ անմտութեամբ նայում էր բերդապետին: «Ի՞նչ ես լուել, — չարոնակեց Իվան Կուզմիշը. — Ձլինի՞ թե ուսերեն վորջ մի խոսք չես հասկանում: Յուլայ՛յ, հասար մի ձեռք լեղվով հարցրու նրան, թե ո՞վ ե նրան ուղարկել մեր բերդը»:

Իվան Կուզմիշի հարցը Յուլայը կրկնեց թաթարների լեզվով, բայց բաշկիրը նրան նայում էր նույն արտահայտութեամբ և վորջ մի բառով չսրտասխանեց: «Յախի՛», — ասաց բերդապետը. — յես քեզ կխոսացնեմ: Տղե՛ք, հապա հանեք սրա գլխավոր խալաթը և մեջքը մի լավ շերտեցեք: Դեղ տեսնեմ, Յուլայ՛յ, նրան մի լա՛ւ...»

Յերկու ինվարիդներ սկսեցին հանել բաշկիրի շորերը: Թշվառականի դեմքը անհանգստութիւն էր արտահայտում: Յերեսաների ձեռքն ընկած փոքրիկ գազանի սեւ նա իր շուրջն էր նայում: Իսկ յերբ ինվարիդներից մեկը բռնեց նրա ձեռքերից և մոտեցնելով իր վզին ծերունուն շալակն առավ, իսկ Յուլայը մըտ-

1 Հեղինակը նկատի ունի բաշկիրների ապստամբութիւնը, վոր տեղեց 1735 թ. մինչև 1741 թ.: Բաշկիրները IX դարից բնակութիւն էին հաստատել Մերձուրալյան յերկրամասում և դիմադրելով ռուսական դադութեամբ, տեղ չաք ապստամբութիւններ բարձրացրին, վորոնք միշտ ել ճնշվում էին մամնադաժան յեղանակներով: Մառնավորապես 1740—1741 թ. թ. ապստամբութիւնը ճնշելու միջոցով հրաճարակ յեղավ 696 դուդ, մոտ 30 հազար բաշկիրներ մահադատեց յենթարկվեցին և կամ բռնութեամբ ստրուկներ դարձան: Սարսափ տարածելու նպատակով ռուս կառավարութիւնը կորել սովեց չարժման ակտիվ մասնակիցների (301 հոգու) զիւրն ու ականջները:

բախը տարալ-բերեց՝ այն ժամանակ բաշխիրն սկսեց թուլլ ու աղբարու ձայնով հառաչել և գլուխը շարժելով բացեց բերանը, ուր լեզվի փոխարեն մտի մի կարճ կտոր եր շարժվում:

Յերբ հիշում եմ, վոր այս դեպքը պատահեց իմ կյանքում և վոր արդ յես յեկել հասել եմ Ալեքսանդր արքայի¹ հեղաբարո թաղավորության ուրերը, չեմ կարող չգարմանալ լուսավորության արադ նվաճումների և մարդասիրության կանոնների տարածման վրա: Յերխառաարդ, յեթե իմ այս գրությունները կընկնեն քո ձեռքը, հիշիր, վոր լավագույն և ամենահաստատ փոփոխությունները միայն նրանք են, վորոնք առաջ են դալիս բարքերի բարեխալովից, առանց վորևե բռնի ցնցումների:

Բոլորը ապշած մնացին: «Ե՛հ, — ասաց բերդապետը. — յերեւում ե, վոր արանից մենք բան չենք կարող իմանալ: Յուրա՛յ, բաշխիրն տար ամբարը: Իսկ մենք, պարոնայք, դեռ խոսելիք ունենք»:

Մենք սկսեցինք քննության առնել մեր դրությունը, յերբ հանկարծ վասիլիսա Յեդորովնան սենյակի մտալ շնչաստար և արտակարգ հուրլած տեսքով:

«Յդ ի՞նչ ե քեզ պատահել», — հարցրեց ապշած բերդապետը:

— Յեդրայրներս, անբախտություն... — պատասխանեց վասիլիսա Յեդորովնան: — Նիժնեոգերնի բերդը վերցրել են այսօր առավոտ: Հայր Գերասիմի գործավորը հենց հիմա վերադարձավ այնտեղից: Նա տեսել ե, թե բերդն ինչպես են վերցրել: Բերդապետին ու բոլոր սպաներին կախել են: Բոլոր զինվորներին գերի յեն վերցրել: Ուր ե, ուր չե, չարագործներն այստեղ ել կզան:

Մնաստեղի լուրն ինձ սաստիկ ցնցեց: Նիժնեոգերնի բերդի պետը, մի խաղաղ ու համեստ յերխառաարդ, ծանոթ եր ինձ, սրանից յերկու ամիս առաջ նա իր ջահել կնոջ հետ յեկալ Որենբուրգից և իջևանեց իման Կուզմիչի տանը: Նիժնեոգերնի բերդը դանդաղ եր մեզնից քսանհինգ վերստի վրա: Ժամ առ ժամ մենք պետք ե սպասեցինք Պուզաչովի գլուխին: Մարիա Իվանովնայի վիճակը վառ կերպով պատկերացավ ինձ և սիրտս այնպե՛ս ճմլվեց:

— Լսե՛ք, իման Կուզմիչ, — ասացի յես բերդապետին: — Մեր պարտքն ե պաշտպանել բերդը մինչև վերջին շունչը. այս

¹ Ալեքսանդր I-ը թագավորել ե 1801—1825 թ.:

մասին խոսելն անգամ ալելորդ ե: Բայց պիտո յե մտածել կանանց անխառնության մասին: Նրանց Որենբուրգ ուղարկեցեք, յեթե ճանապարհը դեռևս ազատ ե, կամ մի հեռավոր, ավելի վստահելի բերդ, ուր չարագործները չկարողանային հասնել: Իման Կուզմիչը դարձավ իր կնոջն ու ասաց նրան.

«Լսո՛ւմ ես, ա՛յ կին. իսկապես վոր, ձեզ հետու չուղարկե՞նք՝ մինչև մենք խռովարարների հախիցը դանք»:

— Ե՛հ, դատարի բան ե, — ասաց բերդապետի կինը: — Ո՛ւր ե այն տեսակ բերդ, վորտեղ գնդակները չեն հասնում: Բե-լոգորսկի բերդն ինչո՞վ ե անհուսալի: Փա՛ռք ասածու, ահա քրտաներկու տարի յե, վոր ասլրում ենք այստեղ: Բաշխիրներին ել ենք տեսել, կիրգիզներին ել. յերևի Պուզաչովից ել կարողանանք պաշտպանվել:

«Լա՛վ, — առարկեց իման Կուզմիչը. — հոժար եմ, մնա, քանի վոր վստահ ես մեր բերդի վրա: Բայց Մաչային ի՞նչ անենք: Լավ ե, յեթե ասենք զխմացանք կամ դրսից սիկուրս¹ հասալ. իսկ յեթե չարագործները բերդը վերցնեն»:

— Դեհ, այն ժամանակ... — Այդ խոսքերի հետ վասիլիսա Յեդորովնան կարմրեց և լոեց սաստիկ հուզմունքից:

«Վո՛չ, վասիլիսա Յեդորովնա, — չարունակեց բերդապետը, նկատելով, վոր իր խոսքերը թերևս առաջին անգամ նրա կյանքում աղբեցություն ունեցան կնոջ վրա: — Միտք չունի Մաչաքում աղբեցություն ունեցան կնոջ վրա: — Միտք չունի Մաչաքին այստեղ թողնել: Յե՛կ, նրան Որենբուրգ ուղարկենք իր սանամոր մոտ. այնտեղ բախկան գորք ու թնդանոթ կա, և՛ պարիսպներն ել քարից են: Քեզ ել խորհուրդ կտայի նրա հետ այնտեղ գնայի. չատ ել թե դու պատալ ես, բայց կտանես ի՞նչ կլինի քո ուրը, յեթե Փորտեցիան² հարձակամբ վերցնեն»:

— Լավ, — ասաց բերդապետի կինը, — թող քո ասածը լինի, Մաչային ուղարկենք: Իսկ ինձ՝ մտքովդ անգամ չանցկացնես խնդրելու. չե՛մ գնա: Հարկ չկա այս հասակիս քեզնից բաժանվել և ոտար վայրերում միայնակ դերեզման փնտրել. միասին ասլրել ենք, միասին ել կմեռնենք:

¹ Սիկուրս (18-րդ դարի ռազմական տերմին) — աղետության ուղարկվող դրք: Ֆրանսերեն secours — սեկուրս բառի աղետալած ձևն ե:

² Փորտեցիա — ամրոց, ամրություն:

«Այդ եւ խելքի բան ե, — ասաց բերդապետը: — Դեհ, կարիք չկա դանդաղելու: Գնա Մաշային պատրաստիր ճանապարհի համար: Վաղը առավոտ լուսանալուն պես նրան կուղարկենք: Հետը ուղեկցորդ պահակներ կընենք, թեպետ և ավելորդ մարդիկ չունենք: Իսկ ո՞ւր ե Մաշան»:

— Ակուլինա Պամֆիլովնայի մոտ ե, — պատասխանեց բերդապետի կինը: — Նա իրեն վատ զգաց, հենց վոր իմացավ Նիժնեդներն բերդի առումը. վախենամ թե հիվանդանա: Տեր իմ, աստված, այս ի՞նչ ուրի հասանք:

Վատիկա Յեզուիտներն զնաց հոգալու աղջկա մեկնումը մասին: Բերդապետի մոտ խոսակցությունը չարունակից, բայց յես այլևս չէյի մասնակցում և վոչինչ չլսեցի: Մարիա Իվանովնան յերեկաց ընթրիքին՝ գունատ ու լացակամած դեմքով: Մենք լուռ ընթրեցինք և անդանից վեր կացանք սովորականից շուտ. հրաժեշտ տալով աճյուղ ընտանիքին, ամեն մարդ իր տունը գնաց: Բայց յես դիտմամբ մոռացա սուսերս և հետ դարձա այն վերջնելու. յես նախադրում եյի, վոր Մարիա Իվանովնային մենակ կգտնեմ: Իրոք, նա ինձ դիմաւորեց դռների մոտ և տվեց սուսերս: «Մնա՛ք բարով, Պյոտր Անդրեյիչ, — ասաց նա արցունքն աչքերին. — ինձ Որենդուրդ են ուղարկում: Վողջ կենաք և բախտավոր լինեք. մի գուցե աստված հաջողի մեզ նորից տեսնել միմյանց, իսկ յեթե վոչ...» Այս ասելով նա հեկեկաց: Յես գրկեցի նրան: — «Գնաս բարով, իմ հրեշտակ, — ասացի յես, — գնաս բարով, իմ սիրելի, իմ ցանկալի: Ինչ եւ վոր ինձ պատահի, հավատա, վոր իմ վերջին միտքը և վերջին աղոթքը քո մասին կլինի»: Մաշան լաց յեղավ, փարվելով իմ կրծքին: Ձեռմ համբուրեցի նրան և շտապ դուրս յեկա սենյակից:

Հ Ր Ո Ս Ո Ւ Մ Ը

Ա՛խ, գլուխ իմ, գլուխ իմ,
Ծառայողի գլուխ իմ.
Ծառայեց գլուխս ուղիղ
Յերեսուն և յերեք տարի:
Բայց, ախ, նա չը վաստակեց
Իրեն վոչ խնդ, վոչ եւ շահ,
Վոչ իր մասին խոսք բարի,
Վոչ եւ բարձր աստիճան:
Գլուխս իմ խեղճ վաստակեց
Յերկու բարձր սլուներ լուկ,
Վրան՝ Թղի միջնախայտ,
Մեկ եւ՝ մեռաքս մի ողակ:

Ժողովրդական յերգ

Այդ գիշեր յես չքնեցի և չհանկեցի: Յես մտադիր եյի լուսաբացին գնալ բերդի դարպասները մոտ, վորտեղից պետք ե ճանապարհովեր Մարիա Իվանովնան, և այնտեղ վերջին անգամ հրաժեշտ տալ նրան: Յես մեծ փոփոխություն եյի դրում իմ մեջ. հոգուս տաղնապն ինձ համար ավելի դյուրին եր, քան այն վհատությունը, վորի մեջ յես վերջերս ընկղմած եյի: Բաժանման թախծի հետ իմ մեջ միախառնվում եյին և՛ անորոշ, սակայն քաղցր հույսերը, և՛ վտանգների անհամբեր սպասումը, և՛ ագնիվ պատվասիրության զգացումը: Գիշերն աննկատելի անցավ: Յես այն ե, ուղում եյի դուրս գալ տնից, յերբ իմ դուռը բացվեց և ինձ ներկայացավ կապրալը, տեղեկացնելով, վոր մեր կազակները գիշերը դուրս են յեկել բերդից, իրենց հետ դուռով տանելով Յուլային և վոր բերդի մոտերքն անհայտ ձիավորներ են չքում: Այն միտքը, վոր Մարիա Իվանովնան չի կարողանա ճանապարհովել, սարսափեցրեց ինձ. հասցնել մի քանի կարգադրություններ առի կապրալին և խելոյն շտապեցի բերդապետի մոտ:

Արդեն լուսանում եր: Յես սլանում եյի փողոցով, յերբ Լուսեցի, վոր կանչում են ինձ: Յես կանչ առա: «Ո՞ւր եք գնում, — ասաց իման իգնատիչը ինձ հասնելով: — Իման Կուլմիչը հոգապատենչի վրա յե և ինձ ուղարկեց ձեզ կանչելու: Պուզան

յեկալ» : — «Մարիա Իվանովնան զնա՞ց», — հարցրի յես սրտա-
տրոփ : — «Վո՛չ, — պատասխանեց Իվան Իգնատիչը. — Որեն-
բուրգի ճանապարհը կտրված է, բերդը պաշարված : Բաներս
վատ է, Պյոտր Անդրեյիչ» :

Մէջք դնացինք դեպի հողապատնեշը, վոր մի բնական բարձ-
րութիւն էր, ցանկապատով ամբացված : Այնտեղ արդեն խոնր-
ված էյին բերդի բոլոր բնակիչները : Բերդապահ զորքը կանգնած
էր հրացաններով : Թնդանութիւն յերեկվանից այդտեղ էյին բերել :
Բերդապետը գնում գալիս էր իր ստիակով զորքի առջև : Վը-
տանքի մոտիկութիւնը ծեր ուղմիկին վողեկորում էր արտասո-
վոր արիութեամբ : Տախտատանի վրա, բերդից վոչ հեռու, քա-
նի չափ ձիավորներ էյին շրջում : Թնդում էր, թե կադետներ են,
սակայն նրանց մեջ կային և բաշկիրներ, վորոնց հեշտ կարելի
յէր ճանաչել իրենց լուսանի մորթու գդակներով և կապարճնե-
րից : Բերդապետն իր զորքի առաջն անցավ, գլխավորներին ստե-
լով. «Դե՛հ, իմ սղաներ, այստր պաշտպան կանգնենք մեր մայր
թաղուհուն և ցույց տանք ամբողջ աշխարհին, վոր մենք տղա-
մարդ ենք և մեր յերդումին հաստատ» : Զինվորները բարձր ձայ-
նով պատգամատակամութիւն հայտնեցին : Շվաբրինը կանգնել էր
ինձ մոտ և սեւեռուն աչքերով նայում էր թշնամուն : Տախտա-
տանի վրա դեռ ու դեն ընթացող ձիավորները բերդի մեջ շար-
ժում նկատելով, խմբվեցին մի տեղ և սկսեցին խորհրդակցել :
Բերդապետն Իվան Իգնատիչին հրամայեց թնդանութն ուղղել այդ
ամբոխի վրա և ինքը դրեց պատրուկը : Ռումբը վզկալով թռավ
նրանց վրայով, առանց մի վնաս պատճառելու : Զինվորները
ցրվելով խեղճն ենթ աչքից կորան ու տախտատանն ամայա-
ցավ :

Այդ միջոցին հողապատնեշ բարձրացավ Վասիլիսա Յեզո-
րովնան, նրա հետ և Մաշան, վորը չէր ուղեցել հետ մնալ նրա-
նից : — «Հը՛, վո՞նց է, — ասաց բերդապետի կինը : — Բառա-
լիան՝ Ի՞նչպէս է գնում : Հասար թշնամին ո՞ւր է» : — «Թշնամին
հեռու չէ, — պատասխանեց Իվան Կուզմիչը : — Հույս աստված,
ամեն ինչ լավ կլինի : Ի՞նչ է, Մաշա, վախենում ես» : —
«Վո՛չ, հայրիկ, — պատասխանեց Մարիա Իվանովնան. — տա-
նը մենակ ավելի յեմ վախենում» : Այդ խոսքերի հետ նա ինձ

նայեց և ուշ գործ դնելով ժպտաց : Յես ակամա սեղմեցի իմ
սուտերի զատապանը, հիշելով, վոր նախորդակին այն ստացել
եմ նրա ձեռքից, կարծես թե իմ սիրելուն պաշտպանելու հա-
մար : Սիրտս այրվում էր : Ինքս ինձ պատկերացրի նրա ասե-
տը : Յես ծարավի էյի ապացուցելու, վոր արժանի էյի նրա վըս-
տահութանը և անհամբեր սկսեցի սպասել միտակաւ յոպեյին :

Այդ ժամանակ բերդից կես վերստի վրա գտնուող բարձունքի
յետեից ձիավոր նոր խմբեր յերևացին և շուտով տախտատանը
ծածկվեց նիզակներով ու նետ-աղեղներով զինված բազմաթիւ
մարդկանցով : Նրանց մեջ սպիտակ ձի նստած գալիս էր մի
մարդ, կարմիր կափտանը հագին, մերկացրած թուրը ձեռքին.
դա ինքը Պուգաչովն էր : Նա կանգ առավ. նրան չընկալաւ նրան
և ըստ յերևույթին նրա հրամանով չորս ձիավորներ առանձնա-
ցան և ամբողջ թափով քշեցին մինչև բերդը : Մենք ճանաչեցինք
նրանց. մեր դավաճաններն էյին : Նրանցից մեկը գլխարկի վրա
բռնած սահում էր մի թերթ թուղթ, մյուսի նիզակի ծայրին
հագցված էր Յուլայի դուխը, վոր նա թափ ձգելով դեպի մեզ
չպրտեց ցանկապատի վրայով : Դժբախտ կալմիկի գլուխն ընկավ
բերդապետի վրաքերի մոտ : Դավաճանները դուռն էյին. «Մի՛
կրակեք, դո՛ւրս յեկեք թաղավորի առաջ. թաղավորն այս-
տեղ է» :

«Հիմա յես ձեր... — դուաց Իվան Կուզմիչը : — Տղե՛րք,
կրակեցե՛ք» : Մեր զինվորները համադարկ տվին : Նամակը բռնող
կադակը յերեքաց և ձիուց ընկավ. մյուսները հետ շրջեցին ձի-
րի գլուխը : Յես նայեցի Մարիա Իվանովնային. Յուլայի արյու-
նաթաթախ գլխի տեսքից ցնցված և համադարկից խլացած, նա,
թվում էր թե ուշաթափ է : Բերդապետը կապրալին մոտ կան-
գնեց և հրամայեց սղանված կադակի ձեռքից վերցնել թուղթը :
Կապրալը դաշտ դուրս յեկավ և վերադարձավ, իր հետեից քարշ
տալով սղանվածի ձին : Նա բերդապետին հանձնեց նամակը : Ի-
վան Կուզմիչը ինքն իրեն կարգաց այն և ապա պատառոտեց :
Այնինչ՝ խուլարարները, յերևում է, հարձակման էյին պատ-
րաստվում : Շուտով գնդակներն սկսեցին ավալալ մեր ականջնե-
րի տակ և մի քանի նետեր խրվեցին մեզ մոտ՝ դետնի ու ցան-
կապատի մեջ : «Վասիլիսա Յեզորովնա, — ասաց բերդապետը :
— Այստեղ կնկա գործ չկա. Մաշային տար, տեսնում ես աղջիկը
վոչ կենդանի յե, վոչ՝ մեռած» :

1 Աղճատված՝ Փրանսերեն bataille բառից—կռիվ, ճակատամարտ :

Գնդակները տարալի տակ խեղճացած Վասիլիսա Յեզորով- նան աչք ձգեց տախտակների վրա, ուր մեծ շարժում էր նկատ- վում, հետո դարձավ ամուսնուն և ասաց նրան. «Իման Կուզմիչ, մեր կյանքն ու մահը աստծու ձեռքն է. որհնիր Մաչային: Մա- չա, մոտեցիր հայրիկիդ»:

Գունատ ու դողդոջուն Մաչան մոտեցավ Իվան Կուզմիչին, ծռնել չոգեց և գետին խոնարհվեց նրա առաջ: Ծեր բերդապետը յերեք անգամ խաչակնքեց նրան, հետո բարձրացրեց և համբու- րելով, ասաց նրան փոխված ձայնով. «Դե՛հ, Մաչա. բախտավոր յեղիր. աղոթիր աստծուն, նա քեզ չի լքի: Յեթե մի լավ մարդ պատահի՝ աստված ձեզ սեր ու համաձայնություն տա: Այլե- ցեք աճյալես, ինչպես մենք ենք ապրել Վասիլիսա Յեզորովնայի հետ: Դե՛հ, մնաս բարով, Մաչա: Վասիլիսա Յեզորովնա, չուտ արա, տար նրան»: (Մաչան ընկավ նրա վզովը և բարձրաձայն լաց յեղավ): — «Յե՛կ, մենք ել համբուրվենք, — ասաց բեր- դապետի կինը արտասվելով: — Մնա՛ս բարով, ի՛մ Իվան Կուզ- միչ. թողություն տուր ինձ, յեթե յես վորևե բանով վշտացրել եմ քեզ»: «Գնա՛ս բարով, գնա՛ս բարով, մայր, — ասաց բերդա- պետը, գրկելով իր պառավ կնոջը: — Դե՛հ, հերիք ե, գնացեք, ասում եմ՝ տուն գնացեք: Հա՛, յեթե հասցնես, Մաչային սարա- ֆան՝ հագցրու»: Բերդապետի կինը հեռացավ իր աղջկա հետ: Յես նայում եյի Մարիա Իվանովնայի հետևից. նա յետ նայեց և գլխով արեց ինձ: Այդ բուրեյին Իվան Կուզմիչը դեպի մեզ դարձավ և նրա ամբողջ ուշադրությունը կենտրոնացավ թշնամու վրա: Խռովարարները համարվեցին իրենց առաջնորդի մոտ և հան- կարծ ալսեցին ձիերից իջնել: «Հիմա պինդ կացեք, — ասաց բեր- դապետը, — հրոսում կլինի...»: Այդ բուրեյին սոսկալի ճիչ ու ա- դադակ լսվեց, խռովարարները թափով վազեցին դեպի բերդը: Մեր թնդանոթը լցված էր կարտեչով: Բերդապետը սպասեց աճյալան, մինչև նրանք բոլորովին մոտեցան և հանկարծ նորից կրակեց: Կարտեչը դարկեց ամբոխի հենց մեջտեղը: Խռովարար- ները յերկու կողմի վրա չըջվեցին և հետ դարձան: Նրանց ա- ռաջնորդը մենակ մնաց սուղևում... Նա թափահարում էր իր

թուրը և կարծես յեռանդուն վերադավ հորդորում էր նրանց... Մի բուրե դադարած ճիչն ու աղաղակն իսկույն նորոգվեց վե- րնալին: «Դե՛հ, տղե՛րք, — ասաց բերդապետը, — հիմա դար- պասները բացեք և թմբուկը դարկե՛ք: Առա՛ջ, տղե՛րք, գրոհե՛ք, իմ հետևից»:

Բերդապետը, Իվան Իգնատիչը և յես մի ակնթարթում նետվեցին ամբոցի պատնեչի այն կողմը, սակայն ահաբեկված կայսրը տեղից չչարժվեց: «Տղերք, ել ինչո՞ւ յեք կանգնել, — բղավեց Իվան Կուզմիչը: — Մեռնելու յե՛ մեռնենք, ծառա- յուկթյան դործ ե...»: Այդ բուրեյին խռովարարները վազեցին մեզ վրա և ներս խուժեցին բերդը: Թմբուկը լուեց, բերդապա- ճորքը հրացանները ձգեց. լեչ մնաց, վոր ինձ վայր գլորեցին, բայց յես վեր կացա և խռովարարների հետ միասին մտա բեր- դը: Բերդապետը գլխից վերափռված կանգնած էր մի խումբ չարագործների մեջ, վորոնք նրանից պահանջում էյին բանալի- ները: Յես այն ե ուզում եյի նրան ոգնություն նետվել, յերբ մի քանի ուժեղ կազակներ բռնեցին և գոտինեղով կապկպեցին ինձ, ասելով. «Մի՛ թե ձեզ հախ-դատատան կանենք, հա՛, թա- դավորին անլսով հպատակներ»: Մեզ քարչ տվին փողոցներով. բնակիչները տներից դուրս եյին գալիս աղ ու հացով: Լսվեց զանգահարության ձայնը: Հանկարծ ամբոխի մեջ գոռացին, վոր թագավորը հրապարակի վրա սպասում է գերիներին և յերդում է ընդունում: Թողովուրդը միանգամից չըջվեց դեպի հրապարա- կը: Մեզ ևս այն կողմը քշեցին:

Պուզաչովը նստել էր բազկաթռուի վրա, բերդապետի տան մուտքի պատշգամբիկում: Նա հազել էր կազակի գեղեցիկ կաֆ- տան, չուրջանակի յերկզած: Վոսիկ փնջվիներով սամուրի բարձր գլխարկը թեքված էր նրա փայլատակող աչքերի վրա: Նրա դեմքն ինձ ծանոթ թվաց: Ավաղանի կազակները չըջապատել ե- յին նրան: Հայր Գերատիմը, գունատ և դողդոջուն, խաչը ձեռ- քին կանգնել էր տան դռանը և կարծես լուռ պաղատում էր նը- րան՝ առաջիկա զոհերի համար: Հրապարակի վրա շտապով կա- խաղան եյին սարքում: Յերբ մենք մոտեցանք, բաշկիրները ցը- րեցին ամբոխը և մեզ ներկայացրին Պուզաչովին: Զանգակների ձայնը հանդարտեց. տիրեց խորին լուռություն: «Բերդապետը

վո՞րն ե», — հարցրեց ինքնակոչը: Մեր ուրյաղնիկը դուրս յեկավ ամբողջից և ցույց տվեց իվան Կուզմիչին: Պուզաչովն ահեղ նայեց ծերունուն և ասաց նրան. «Դու ի՞նչպես համարձակվեցիր ընդդիմանալ ինձ, քո թաղավորին»: Բերդապետը, տանջվելով վերքի ցավից, համարեց իր վերջին ուժերը և պատասխանեց հաստատուն ձայնով. «Դու իմ թաղավորը չե՛ս, դու մի գո՞ղ ես և ինքնակոչ, լսո՞ւմ ես»: Պուզաչովը մոռաց հոնքերը կիտեց և սպիտակ թաշկինակով նշան արեց: Մի քանի կաղակներ բռնեցին ծերունի կապիտանին և քարշ տվին դեպի կախաղանը: Նրա միջնախոյտի վրա արդեն նստել էր խեղանդամ բաշկիրը, վորին մենք նախորդակին հարցաքննել էյինք: Ձեռքում նա բռնել էր պարանը և մի քանի բուռեյից հետո խեղձ իվան Կուզմիչին յես տեսա ողում վեր քաշած: Այն ժամանակ Պուզաչովի մոտ բերին իվան Իգնատիչին: «Յերգլի՛ր, — ասաց նրան Պուզաչովը, — թաղավոր Պյոտր Փեոդորովիչին»: — «Դու մեր թաղավորը չե՛ս, — պատասխանեց իվան Իգնատիչը, կրկնելով իր կապիտանի խոսքերը: — Դու, քեռիս, գող ես և ինքնակոչի մեկը»: Պուզաչովը նորից նշան արեց թաշկինակով և արիասիրտ պորուշիկը կախվեց իր ծերունի պետի կողքին:

Հերթը իմն էր: Յես համարձակ նայում էյի Պուզաչովին, պատրաստվելով կրկնել իմ վեհանձն ընկերների պատասխանը: Այդ բուռեյին աննկարագրելի զարմանքով խռովարար սլադների մեջ յես տեսա Շվարբրինին, մազերը բոլորակ խուզած, հագին կազակի կաֆտան: Նա մոտեցավ Պուզաչովին և ականջին մի քանի բառ ասաց: «Կախել դրան», — ասաց Պուզաչովն արդեն առանց ինձ նայելու: Թուկի ողակը ձգեցին վիզս: Յես սկսեցի ինքս ինձ աղոթք մրմնջալ, անկեղծ զղջում հայտնելով առ սատված՝ իմ բոլոր մեղքերի համար, պաղատելով նրան — փրկել իմ սրտի բոլոր մերձավորներին: Ինձ քարշ տվին դեպի կախաղանը: «Մի՛ վախենա, մի՛ վախենա», — կրկնում էյին ինձ կործանողները, յերևի խելապես կամենալով խրախուսել ինձ: Հանկարծ յես մի աղաղակ լսեցի. «Կացե՛ք, անիծյալներ, սպասեցե՛ք...» Դահիճները կանգ առան: Տեսնեմ՝ Սավելիչն ընկել է Պուզաչովի մոտները: «Հարազատ հայր, — ասում էր խեղձ դատախարհս, — ի՞նչ շահ ունես աղաքիս յերեսայի մահից: Բա՛ց թող նրան. նրա համար քեզ գլխադին կտան, իսկ ուրիշներին որինակ տալու և վախեցնելու նպատակով հրամայիր թեկուզ ինձ՝ ծերունուս

կախեն»: Պուզաչովը նշան արեց և ինձ խելոյն ևեթ արձակեցին պաթանից ու բաց թողին: «Մեր տերը քեզ ներում ե», — ասացին ինձ: Ձեմ կարող ստել, թե այդ բուռեյին յես ուրախացա իմ փրկության համար, սակայն չեմ ել ասի, վոր այդ մասին յես ամոսոսացի: Ի՞նչ զգացումներն անշուր խառն էյին: Ինձ նորից տարան ինքնակոչի մոտ և նրա առաջ ծռնել չողեցրին: Պուզաչովն ինձ յերկարացրեց իր ջղուտ ձեռքը: «Համբուրի՛ ձեռքը, համբուրի՛ ձեռքը», — ասում էյին ականջիս տակ: Բայց յես ամենադաժան մահը կգերադասեյի նման անարգ ստորացման: «Տեր իմ Պյոտր Անդրեյիչ, — շնջում էր Սավելիչն իմ յետև կանգնած և հրելով ինձ: — Մի համառի: Ի՞նչ մի դժվար բան ե վոր. թքի՛ր ու համբուրի չարագոր... (թո՛ւ), համբուրի նրա ձեռքը»: Յես չեյի չարժվում: Պուզաչովը ձեռքը թողեց, քմծիծաղով ասելով. «Յերևի թե նորին բարեծննդությունը շը՝ մեկ է ուրախությունից: Բարձրացե՛ք սրան»: Ինձ բարձրացրին և ազատ թողին: Յես սկսեցի դիտել սոսկալի կատակերգության շարունակությունը:

Բնակիչներն սկսեցին յերդում տալ: Մեկը մյուսի յետևից նրանք մոտենում էյին, համբուրում խաչելությունը և զլուխ տալիս ինքնակոչին: Բերդապետ գլխիցները կանգնած էյին հենց աչքտեղ: Վաչտի դերձակը, զինված իր բուլթ մկրատով, կտրում էր նրանց ծամերը: Նրանք մազերը թափ տալով մոտենում էյին առնելու աջը Պուզաչովի, վորը նրանց ներումն էր շնորհում և ընդունում իր հրոսակի մեջ: Այս բոլորը շարունակվեց մոտ յերեք ժամ: Վերջապես Պուզաչովը վեր կացավ բաղկաթոռից և իր ավազանիների՝ հետ վաղր իջավ տան մուտքի պատշգամբիկից: Նրան մոտեցրին մի սպիտակ նժույգ, ճուխ սարքով զարդարված: Յերկու կաղակ մոտն նրա թեկերը և նստեցրին թամբի վրա: Նա հայտնեց հայր Գերասիմին, վոր նրա մոտ է ճաշելու: Այդ բուռեյին կանացի մի ձայն լսվեց: Մի քանի սպաղակներ դեպի մուտքի պատշգամբիկը դուրս քարշ տվին զլգզված և բոլորովին մեռկ վասիլիսա Յեզորովնային: Նրանցից մեկն արդեն դուպլել էր նրա քաթիպայով: Մյուսները դուրս էյին կրում բմբուլե ներքնակները, սնդուկները, թեյի ամանեղներ, սպիտակեղներ և ամեն անասկ տնային իրեր: «Վո՛ւ, աստված իմ, — բղավում էր խեղձ պառավը: — Թողե՛ք, հոգիս ապաշխարեմ: Ձեր մոտ-

քին մեռնեմ, ինձ իման Կուզմիչի մոտ տարեք»: Հանձնարած նա
նայեց կախաղանին և ճանաչեց իր ամուսնուն: «Չարագործներ՝
— կանչեց նա մոլեգին: — Այդ ի՞նչ եք արել նրան: Իմ աչքի՝
լույս իման Կուզմիչ, դու կարիճ գինյորի գլուխ, վո՛չ պրուսա-
կան սվինները ձեռք տվին քեզ, վո՛չ թուրքական գնդակները.
սպնիք կռվում չե՛, վոր դու զոհեցիր կյանքդ, այլ բնկար փա-
խառտական տաժանակրի ձեռքից»: — «Կտրեցե՛ք եղ պատալ
ջատուկի ձայնը», — ասաց Պուզաչովը: Մի յերխտաարդ կազակ
սրով լսվեց նրա գլխին և նա ընկավ պատչգամբիկի աստիճան-
ների վրա: Պուզաչովը մեկնեց ժողովուրդը հետևեց նրան:

ԳԼՈՒԽ VIII

Ա Ն Կ Ո Չ Ն Յ ՈՒՐ Ը

Մեկու չորսը թաթարից ել վաթար ել:

Առած

Հրապարակը դատարկվեց: Յես դեռ կանգնած էյի մի տե-
ղում և չեյի կարողանում կարգի բերել մտքերս՝ չփոխված աղ-
քան սարսափելի տպավորություններով:

Ամենից շատ ինձ տանջում էր Մարիա Իվանովնայի դրու-
թյան անտրտելությունը: Ո՛ւր է նա, ի՞նչ վիճակի յե, արդյոք
կարողացա՞վ թաղել, հուսալի՞ յե նրա թագաւորը... Տաղնա-
սլացի մտքերով յես մտա բերդապետի տունը... Ամեն տեղ դա-
տարկություն էր — աթոռները, սեղանները, սեղուկները ջարդ
ու փշուր էյին արված, ամանեղենը կոտրատված էր, ամեն ինչ
կոդսպտված: Յես ներս վաղեցի փոքրիկ սանդուխքով, վոր դե-
պի վերնատունն էր տանում և իմ կյանքում առաջին անգամ մոտ
Մարիա Իվանովնայի սենյակը: Յես տեսա նրա անկողինը, վոր
տակն ու վրա էյին արել սպաղակները. պահարանը ջարդված էր
և կոդսպտված. կանթիկը դեռևս լույս էր տարիս դատարկ տապա-

1 Հավանաբար թաթարական գերիշխանության ժամանակից մնացած առած,
վոր հետապնդում արտաքուրի և ցարիզմի վարած ազդեցական
թյունը մասնավորապես թաթար ժողովրդի նկատմամբ:

նակի առջև: Չեր կոտրված փոքրիկ հայելին, վոր կախված էր
միջնադարից: Ո՛ւր էր այդ համեստ, կուսական խուցի տիրու-
հին: Սոսկալի մի միտք անցավ իմ գլխով. յես նրան պատկե-
րացրի սպաղակների ձեռքին... Իմ սիրտը ճմլվեց... Յես դառն
լաց յեղա և բարձր ձայնով արտասանեցի իմ սիրելու անունը...
Այդ րուպեյին մի թեթև աղմուկ լսվեց և պահարանի հետևից
դուրս յեկավ Պալաչան՝ գունատ և զոդդոջուն:

«Ա՛խ, Պյոտր Անդրեյիչ, — ասաց նա ձեռքերն իրար դար-
կելով: — Այս ի՞նչ որ է, ի՞նչ սարսափներ...»

— Իսկ Մարիա Իվանովնան, — հարցրի յես անհամբեր:
Ի՞նչ յեղավ Մարիա Իվանովնան:

«Որիորդը կենդանի յե, — պատասխանեց Պալաչան: — Նա
թաղնված և Ակրւլինա Պամֆիլովնայի տանը»:

— Յերեցկնո՛ջ մոտ, — բղավեցի յես տարտափով: — Աստ-
վա՛ծ իմ, չե՞ վոր Պուզաչովն աշտեղ է...

Յե՛վ դուրս նետվեցի սենյակից, մի ախնթարթում ընկա
փողոց և զլխապատառ վաղեցի դեպի քահանայի տունը, ճանա-
պարհին վոչինչ չտեսնելով և վոչինչ չդպարով: Այնտեղից աղա-
ղակներ էյին լսվում, հոհոց ու յերգեր: Պուզաչովը քեֆ էր ա-
նում իր ընկերների հետ: Պալաչան իմ հետևից աշտեղ վաղեց:
Յես նրան ուղարկեցի, վոր կամացուկ կանչի Ակրւլինա Պամֆի-
լովնային: Մի րուպեյից յերեցկինը դուրս յեկավ սրահը, դա-
տարկ շտոֆը ձեռքին:

— Ի սեր աստծո, ո՛ւր է Մարիա Իվանովնան, — հարցրի
յես անեկարագրելի հուզմունքով:

«Իմ աղայնյակը պոռկած է մահճակալիս վրա, աշտեղ՝
միջնորմի հետևը, — պատասխանեց յերեցկին: — Ա՛խ, Պյոտր
Անդրեյիչ, քիչ մնաց փորձանք պատահեր, բայց փառք աստծո,
ամեն ինչ լավ անցավ: Չարագործը նոր էր նստել ճաշի, յերբ
խեղճ աղջկին ուշքի յեկավ ու հառաչեց... Են է՛ լեղիս ճաքեց:
Նա ձայնն առավ: — «Են ո՞վ է քո տանը հառաչում, ա՛յ պա-
ռավ»: Յես մինչև դեռին դուրս եմ տալիս սպաղակին. քրոջս
աղջկին է, տեր իմ. հիվանդացել է, յերկրորդ շաբաթն է, ինչ
ահա պոռկած է: — «Իսկ ջահե՞լ է»: — Չահե՛լ է, տեր իմ: —
«Հապա մի ցույց տուր ինձ, պատա՛վ, քրոջդ աղջկան»: — Մի-
տըս մի դող ընկա՛վ վոր, բայց թե ճարս ինչ: — Համեցիր, տե՛ր
իմ. միայն աղջիկը դեռ չի կարող վեր կենա և դա քո փողորմա-

ծուծյան մոտ» : — «Վոչինչ, պառավ. յես ինքս կդնամ, կտեսնեմ» : Հապա՛, անխճյալը դնաց միջնորմի այն կողմը, ինչ ես կարծում, բա՛, վարագույրը հետ քաշեց, իր բազեյի աչքերով նայեց և՛ վոչինչ... ստոված պահեց : Բայց կհավատա՞ս, յես ու տերտերս են ե, պատրաստվել եյինք նահատակի մահով մեռնելու : Բարեբախտաբար, նա՛ իմ աղավնյակը չճանաչեց նրան : Տեր իմ աստված, յերեւի ես ել պիտի տեսնեյինք, ի՞նչ եմ ասում, հա՛ : Խեղճ Իվան Կուզմիչ, ո՞վ կարող եր մտածել... Հապա վախիլիսա Յեզորովնա՞ն, հապա Իվան Իդնատի՞չը : Ախր նրան ինչո՞ւ համար... Այդ ի՞նչպես յեղավ, վոր ձեզ խնայեցին : Տես, թե ի՞նչ պտուղն ե Շվարբինը, Ալեքսեյ Իվանիչը : Հապա մի տեսես, մազերը բոլորակ խուզել ե և հիմա այտեղ՝ մեր տանը քեֆ ե անում նրանց հետ : Ծարպիկ ե, ի՞նչ եմ ասում : Իսկ յերբ յես ասացի իմ հիվանդ քրոջաղջկա մասին, հավատում ես, նա եմպես մի նայեց ինձ, վոր ասես դանակով ծակեցին. բայց չմատնեց, չնորհակալ եմ դոնե դրա համար» : — Այդ բոսեյին լավեցին հարբած հյուրերի աղաղակները և հայր Գերասիմի ձայնը : Հյուրերը զինի եյին պահանջում, տանտերը կանչում եր կողակցին : Յերեցկինը ձեռ-վոտի բնկավ : «Գնացե՛ք տուն, Պյոտր Անդրեյիչ, — ասաց նա. — հիմա ձեզ հարցնողն ո՞վ ե. չարագործները քեֆ են անում : Վայ ձեզ, յեթե ընկնեք հարբածների ձեռքը : Մնաք բարով, Պյոտր Անդրեյիչ : Ինչ վոր լինելու յե՛ կլինի. դուցե աստված մեզ չկորցնի» :

Յերեցկինը դնաց : Փոքր ինչ հանգստացած, յես ուղղվեցի դեպի իմ բնակարանը : Հրապարակի մոտով անցնելիս, յես տեսա մի քանի բաշկիրներ, վորոնք խոնաված եյին կախաղանի վրա և կախվածների վոտքերից հանում եյին կոշիկները. յես դժվարությամբ դասեցի դայրույթի բռնկումը, զգալով միջամտության անտրուտ լինելը : Բերդում վխտում եյին ալաղակները, թալանելով սպաների տները : Ամեն տեղ լավում եյին հարբած խոլ-վարարների ձայները : Յեկա տուն : Սավելիչը դիմալորեց ինձ տան շեմքին : «Փա՛ռք աստծո, — կանչեց նա ինձ տեսնելով : — Ասի՛ վայ թե քեզ նորից բռնեցին : Ե՛հ, տեր իմ Պյոտր Անդրեյիչ. հավատո՞ւմ ես, սրիկաները մեր ամեն ինչը թալանեցին. շորերը, սալտակեղենը, իրերը, ամանեղենը — վոչինչ չթողին : Համա ինչ արած... Աստծուն փառք, վոր քեզ կենդանի բաց են թողել... Իսկ դու, տեր իմ, ճանաչեցի՞ր ատամանին» :

— Չե, չճանաչեցի. իսկ նա ո՞վ ե վոր :

«Ի՞նչպես թե, տեր իմ : Մի՞թե դու մոռացել ես են հարբեցողին, վոր գլուխդ յուղելով ասավ քո մուշտակը իջեանատան բակում : Նապաստակի մորթուց կարած մուշտակը բոլորովին նոր եր, իսկ նա՛ են դադանն իր վրա քաշելիս պատառ-պատառ արեց» :

Յես ապշեցի : Իսկապես, Պուգաչովի նամուսթյունն իմ առաջնորդի հետ ապշեցուցիչ եր : Յես հավատալիցա, վոր Պուգաչովը և նա միեմուսն անձնավորությունն եյին և նոր միայն հարկացա ինձ խնայելու պատճառը : Յես չեյի կարող չղարմանալ հանգամանքների տարրինակ կապակցության վրա — չըմովիկին նախած մուշտակն ինձ փրկում ե կախաղանի պարանից և իջեանատանում չըջող հարբեցողը լերդեր և պաշարում ու ցընցում պետությունը :

«Ուտել չե՞ս ուղում, — հարցրեց իր սովորությունների մեջ անփոփոխ Սավելիչը : — Տանը վոչինչ չկա, դնամ, վնտրեմ, մի բան պատրաստեմ քեզ համար» :

Մենակ մնալով յես խորասուզվեցի խորհրդածությունների մեջ : Ի՞նչ պիտի անեյի յես : Մնալ չարագործի իշխանության տակ դանվող բերդում կամ հետեւել նրա հրոսակին, — անվայել եր սույայի համար : Պարտականությունս պահանջում եր, վոր յես ներկայանայի այնտեղ, ուր իմ ծառայությունը դեռ կարող եր ոգտակար լինել ներկա դժվարին հանգամանքներում : Սակայն իմ սերը սատիկ դրդում եր ինձ մնալ Մարիա Իվանովնայի մոտ և լինել նրա պաշտպանն ու հովանավորը : Թեպետե յես նախատեսում եյի հանգամանքների արագ և աներկբա փոփոխություն, բայց և այնպես չեյի կարող չդողալ, պատկերացնելով նրա դրության վտանգավորությունը :

Իմ խորհրդածություններն ընդհատվեցին կապակներից մեկի գալով, վորը վաղելով յեկավ հայտարարելու, «վոր ինքը՝ մեծ Թագավորը քեզ իր մոտ ե պահանջում» : — «Իսկ վո՞րտեղ ե նա», — հարցրի յես, պատրաստվելով հնազանդվել :

«Բերդապետի տանը, — պատասխանեց կաղակը : — Ծաշից հետո մեր տերը բաղանիք դնաց, իսկ հիմա հանգստանում ե : Հա՛, ձեռք բարեճնողություն, ամեն ինչից յերեում ե, վոր յե-րեւելի մարդ ե՛ ճաշին բարեհաճեց ուտել յերկու տապակած խո-

դի ճուտ, իսկ բաղանիքում աշնքան տաք բաղ է ընդունել¹, վոր ճարսա Կուրոչկինը չեւ դիմացել, ավելը սովել եւ Ծոմկա Բիկ-բայելին, իսկ ինքը հաղիվ ուշքի յեկել սառը ջրով: Խոսք չկա, բոլոր շարժումացը մեծոնական ե... Իսկ բաղանիքում, ասում են, ցույց է սովել իր թագավորական նշանները՝ կրծքի վրա. մի կողմը յերկզխամանի արծիւն է հինգ կոպեկանոցի մեծությամբ, իսկ մյուսը՝ իր պատկերը»:

Յես հարկ չհամարեցի հերքել կաղակի կարծիքը և նրա հետ միասին ուղղվեցի դեպի բերդապետի տունը, նախապես յերեւակայելով իմ տեսակցութիւնը Պուգաչովի հետ, ջանալով նախագուշակել, թե այն ինչով կվերջանա: Ընթերցողը հեշտ կարող է պատկերացնել, վոր յես ընտով ստոնարդուն չեցի:

Սկսում եր միջնել, յերբ յես յեկա բերդապետի տունը: Կախողանք իր դոհերով սեին եւ տալիս: Խեղճ բերդապետուհու մարմինը դեռեւ ընկած մնացել եւ տան դռների մոտ, ուր յերկու կաղակներ պահապան եյին կանգնած: Ինձ ուղեկցող կաղակը զնայ իմ մասին գեկուցելու և խկույն ևեթ վերադառնալով, ինձ ներս տարավ այն սենյակը, ուր նախորդակին յես այնպեա քնույջ հրաժեշտ տվի Մարիա Իսկանովնային:

Իմ աչքի առաջ բացվեց արտասովոր մի պատկեր: Սիւռցով ծածկված և վրան շտոֆներ ու բաժակներ դրած սեղանի շուրջը նստած եյին Պուգաչովը և տասի չափ կաղակ ավագներ, դրզակները գլխներին և գունազեղ շապիկներ հագած, զինուց տաքացած, կարմրած քիթ ու մոութով և փայլատակող աչքերով: Նրանց մեջ չկար վոչ Ծափարինը, վոչ ել մեր ուրյաղնիկը՝ նորակոչ դավաճանները: «Ա՛, ձերդ բարեձնեղութիւն, — ասաց Պուգաչովն ինձ տեսներով: — Բարով յեկաք, տեղ ու պատիվ ձեզ, համեցեք»: Զրուցակիցներն ինձ տեղ տվին: Յես լուռ նրատեցի սեղանի ծայրին: Կողքիս նստած յերիտասարդ կաղակը՝ բարեկազմ և գեղեցիկ, ինձ համար մի բաժակ հասարակ գինի լցրեց, վորին յես ձեռք չտվի: Հետաքրքրությամբ սկսեցի դիտել այդ հավաքույթը: Պուգաչովը նստած եր ամենից վերեւ, հենված սեղանին, սե մորուքը պահած իր լայն բուռնցքի վրա: Նրա դիմագծերը՝ կանոնավոր և բավական դուրեկան, վոչ մի

¹ Պուսական բաղանիքներում ընդունված է լողանալուց առաջ առանձին բաժանմունքում չոգի ընդունել և հատուկ ավելներով ծեծել մարմինը:

կատաղի արտահայտութիւն չունեյին: Նա ստեպ-ստեպ դիմում եր հիսուն տարեկան մի մարդու, մերթ գրաֆ անվանելով նրան, մերթ՝ Տիմոֆեյիչ, իսկ յերբեմն ել նրան մեծարելով վորպեա իր քեռուն: Բոլորը միմյանց հետ վարվում եյին ինչպես ընկերներ և առանձնապես վոչ մի գերապատւութիւն չեյին տալիս իրենց առաջնորդին: Խոսակցութիւնը առավոտիս հարձակման, խռովության հաջողության և առաջիկա գործողութիւնների շուրջն եր: Ամեն մեկը պարծենում եր, առաջարկում իր կարծիքները և համարձակ կերպով առարկում Պուգաչովին: Յեւ հենց այս արտասովոր ուղեւորական խորհրդում վորոշվեց զնալ Ուրենբուրգի վրա, հանդուգն մի շարժում, վոր քիչ մնաց պսակվեւր արեւտալի հաջողությամբ: Արշալանքը հայտարարված եր վաղը: «Դե՛հ, յեղբայրներ, — ասաց Պուգաչովը, — յեկեք, քնեց առաջ յերգենք իմ փրկելի յերգը: Զուգակո՛ւմ, սկսի՛ր»: Իմ հարեւանը բարակ ձայնով սկսեց բուռնակներ² մեղմադճող յերգը և բոլորը միասին ձայնակցեցին:

Մի՛ սոսափիր, կանաչ, մայր կաղնու անտառ,
Մի՛ խանդարիր քաջիս իր միտքն աներու,
Հարցման պիտ կանգնեմ վաղ առավոտան,
Ահեղ արքայի դատարանի դեմ:
Տիրակալ արքան ինձ հարցեր կտա—
Առա՛, դեղջուկի աղա, ա՛յ ջահել.
Խնչպես, ո՞ւմ հետ ես գողութիւն արել,
Յեկել թալանի. քեզ հետ շա՞տ մարդ կար:
Կասեմ քեզ մեր հույս, արքա ուղղակաւ,
ձգճարութիւնը ահա կասեմ քեզ,
Վոր ունեցել եմ լոկ չորս ընկեր յես.
Առաջին ընկերս եր գիշերը մութ,
Յերկրորդ՝ դանակ պողպատից չինձ,
Յերրորդ ընկեր իմ՝ նոսրիս եր հմուտ,
Զորրորդ ընկերս՝ աղեղն եր ձգված,

1 Զուգակով, Զեռողոր—Յարիկի կաղակներից, Պուգաչովի բանակի հրատանապետը. հետագայում դավաճանեց Պուգաչովին և նրան հանձնեց կառավարութեան ձեռքը: Վերջինս խոտացված պարզեկների փոխարեն Զուգակովին զրկեց կաղակի կոչումից և աքսորեց Ռիզայի նահանգապետի հսկողութեան տակ:

2 Այսպես էյին կոչվում վորդա գետի և նրա նավակայաններում աշխատող բանվորները, վորոնք ընդհանուր մի պարանից կամ փոկից լծված, տփով հոսանքն ի վեր քաշում էյին բեռնատար նավերը:

Մոնետիկները՝ նետերը շաչուն:

Խոսեց աղավեն արքան ուղղափառ՝

Պատիվ քեզ, տղա՛, դեղջուկի զսպակ,

Վոր խմացել ես զողանալու հետ և սրտասխառ տալ,

Հենց դրա համար նվեր քեզ, տղա՛,

Դաշտումը փայտակերտ բարձր մի դղյակ,

Վոր ունի դույզ սյուն ու մի միջնափայտ:

Անհնար է ներարագրել, թե ինչ ազդեցություն թողեց ինձ վրա կախաղանի մասին հյուսած հասարակ ժողովրդական յերգը, վոր յերգում էյին կախաղանի դատարարաված մարդիկ: Նրանց ահալոր դեմքերը, ներդաշնակ ձայները, թախծոտ արտահայտությունը, վոր նրանք տալիս էյին առանց այդ ևլ արտահայտիչ բառերին—այդ բոլորն ինձ ցնցեցին մի ինչ վոր սրիտիքական¹ սարսափով:

Հյուսերն ելի մի-մի բաժակ խմեցին, սեղանից վեր կացան և հրաժեշտ տվին Պուզաչովին: Յես ուզում էյի հետևել նրանց, սակայն Պուզաչովն ասաց ինձ. «Նստիր, յես ուզում եմ քեզ հետ մի քիչ խոսել»:—Մենք մնացինք յերես առ յերես:

Մի քանի րոպե տեեց մեր՝ յերկուստեք տիրող լուռությունը: Պուզաչովն անթարթ ինձ եր նայում, խաբեբայության և ծաղրանքի զարմանալի արտահայտությամբ, յերբեմն կկոցելով իր ձախ աչքը: Վերջապես նա ծիծաղեց և այնպիսի մի սրտաբուլիս խինդով, վոր և յես նրան նայելով սկսեցի ծիծաղել, ինքս ել չիմանալով թե ինչու:

«Ի՞նչ է, ձերդ բարեծնություն, —ասաց նա ինձ:—Խոսող-վանվիր, վախեցա՞ր, յերբ իմ տղերքը թոկը վիզդ ձգեցին: Յերե՛կ՝ վախից լեղիդ պատռվեց... Իսկ միջնափայտի վրա կճոճվե՞լի՛ր, յեթե չլինեիր քո ծառան: Յես խելոյն և եթ ճանաչեցի ծեր քաֆթառին: Հը, արդյոք մտքովդ կանցնե՞ր, ձերդ բարեծնություն, վոր քեզ ունեւ բերող-հասցնող մարդն ինքք մեծ թագավորն եր: (Այդ խոսքերի հետ նա վեհ և խորհրդավոր տեսք ընդունեց): Դու իմ առաջ շատ մեղավոր ես, —չարունակեց նա,— բայց յես քեզ ներումն չտրհեցի քո բարեբարության համար, նրա համար, վոր դու ինձ ոգնութիւն ցույց տվիր, յերբ յես հարկադրված եյի թագնել իմ թշնամիներից: Ե՛, դեռ ինչե՛ր կտեսնես: Դեռ այդպե՞ս կարգեատրեմ քեզ, յերբ ստանամ իմ

թագավորութիւնը: Խոստանո՞ւմ ես ինձ հոգով-սրտով ծառայել»:

Սրիկայի տված հարցը և նրա հանդեպությունն ինձ այնպես զվարճալի թվաց, վոր յես չկարողացա բժժիծաղ չտալ:

«Ինչի՞ վրա յես ծիծաղում, —հարցրեց նա դեմքը խոժոռելով:— Զլինի՞ թե չես հավատում, վոր յես մեծն թագավորն եմ: Ուղի՛ղն ասա»:

Յես շփոթեցի: Թագավոր ճանաչել չըմոլիկին յես անկարող էյի, դա ինձ թվաց աններելի փոքրոգություն: Յերես առ յերես խաբեբա անվանել նրան—կնշանակել ինձ կործանման յին-թարկել: և այն, ինչին յես պատրաստ էյի կախաղանի տակ բուր ժողովրդի ներկայությամբ և զայրույթի առաջին բռնկման միջոցին, հիմա ինձ թվում եր անոգուտ պարծենկոտություն: Յես տատանվում էյի: Պուզաչովը, մուսլ սպասում եր իմ պատասխանին: Վերջապես (դեռ հիմա ել ինքնագոհությամբ եմ հիշում այդ րոպեն) պարտքի զգացումն իմ մեջ գերազանցեց մարդկային թուլութիւնը: Յես պատասխանեցի Պուզաչովին. «Լսիր. ասեմ քեզ ամբողջ ճշմարտությունը: Դատիր ինքդ, արդյոք յես կարո՞ղ եմ քեզ թագավոր ճանաչել: Դու բանխաց մարդ ես. դու ինքդ կտեսնեյիր, վոր յես խորամանկություն եմ քանեցնում»:

«Հապա ո՞վ եմ յես քո կարծիքով»:

— Աստված դիտե ո՞վ ես, բայց ո՞վ ել վոր լինես, դու վրտանդավոր խաղ ես խաղում:

Պուզաչովը արագ ինձ նայեց: «Ասել է, թե դու չե՞ս հավատում, — ասաց նա, — վոր յես Պյոտր Ֆյոդորովիչ թագավորն եմ: Դե, լավ: Իսկ միթե կտրիճի համար հաջողություն չկա՞: Մի՞թե հին ժամանակները Գրիչկա Ուրեպյեմլ¹ չթագա-

1 Մոսկովյան Ռուսի (Русь) թագավոր 1605—1606 թ.: Հին պատմագրության մեջ այսպես կոչված «Խառնակ տարիների ժամանակաշրջանում» (Смута). Գրիչկա Ուրեպյեմլը հանդես յեկավ վորպես Իոհան Ահեկի կրտսեր վորդի Դմիտրի, վորը մինչ այդ իրոր մահացած եր կամ սպանված դահակալ Բորիս Գոդունովի մարդկանց ձեռքով: Խոշոր ազնվականությունը և քաղաքային բուրժուազիան «ինքնակոչ» մականունն են տվել նրան: Պատմական աշխատությունների մեջ նա կոչվում է նաև Կեզդ-Դմիտրի և նույնացվում փախուստի վանական վոմն Գրիչկա Ուրեպյեմլի հետ: Իրականում թե՛ Կեզդ-Դմիտրի 1-ը և թե՛ Ուրեպյեմլը դործիս գլուխացությունն աստամբությունները փորձել են ողորդորդել հոգուտ իրենց ղեկիցին նպատակների:

1 Պիիտ, պիիտիֆակամ—հունարեն «պոետ» բառի հնացած ձևն է:

վորեց: Ինչ ուզում ես մտածիր իմ մասին, բայց՝ ինձնից մի հեռանա: Քո ի՞նչ դարձն ե, թե այսպես ե, կամ՝ այնպես: Յերկուսն ել մի հաշիվ ե: Հավատարիմ ու ճշմարտությամբ ծառայիր ինձ և յես քեզ Ֆելդմարշալի ե՛լ, իշխանի ել աստիճան կտամ: Խեղճ ի՞նչ ե կարում»:

— Վո՛չ, — պատասխանեցի յես հաստատ: — Յես ծագումով աղնավան եմ: յես յերգում եմ տվել թագուհի-կայսրուհուն, քեզ ծառայել չեմ կարող: Թե վոր դու իսկապես լավու-թյուն ես կամենում ինձ, ապա թող դնամ Որենբուրգ:

Պուգաչովը միտք արեց: «Իսկ թե վոր թողնեմ, — ասաց նա, — խոսք կտամ իմ դեմ դուրս չգալ»:

— Ի՞նչպես կարող եմ այդպիսի խոստում տալ, — պատասխանեցի յես: — Ինքդ պիտես, վոր իմ կամքով չե՛ կհրամայեն քո դեմ դուրս գալ՝ կղամ, ճարս ի՛նչ: Հիմա դու ինքդ ես մեծավոր, ինքդ ես հնազանդություն պահանջում քո մարդկանցից: Ինչի՞ նման կլինի, յեթե յես ծառայությունից հրաժարվեմ, յերբ իմ ծառայությունը պետք պա: Կյանքս քո ձեռքումն ե. թե բաց կթողնես — չնորհանալ եմ, թե մահապատիժ կտաս — աստված քեզ դատավոր, իսկ յես քեզ ճշմարիտ ասացի:

Իմ անկեղծությունը ասլեցրեց Պուգաչովին: «Թող այդպես լինի, — ասաց նա ուսիս խփելով: — Մահապատիժն իր տեղը, ներումն իր տեղը: Գնա՛ ուր ուզում ես, արա՛ ինչ քեֆդ տա: Վաղը յեկ ինձ մնաս-բարովի, իսկ հիմա դնա քնելու, իմ գունն ել ե տանում»:

Յես թողի Պուգաչովին և փողոց դուրս յեկա: Խաղաղ և ցուրտ գիշեր եր: Լուսինն ու աստղերը պայծառ փայլում էին, լուսավորելով հրապարակն ու կախաղանը: Բերդում ամեն տեղ հանգիստ եր և մութ: Միայն կարակում կրակի լույս եր յերեւում և լավում եյին ուղացած զվարճացողների աղաղակները: Յես հայացքս դարձրի քահանայի տան կողմը: Պատուհանի փեղկերն ու դարպասը փակ էին: Թվում եր, թե այնտեղ ամեն ինչ պապանձվել ե:

Յես տուն յեկա և Սավելիչին տեսա իմ բացակայությունը փոքրալիս: Նրան անասելի ուրախացրեց իմ աղափության լուրը: «Փա՛ռք քեզ, տե՛ր, — ասաց նա յերեսը խաչակնքելով: — Լույ-

սը բացվելուն պես դուրս կգանք բերդից և կգնանք ուր վոր աստված հաջողի: Քեզ համար բան-ման եմ պատրաստել, ա-նուշ արա, տե՛ր իմ, և մինչև առավոտ քնիր հանգիստ, վորնց վոր Գրիստոսի դողում»:

Յես հետևեցի նրա խորհրդին և մեծ ախորժակով ընկրե-լով, քնեցի մերկ հատակի վրա, հոգեպես և ֆիզիքսպես սուս-տիկ հոգնած:

ԳԼՈՒԽ IX

Հ Ր Ա Ժ Ե Շ Տ

Մանթանալը քաղցր եր շատ,
Գեղեցիկուհի՛, ո՛, այնպես,
Անջատումը՝ տխուր, վհատ,
Հողոցս եմ դատվում կարծես:
Խեղճսկովի

Վաղ առավոտյան թմբուկն ինձ արթնացրեց: Գնացի հավա-քավայրը: Այնտեղ արդեն չարքի եյին կանգնում Պուգաչովի հրոսակները կախաղանի մոտ, վորից դեռևս կախված էին յե-րեկվա զոհերը: Կաղակները ձխավորված էին, զինվորները՝ հը-րացաններն ուսերին: Դրոշակները փողփողում էին: Մի քանի թնդանոթներ, վորոնց մեջ յես ճանաչեցի և մերը, դրված էին ոսղմական հրետասայրերի վրա: Բնակիչները բոլորն ել այդ-տեղ էին, ստատելով ինքնակոչին: Բերդաստի տուն մուտքի պառչգամբիկի առաջ մի կաղակ բռնած պահում եր կրկնակական դեղեցիկ, սպիտակ ձիու տանձը: Յես աչքերով վրոնում էյի բերդապետի կնոջ դեմքը: Նա փոքր ինչ մի կողմ եր տարված և ծածկված եր ճիլոպով: Վերջապես Պուգաչովը դուրս յեկավ տան սրահից: Ժողովուրդը գրակները հանեց: Պուգաչովը կանգ առավ դռանը և վողջունեց բոլորին: Ավագներից մեկը նրան տվեց մի պարկ՝ լի սղնձե դրամներով, և նա սկսեց բռավ չաղ սալ: Ժողովուրդն աղաղակներով վրա ընկավ հավաքելու և շա-տերի կողն ու կուշտը ջարդվեց: Պուգաչովին չըջապատեցին նը-րա համախոհներից ամենազլիսավորները: Նրանց մեջ կանգնել եր և Շվաբրենը: Մեր հայացքները հանդիպեցին. իմ հայացքի

մեջ նա կարող եր կարողալ արհամարհանք. նա յերեսը չուռ տը-
վեց անկեղծ դայրույթի և շինծու հեղինակի արտահայտու-
թյամբ: Ինձ ամբողջի մեջ տեսնելով Պուգաչովը գլխով արեց և
մոտ կանչեց: «Լսի՛ր, — ասաց նա ինձ: — Հենց այս ժամին
կզնաս Ուրենբուրգ և իմ անունից նահանգապետին և բոլոր գե-
ներալներին կհայտարարես, վոր մի չարախից հետո ինձ ապա-
սեն: Դու նրանց խորհուրդ տուր մանկական տիրով ու հնազան-
դությամբ դիմադրել ինձ, թե չե՛ս՝ ամենադաժան մահապատ-
ժից չեն պրծնի: Բարի ճանապարհ, ձերդ բարեձնություն»:
Հետո նա ժողովրդին դարձավ և ասաց, ցույց տալով Շվարբը-
նին. «Ահա՛ ձեզ, գտավենք, նոր բերդապետ: Ամեն բանում
լսեցե՛ք նրան, իսկ նա իմ առջև պատասխանատու չե՛ս ձեզ և
բերդի համար»: Այս խոսքերը յես սարսափով լսեցի. Շվար-
բինը դարձավ բերդապետ. Մարիա Իվանովնան մնում և նրա
իշխանության տա՛կ: Աստված իմ, ի՞նչ կլինի նրա վիճակը:
Պուգաչովը ցած իջավ պատշգամբիկից: Զին մոտեցրին նրան:
Նա ճարպիկությամբ թռավ թամբի վրա, չսպասելով կազակնե-
րին, վորոնք այն ե՛ր ուղում էին նստեցնել նրան:

Այդ ժամանակ ամբողջի միջից տեսնեմ դուրս յեկալ իմ Սա-
վիլիչը, մոտեցավ Պուգաչովին և նրան տվեց մի թերթ թուղթ:
Ոնկքս բան չեւ կտրում, թե ինչումն ե բանը: «Այս ի՞նչ ե», դո-
ւոդ հարցրեց Պուգաչովը:

— Կարդա և հրամանքդ կիմանա, — պատասխանեց Սավի-
լիչը:

Պուգաչովը թուղթը վերցրեց և յերկար նայեց նշանակալից
տեղքով: «Ի՞նչ դժար ես գրում, — ասաց նա վերջապես: —
Եստեղ մեր պայծառ աչքերը վոչինչ չեն կտրում ջոկել: Ո՞ւր
ե իմ որեր-քարտուղարը»¹:

Յերիտասարդի մեկը արագ մոտ վազեց Պուգաչովին: «Բա՛ր-
ձըր կարդա», — ասաց ինքնակույք, թուղթը նրան տալով: Յես
անչափ հետաքրքրվում էյի իմանալու, թե ինչի մասին կարող
եր իմ դաստիարակի խելքին փչել Պուգաչովին թուղթ գրելու:
Որեր-քարտուղարն սկսեց բարձրաձայն, վանկ առ վանկ կար-
դալ հետեյալը.

«Յերկու խալաթ, միտկալի և մետաքսե՛ր՝ զոլսովոր — վեց
մանեթ»:

— Սա ի՞նչ ե նշանակում, — ասաց Պուգաչովը հոնքերը
կիտելով:

«Հրամայի՛ր՝ մնացածը կարդան», — անլրդով պատասխա-
նեց Սավիլիչը:

Որեր-քարտուղարը շարունակեց.

«Մի մոնդլի բարակ, կանաչ մահուդից — յոթ մանեթ:

«Մի սալխակ մահուդի շալվար — հինգ մանեթ:

«Տասներկու հորանդական քաթանե շապիկներ, մանժետենե-
րով — տաս մանեթ:

«Ճանապարհի փոքրիկ մի սեղուկ, թեյամաններով — յեր-
կու մանեթ ու կես...»

— Այս ի՞նչ փչոց ե, — ընդհատեց Պուգաչովը: — Յես ի՞նչ
դործ ունեմ սեղուկների և մանժետեներով շալվարների հետ:

Սավիլիչը խելդված հաղաց և սկսեց բացատրություններ
տալ: «Ես վոր գրած ե, հրամանքդ կտեսնի, վոր իմ տիրոջ դույ-
քի ցուցակն ե, չարագործներն են թալանել...»

— Ի՞նչ չարագործներ, — ահեղ հարցրեց Պուգաչովը:

«Ներողություն, բերանիցս թռավ, — պատասխանեց Սավի-
լիչը: — Չարագործները չարագործներ չեն, բայց ըս տղերքը
մեր տունը մի քիչ բրբել են ու բան-ման են տարել: Մի դա-
շանա. ձին վոր ձի չե, չորս վոտքով, ելի սայթաքում ե: Հը-
րամայի, թող կարդա պրծնի»:

— Կարդա՛, — ասաց Պուգաչովը: Գարտուղարը շարունա-
կեց.

«Մի չիթ վերմակ, մյուսը տափտայից¹, բամբկուն — չորս
մանեթ:

«Մի քուրք ալվեաի մորթուց, վրան կարմիր ռատին² քաշած
— 40 մանեթ:

«Մեկ ել նապաստակի մուշտակը, վոր իմ տերը ձեր վո-
ղորմածության բախչեց իջևանատանը — 15 մանեթ»:

— Այդ ի՞նչ բան ե, — դուռաց Պուգաչովը հրացայտ աչքե-
րը փայլեցնելով:

1 Տափտա—պարսկական մետաքսե գործվածք, վոր լայն գործածություն-
ունեց չին Ռուսաստանում՝ արտոնյալ դասերի մեջ:

2 Ռատին—յերեսը խոսքովալոր բրդե գործվածք:

1 Գլխավոր քարտուղար:

Խոստովանում եմ, վոր յես սաստիկ վախեցաւ իմ խեղճ դաստիարակի համար: Նա աշն ե՛ ուղում եր նորից բացատրութիւններ տալ, սակայն Պուգաչովը նրան ընդհատեց. «Ի՞նչպես դու համարձակվեցիր ես տեսակ դատարկ բաներով յերևալ իմ աչքին, — դուստր նա թուլթը քարտուղարի ձեռքից խլելով և այն Սափելիչի յերեսին չարտելով: — Հիմա՛ր ծերուկ: Նրանց թալանե՛լ են — ի՞նչ մի մեծ դժբախտութիւն ե յեղել: Լավ ի՛մացիր, քալթառ, վոր դու պետք ե հալիստանս աղոթք անես իմ և իմ աղաների համար, վոր քեզ և քո բարիքին խոտեղ չեն կախել ինձ չհաղանդելողների հետ միասին... Նապաստակի մուշտակը: Յես քեզ նապաստակի մուշտակ ցույց կտամ: Իսկ դու գիտե՛ս, վոր յես կհրամայեմ կենդանի—կենդանի քո կաշին քերթել մուշտակի համար»:

— Ինչպես կհրամայես, — պատասխանեց Սափելիչը. — համա յես ճորտ մարդ եմ և իմ տիրոջ գույքի համար պետք ե պատասխան տամ:

Յերեսում եր, վոր Պուգաչովը մեծահոգութեան եր յեկել: Նա չըջեց ձիու գլուխը և հեռացաւ, այլևս վոչ մի խոսք չտեւով: Շփաբրինը և սվազանին հետեւեցին նրան: Հրոսակը բերդից դուրս յեկավ շարք կանգնած: Ժողովուրդը գնաց Պուգաչովին ճանապարհ դնելու: Հրապարակի վրա յես մենակ մնացի Սափելիչի հետ: Իմ դատարարակը ձեռքին բռնել եր իր ցուցակը և խորին ախտասնքով գննում եր այն:

Տեսնելով իմ բարի համաձայնութիւնը Պուգաչովի հետ, նա կարծեւ եր, թե կարելի յե դա գործադրել հոգուտ մեզ, բայց այդ խելոք գիտաւորութիւնը նրան չհաջողվեց: Յես քիչ եր մնում՝ նախատեցի նրան իր անտեղի յեռանդի համար և չըկարողացաւ ծիծաղս պահել: «Ծիծաղիր, տեր իմ, — պատասխանեց Սափելիչը. — ծիծաղիր... Իսկ յերբ ստիպված կլինենք նորից—նոր ձեռք բերել մեր ամբողջ տնտեսութիւնը, են ժամանակ կտեսնենք՝ ծիծաղելի՞ կլինի, թե վոչ»:

Յես շտապեցի բահանայի տունը՝ Մարիա Իվանովնայի հետ տեսնելու համար: Յերեցիներ մեզ դիմաւորեց տխուր տեղեկութեամբ: Գիշերը Մարիա Իվանովնան հիմադրացել եր սաստիկ ջերմախտով: Նա պառկած եր գիտակցութիւնը կորցրած և դառանցանքների մեջ: Յերեցիկին ինձ տարավ նրա սենյակը: Յես զգուշ մոտեցաւ նրա մահճակալին: Նրա դեմքի փոփոխութիւնն

ինձ ապշեցրեց: Հիվանդն ինձ չճանաչեց: Յերկար յես կանգնած ելի նրա առջև, չլսելով վո՛չ հայր Գերասիմին, վոչ ել նրա բարի կնոջը, վորոնք կարծես թե մխիթարում ելին ինձ: Մռայլ մտքերն ալեկոծում ելին ինձ: Չարսենեզ խոտաբարներ իմ մեջ մնացած խեղճ, անողնակա մորբուհու վիճակը և իմ անձնական անդորութիւնը սարսափեցնում ելին ինձ: Շփաբրինը, ամենից շատ Շփաբրինն եր այրում իմ յերևակայութիւնը: Ինքնակոչից շատ Շփաբրինն ստանալով և դեկավար լինելով բերդի մեջ, ուր մնացել եր դժբախտ աղջիկը՝ նրա ատելութեան անմեղ առարկան, — նա սոսն ինչ կարող եր անել: Ի՞նչ պիտի անեյի յես: Ի՞նչպես ոգնութիւն ցույց տալ նրան: Ի՞նչպես տգասել չարագործի ձեռքից: Մնում եր մի միջոց. վճռեցի հենց նույն ժամին մեկնել Որենբուրգ, վորպեսզի շտապեցնեմ Բելոգորսկի բերդն աղատելը և լստ հնարավորութեան աջակցեմ այդ բանին: Յես հրաժեշտ տվի քահանային և Ակուլինա Պամֆիլովնային, թախանձազին հանձնարարելով նրան այն աղջկան, վորին յես արգեն իմ կրնն ելի համարում: Յես բռնեցի խեղճ աղջկա ձեռքը և համբուրեցի այն, արցունքով վողովելով: «Գնա՛ք բարով, — ասում ե յերեցիկինը, ինձ ճանապարհելով. — գնա՛ք բարով, Պյոտր Անդրեյիչ: Գուցե ամէլի լավ ժամանակ հանդիպենք: Մի մոռանաք մեզ և չուտ—չուտ նամակ դրեք: Խեղճ Մարիա Իվանովնան հիմա ձեզանից բացի վոչ մխիթարող ունի, վոչ հովանավոր»:

Հրապարակ դուրս գալով յես մի բոպե կանգ առա, նայեցի կախաղանին, գլուխ խնարհեցի նրան, բերդից դուրս յեկա և Որենբուրգի ճանապարհով քայլեցի Սափելիչի ուղեկցութեամբ, վորը ինձնից հետ չեք ընկնում:

Մտքերով տարված գնում ելի, յերբ հանկարծ իմ հետեւից ձիու դուրսն լսեցի: Հետ նայեցի. տեսնեմ՝ բերդից մի կաղակ ե արչավում բաշկիրսկան ձին հետեւից քարչ տալով և հեռվից ինձ նշաններ անելով: Յես կանգ առա և շուտով ճանաչեցի մեր ուրյազնիկին: Հասնելով մեզ, նա իջավ իր ձիուց և մյուսի ասնձն ինձ տալով, ասաց. «Ձե՛րդ բարեմնադրութիւն. մեր տերը ձեզ մի ձի յե ընծայում և իր վրայից հանած մուշտակը (թամբին կապած եր վոչխարի մորթուց կարած մի քուրք): Մեկ ել, — կապ ընկնելով ասաց ուրյազնիկը, — նա ձեզ ընծայում ե... կես մանեթ... բայց յես ճանապարհին կորցրի. վեհանձնարար

ներեք ինձ»։ Սասկելիչը խեթ-խեթ նայեց նրան և մրթմրթաց. «Ճանապարհին կորցրի՞ր։ Հապա են ի՞նչ և ծոցիդ մեջ զնգզնգում, անխելի՞ց» — «Ինչ և զնգզնգում իմ ծոցո՞ւմ, — առարկեց ուրյազնիկը բնավ չչփոթվելով։ — Աստված ունեա, ծերու՜նկ։ Եդ սանձն և զնգզնգում, վոչ թե կես-մանեթանոցը»։ — Լավ, — ասացի յես վեճն ընդհատելով։ — Փմ կողմից շնորհակալություն արա նրան, ով քեզ ուղարկել է. իսկ կորցրած կես-մանեթանոցը հետ դառնալիս աշխատիր գտնել և վերցրու քեզ՝ արաղի փող։ «Շատ շնորհակալ եմ, ձերդ բարեծննդություն, — պատասխանեց նա, ձիու գլուխը չըջնելով. — հալիտյան պետք և աստծուն աղոթեմ ձեզ համար»։ Այս ասելով նա քչեց ձին, մի ձեռքով ծոցը բռնած, և մի բութեցից կորսավ մեր աչքից։

Յես հազա քուրքը և հեծա ձին, իմ գալակին նստեցնելով Սասկելիչին։ «Ա՛յ, տեսնում ես, տեր իմ, — ասաց ծերունին, իզուր չեմ, վոր յես եդ սրիկային խողբաղիւր ավի. գողի խղճ-մտանքը բռնել և, բա՛ս. թեև բաշկիրական ցոկցոնկ յարուն ու վոչխարի քուրքը չարժեն կեսը ե՛ն բոլորի, ինչ վոր նրանք՝ սրբիկաները մեզից գողացել են և ինչ վոր դու ինքդ բարեհաճեցիր նրան բաշխել, համա ելի պետք կգա. քոսոտ չնից մի մագ պոկելն ել բան ե»։

ԳԼՈՒԽ X

ԲԱՂԱՔԻ ՊԱՇԱՐՈՒՄԸ

Տիրելով մարդ ու բռններ,
Նա քաղաքին, արծվի պես, բարձրից նետում էր հայացքներ,
Բանակատեղի յետև նա հրամայեց պառլար չինել,
Ուր շանթարկները՝ պահելով, բերել նրանց քաղաքի վրա
Մի մութ գիշերով։
Խեղճապետ

Որենքուրդին մոտենալիս մենք տեսանք կոճղավորների մի ամբոխ՝ ամիլած գլուխներով, դահճի ունիկներով ալյանդակված դեմքերով։ Նրանք աշխատում էին ամբուլթյունների մոտ, կախաղորի խուլալիդների հսկողության տակ։ Վոմանք փոքրիկ սալակներով դուրս ելին կրում խրամատը լցրած աղբը, մյուս-

1 Շանթարկներ (պառկ)։—Թնդանութներ։

ները բահերով փորում էին հողը. պատենչի վրա փոմնաղիլները աղյուս ելին կրում և նորոգում քաղաքի պարիսպը։ Դարպասների մոտ ժամապահները մեզ կանգնեցրին և պահանջեցին մեր անցադրերը։ Հենց վոր տերժանտը լսեց, թե յես Բելոգորսկի բերդից եմ գալիս, խկույն ևեթ ինձ տարավ ուղիղ դեներալի տունը։

Յես նրան տեսա ալբում։ Նա դնում էր աչնան չնչից մերկացած խնձորենիներն ու ծեր ալգեսարանի հետ բները խնամքով փաթաթում տաք ծղոտով։ Նրա դեմքը հանգստություն էր արտահայտում, առողջություն և բարեհոգություն։ Իմ գալուն նա ուրախացավ և սկսեց հարց ու փորձ անել սարսափելի անցքերի մասին, վորոնց յես ավանատես ելի յեղել։ Յես ամեն ինչ պատմեցի նրան։ Ծերունին ուշադրությամբ լսում էր ինձ և մերթ ընդ մերթ կտրատում չորացած ճյուղերը։ «Խեղճ Միրոնով, — ասաց նա, յերբ յես վերջացրի իմ տխուր պատմությունը։ — Ախոս, լավ ապա յեր։ Տիկին Միրոնովն ել լավ կին էր և ի՛նչպիսի վարպետն էր սունկերը թթու դենլու գործում։ Իսկ Մա՛չան ինչ յեղավ, կապիտանի աղջիկը»։ Յես պատասխանեցի, վոր նա մնացել է բերդում, յերեցկոնջ ձեռքին։ «Ա՛յ, ա՛յ, ա՛յ, — նկատեց գեներալը։ — Դա վատ է, չա՛տ վատ։ Ավաղակների գիտցիսլինայի վրա յերբեք չի կարելի վստահանալ։ Ի՞նչ կլինի խեղճ աղջկա միճակը»։ Յես պատասխանեցի, վոր Բելոգորսկի բերդը հեռու չէ և վոր հալանորեն նորին դերապանցությունը չի հապաղի դորք ուղարկել նրա դժբախտ բնակիչներին ազատելու համար։ Գեներալը գլուխը ճոճեց անվստահությամբ։ «Կտեսներ, կտեսներ, — ասաց նա։ — Այդ մասին մենք դեռ ժամանակ կունենանք խոսելու։ Խնդրեմ՝ ինձ մոտ համեցեք մի բաժակ թեյ խմելու. ախոր իմ տանը ուղմական խորհուրդ կլինի։ Դու կարող ես մեզ ձիւտ տեղեկություններ տալ ալբ անպիտան Պուղաչովի և նրա զորքի մասին։ Հիմա, առայժմ դու դնա հանդրատացի»։

Յես գնացի ինձ հատկացված բնակարանը, ուր Սասկելիչն արդեն տանտերություն էր անում, և անհամբեր սկսեցի սարսակ նշանակված ժամանակին։ Ընթերցողը հեշտ կպատկերացնի, վոր յես փութացի ներկայանալ ալբ խորհրդակցությանը, վորն ալիսի աղեկցություն պիտի ունենար իմ ճակատագրի վրա։ Նըշանակված ժամին յես արդեն գեներալի մոտ ելի։

Նրա տանը յես տեսա քաղաքային չինովներն ինքն ինքն, հիշում եմ՝ մաքսատան դերեկսորդին — մի հաստ ու կարմրերեն ծերուկի, գլադետից¹ կարած կափտանը² հագին: Նա սկսեց հարց ու փորձ անել Իվան Կուզմիչի մասին, վորին տանահայր եր անվանում, և հաճախակի իմ խոսքը կարում եր լրացուցիչ հարցերով և խրատական նկատողութիւններով, վորոնք թեպետ և չեյին վկայում, վոր նա ռազմական արվեստին տեղյակ մարդ է, սակա համենայն դեպս յերևան եյին հանում նրա ուշիմութիւնն ու բնական խելքը: Մինչ այս, մինչ այն՝ համարվեցին և մյուս հրավիրվածները: Յերբ ամենքը նստեցին և բոլորին մի մի բաժակ թեյ տվին, գեներալը միանգամայն սրտով և մանրամասն բացատրեց բանի ելուցիւնը. «Հիմա, պարոնայք, — չարունակեց նա, — պետք է վճռել, թե մենք ի՞նչպես պետք է գործենք խոռվարարների դեմ՝ հարձակողական³ թե՛ պաշտպանողական: Սույն յեղանակներից յուրաքանչյուրն ունի իր ոգուտըն ու միտք: Հարձակողական գործողութիւնն ավելի հոսատի յես թշնամուն շուտափուլով վռնչացնելու համար. պաշտպանողական գործողութիւնն ավելի հաստատ է և անխտանդ... Յեմ այսպես, սկսեմք ձայներ համարել որինական կարգով, այսինքն՝ սկսած աստիճանով կրտսերներից: Պ. պրապորշչիկ⁴, — չարունակեց նա ինձ դառնալով: — Հաճեցե՞ք մեզ պարզել ձեր կարծիքը»:

Յես կանգնեցի և համառոտակի նկարագրելով նախ Պուզաշովին և նրա հրոսակը, հաստատաբար ասացի, վոր ինքնակոչը հնար չունի կանոնավոր գործի ղեկավարելու:

Իմ կարծիքը չինովներին կողմից ընդունվեց ակնհայտ անբարեհաճությամբ: Դրանում նրանք տեսնում եյին խուճապալիութիւն և յերիտասարդի հանդգնութիւն: Լավեցին արքայունջի ձայներ և յես վորոշակի բնեցի ծծկեր բառը, կիսաձայն արտասանված մեկի կողմից: Գեներալը ինձ դարձավ և ժպտում ասաց. «Պ. պրապորշչիկ, ռազմական խորհրդակցութիւններին ժամանակ առաջին ձայները սովորաբար տրվում են հոգուտ հարձակողական շարժումների, որինական կարգն այդ է: Հիմա

¹ Գլադետ—գործվածք, վորի հենքը մետաքս է, իսկ շարք՝ վոսիւս կամ արծաթի թելեր—մեծ մասամբ կեղծ:

² Կափտան—տղամարդու վերնադու լայն գեշերով:

³ Պրապորշչիկ—ցարական բանակի կրտսեր սպայական աստիճան:

սկսեմք չարունակել ձայներ համարելը: Պ. կոբեժսկի խորհրդադատան¹, ասացե՛ք ձեր կարծիքը»:

Գլադետի կափտան հագած ծերունին շտապով խմեց յերբորդ բաժակ թեյը, վորի մեջ բախականաչափ ոռմ եր խառնած, և սրտասխանեց գեներալին. «Յես կարծում եմ, ձերդ գերազանցութիւն, վոր չպետք է գործենք վո՛չ հարձակողական, վոչ ել պաշտպանողական»:

«Այդ ի՞նչպես թե, պարոն կոբեժսկի խորհրդական, — դարձա՞ց առարկեց գեներալը:—Տակտիկան² ուրիշ յեղանակներ չունի. պաշտպանողական կամ հարձակողական...»

— Ձե՛րդ գերազանցութիւն, շարժվեցե՞ք կաշառողական:

«Եհէ՛, ձեր կարծիքը հույժ վողջամիտ է: Տակտիկան թույլ է տալիս կաշառողական շարժում անել և մենք կողոպտենք ձեր խորհրդից: Կարելի է լինի անախտանի գլխի համար խոստանալ... յոթանասուն կամ միւնչև իսկ հարյուր ուրբի... գաղտնի գուժարից...»

— Յեմ այն ժամանակ, — ընդհատեց մաքսատան վերատեսուչը, — թող յես կիրգիդական վոչխար լինեմ և վոչ թե կոբեժսկի խորհրդական, յեթե այդ գողերը մեզ չհանձնեն իրենց աստամանին³ վոռք ու ձեռքը շղթայած:

«Այդ մասին մենք դեռ կմտածենք ու կխոսենք, — պատասխանեց գեներալը: — Սակայն համենայն դեպս պետք է ձեռնարկել նաև ռազմական միջոցներ: Պարոնայք, տվե՞ք ձեր ձայներն ըստ որինական կարգի»:

Բոլոր կարծիքները հակառակ եյին իմին: Չինովներն ամենքն ել խոսում եյին դորքի անհուսալիության, հաջողության անխտանջելիության, զգուշության և այլ նման բաների մասին: Բոլորն ել այն կարծիքին եյին, վոր ավելի խոհեմ կլինի մնալ լեղալիութիւնի պաշտպանության տակ քարե հաստատուն պա-

¹ Կոբեժսկի խորհրդական—քաղաքացիական աստիճաններից մեկը, վոր ցարական Ռուսաստանում կրում եյին պետական բոլոր ծառայողները՝ չինովներինքը (աստիճանավորները):

² Տակտիկա (հուն.)—ղիտութիւն, վոր ուսումնասիրում է մարտավարության հիմունքները, զորաշարժերի կազմակերպումը և զորամասերը դասավորելու յեղանակները:

³ Աստաման—այս տիպոսն եյին կրում կազալները զորապետները. վոր խորերաբար առաջնորդ, հրոսակապետ:

րիսպի ներսում, քան թե բաց դաշտում փորձել գեների բախտը: Վերջապես գեներալը բոլոր կարծիքները լսելուց հետո իր ծխամորձիկի թափ տվեց մոխիրը և հետևյալ ծառն արտասանեց.

«Տյա՛րք իմ. յես պետք է ձեզ հայտարարեմ, վոր յես իմ կողմից միանգամայն համամիտ եմ պարոն պրապորշչիկի կարծիքին, քանի վոր սույն կարծիքը հիմնված է ասողջ տակտիկայի բոլոր կանոնների վրա, վոր համարյա միշտ գերադասում է հարձակողական շարժումները պաշտպանողականից»:

Այս խոսքի վրա նա դադար առավ և սկսեց լցնել ծխամորձը: Իմ ինքնասիրտությունը ցնծում եր: Յես հպարտությունով նայեցի չինովնիկներին, վորոնք միմյանց հետ փոփոսում եյին անբավական ու անհանգիստ տեսքով:

«Սակայն, տյա՛րք իմ, — շարունակեց նա խոր հոգոցի հետ ծխի մի թանձր ջուլա թողնելով, — յես չեմ համարձակվում աղքատ մեծ պատասխանատվություն վերցնել, յերբ հարցը վերաբերում է նորին արքայական մեծություն, իմ ամենալողորմած թագուհու՝ ինձ հավատացած զավառների ապահովությանը: Յե՛վ այսպես, յես համաձայնվում եմ ձայների մեծամասնության հետ, վորը վճռեց, թե ավելի խոհեմ և անվտանգ կլինի քաղաքի ներսում սպասել պաշարման, իսկ թշնամու հարձակումները հրետանու ուժով և (յեթե հնարավոր լինի) արտելքներով հետ մղել»:

Չինովնիկներն իրենց հերթին ծաղրանքով նայեցին ինձ: Խորհրդակցությունը վերջացավ: Յես չեյի կարող չափսոսալ թուլությունը հարգելի զորականի, վորը հսկառակ սեփական համոզման, վճռեց հետևել անտեղյակ ու անփորձ մարդկանց կարծիքներին:

Այս նշանավոր խորհրդակցությունից մի քանի օր հետո մենք իմացանք, վոր Պուգաչովը հավատարիմ իր խոստման, մոտենում է Որենբուրգին: Խոսվարարների զորքը յես տեսա քաղաքի պարսպի գլխից: Ինձ թվաց, վոր նրանց թիվը տասնապատիկ ավելացել է վերջին հարձակումից հետո, վորին յես ներկա եյի: Նրանք ունեյին նաև հրետանի, վոր Պուգաչովը գրավել եր իր՝ արգեն իսկ նվաճած փոքրիկ բերդերում: Հիշելով խորհրդակցության փորձումը, յես նախատեսում եյի յերկարատև արդելափակում Որենբուրգի պարիսպների մեջ և արտնդյանից քիչ մնաց, վոր լաց լինեյի:

Յես չեմ նկարագրի Որենբուրգի պաշարումը, վոր պատմությունն է պատկանում և վոչ թե ընտանեկան հուշագրություններին: Կարճ կատեմ, վոր սույն պաշարումը տեղական իշխանությունն անդգուլություն պատճառով կործանարար յեղավ բնակիչներին համար, վորոնք սով և ամեն տեսակ աղետներ կրեցին: Հեշտ է պատկերացնել, վոր կյանքը Որենբուրգում ամենաանտանելին եր: Ամենքը վհատություն եյին սպասում իրենց բախտի վորոշմանը, ամենքն ախ ու վախ եյին քաշում թանգությունից, վոր իրոք սոսկալի յեր: Բնակիչները սովորեցին թնդանոթի ուժերին, վոր ընկնում եյին նրանց տան բակերը: Մինչև իսկ Պուգաչովի հրոսամեները այլևս չեյին գրավում ընդհանուր հետաքրքրություն: Յես մեռնում եյի ձանձրությունից: Ժամանակն անցնում եր: Բեղդորակի բերդից նամակներ չեյի ստանում: Բոլոր ճանապարհները կտրված եյին: Մարիա Իվանովնայից հետո լինեին անտանելի յեր դառնում ինձ համար: Նրա վիճակի անհայտությունն ինձ տանջում եր: Իմ միակ բավականությունը ձի նստելն եր: Պուգաչովի վորոշմածությունով յես մի լավ ձի ունեյի, վորի հետ բաժանում եյի իմ աղքատիկ սնունդը և վորը նստած, ամեն օր դուրս եյի գալիս քաղաքից՝ Պուգաչովի ձիավորների հետ հրացանաձուլության բռնակրու համար: Այս հրացանաձուլությունների մեջ գերակշռությունը սովորաբար չարագործների կողմն եր, վորոնք կուշտ եյին, քեֆները տեղը և լավ ձիեր նստած: Քաղաքի վտիտ աչրուձին չեր կարողանում հաղթել նրանց: Յերբեմն դաշտ եր դուրս գալիս և մեր սոված հետևակազորը, սակայն ձյան խորությունը նրան խանգարում եր հաջողակ դորձել ցաք ու ցրիվ ձիավորների դեմ: Հրետանին ապարդյուն դդրում եր պատնեչի վրայից, իսկ դաշտում ձիերի ու ժասպառություն պատճառով խրվում եր ձյան մեջ ու չեր շարժվում: Այս պատկերն ունեյին մեր ռազմական դործողությունները: Ահա թե Որենբուրգի չինովնիկներն ի՛նչն եյին անվանում զգուշություն և վողջամտություն:

Մի անգամ, յերբ ինչպես յեղավ մեզ հաջողվեց ցրել ու քշել խոսվարարների բախական մի ստվար ամբոխ, յես ձիա քշեցի մի կապալի վրա, վոր հետ եր մնացել իր ընկերներից: Յես արդեն պատրաստ եյի իմ թուրքական թրով հարվածել նրան, յերբ նա հանկարծ գլխարկը հանեց ու բղավեց. «Բարե՛ ձեզ, Պյոտր Անդրեյիչ: Ասածով ի՞նչ հալի յեք»:

Յեա նայեցի նրան և ճանաչեցի մեր ուրյազնիկին: Անասելի ուրախացաւ նրան հանդիպելուս համար: «Բարե՛, Մակարիմի՛չ, — ասացի նրան: — Վաղո՞ւց եւ վոր դուրս ես յեկել Բերադորսկից»:

«Վաղուց չի, տեր իմ Պյոտր Անդրեյի՛չ. հենց յերեկ եմ վերադարձել աշտեղից: Նամակ ունեմ ձեզ տալու»:

— Ո՞ւր ե, — արանջեցի յես, ամբողջովին կրակ կտրելով:

«Մոտ ե, — պատասխանեց Մակարիմի՛չը ձեռքը ծոցը դնելով: — Յեա խոտացաւ Պարաշային մի կերպ հնար դռնել նամակը ձեզ հանձնելու»: Այս ասելով նա ինձ հանձնեց ծալծրած թղթի մի կտոր ու իսկույն ևեթ ձին քչեց հեռացալ: Յեա թուղթը բաց արի և սրտի թրթռումով կարդացի հետևյալ տողերը.

«Աստծուն հաճելի յեր ինձ հանկարծ զրկել հորից ու մորից. աշխարհիս յերեսին վոչ հարազատներ ունեմ, վոչ ել հովանաւորներ: Դիմում եմ ձեզ, գիտեմալով, վոր դուք միշտ ել իմ բարին եք կամեցել և վոր դուք պատրաստ եք ամեն մեկին ոգնելու: Աղոթում եմ աստծուն, վոր այս նամակը մի կերպ հասնի ձեր ձեռքը: Մակարիմի՛չն ինձ խոտացալ այն հասցնել ձեզ: Պարաշան Մակարիմի՛չից լսել եր նույնպես, վոր նա հաճախ հեռվից ձեզ տեսնում ե արտեղքների ժամանակ և վոր դուք բոլորովին չեք պահպանում ձեզ և չեք մտածում նրա՛նց մասին, վորոնք արտասուքն աչքերին ձեզ համար աղոթք են անում աստծուն: Յերկար ժամանակ յես հիվանդ եյի, իսկ յերբ առողջացա, Ալեքսեյ Իվանովի՛չը, վորը մեզանում իշխանաւոր ե դարձել հանդուցյալ հայրիկի փոխարեն, հայր Գերասիմին հարկադրեց ինձ իրեն հանձնել, սպառնալով Պուզաչովի անունից: Աղբում եմ մեր տանը, հսկողութեան տակ: Ալեքսեյ Իվանովի՛չն ինձ հարկադրում ե իր հետ ամուսնանալ: Նա ասում ե, վոր փրկել ե իմ կյանքը, վորովհետեւ ծածկել ե Ակուլինա Պամֆիլովնայի խաբէրայութիւնը, վորը չարագործներին ասել ե, թե իբր յես նրա քրոջ աղջիկն եմ: Իսկ ինձ համար ամբողջ հեշտ ե մեռնել, քան թե կին լինել այնպիսի մի մարդու, ինչպիսին Ալեքսեյ Իվանովի՛չն ե: Նա ինձ հետ շատ դաժան ե վարվում և սպառնում ե, վոր յեթե խելքս գլուխս չհաւաքեմ և չհամաձայնեմ, ապա ինձ կտանի բանակատեղ՝ չարագործի մոտ և վորպէս թե ինձ հետ ել նույնը կլինի, ինչ յեղով Լիդալետա

Պարլովայի՛ 1 հետ: Յեա խնդրեցի Ալեքսեյ Իվանովի՛չին, վոր ինձ ժամանակ տա մտածելու: Նա համաձայնակեց սպասել նորից յերեք ուր, իսկ յեթե յերեք տրից հետո յես նրան մարդու չգնամ, այն ժամանակ այլևս վոչ մի փրկութիւն չի լինի ինձ: Մերեքի Պյոտր Անդրեյի՛չ. դո՛ւք եք իմ միակ հովանաւորը, պաշտպանեցեք խեղճիս: Խնդրեցեք գնեմալին և բոլոր հրամանատարներին՝ շտապել սիւսերս ուղարկել մեզ, ինքներդ ել յեկեք, յեթե կարող եք: Մնամ խոնարհաբար ձեր խեղճ վորքուհի՛:

Մարիա Միլոնովա՞»:

Այս նամակը կարդալով քիչ մնաց, վոր խելքս թոցնելի: Յեա դեպի քաղաք սլացա, անողորմաբար խթանելով իմ խեղճ ձիուն: Ճանապարհին ել ի՛նչ ասեա, վոր չեյի ծրագրում դժբախտ աղջկան փրկելու համար և վոչ մի հնար չկարողացա մտածել: Գաղաք հասնելով, յես ուղիղ գնեմալի մոտ դնացի և շտապով ներս վազեցի:

Գնեմալը հետ ու ստաջ եր դնում իր սենյակում, ծխելով կոճղախայտից պատրաստած իր ծխամորճը: Ինձ տեսնելով նա կանգ առաւ: Հալածուրեն իմ տեսքը նրան ապշեցրեց. նա հոգատարութեամբ հարց ու վորձ արեց իմ շտապ գալու պատճառի մասին: «Ձե՛րդ գերադանցութիւն, — ասացի յես նրան, — դիմում եմ ձեզ ինչպէս հարազատ հորս. ի տեր աստծու, մի մերժեք իմ խնդիրը. հարցն իմ ամբողջ կյանքի յերջանկութեան ե վերաբերում»:

«Ի՞նչ ե պատահել, սիրելիս, — հարցրեց ապշած ծերունին: — Ի՞նչ կարող եմ անել քեզ համար: Ասա՛»:

— Ձերդ գերադանցութեան, հրամայեցե՛ք, վոր ինձ մի վաշտ պիտիւր և մի հիանալի կաղապար տան և թույլ տալեք Բերադորսկի բերդը մաքրեմ:

Գնեմալը աչքերը տեսեց ինձ վրա, յերեկ կարծելով, վոր յես գժվել եմ (վորում նա համարյա թե չսխալվեց):

«Այդ ի՞նչպէս: Մաքրել Բերադորսկի բերդը», — ասաց նա վերջապէս:

1 Տասիլչէսկայա բերդի պարտի աղջիկը, վորը Նիֆնե-Ուկրնայա կոչված ամբոթեան պետի կինն եր: Այս բերդը զբաղւելուց հետո Պուզաչովի մահապատի յեր յեթարկել Պարլովայի հորը, մորը և ամուսնուն, իսկ նրանք վորպէս գեղատեսիլ կնոջ, դարձրել եր իր հարձը: Մի վորոչ ժամանակ անց այս կինը ևս սպանվեց:

— Հաջողութեան համար յերաշխափորում եմ, — յեռանդով պատասխանեցի յես: — Միայն թե՛ ինձ թողեք:

«Վո՛չ, յերիտասարդ,—ասաց նա գլուխը ճոճելով:—Սրբայի մեծ տարածութեան վրա թշնամին ձեզ հեշտութեամբ կկտրի գլխավոր ռազմականի կոմունիկացիայից՝ և վատարկալ հաղթութիւն կտանի ձեր դեմ: Կտրված կոմունիկացիան...»

Յես վախեցաւ, տեսնելով վոր նա տարվում է ռազմական դատողութիւններով և շտապեցի ընդհատել նրան. «Կապիտան Միրոնովի աղջիկը, — ասացի յես նրան, — ինձ նամակ է գրել. նա ողնաթիւն է խնդրել. Շվարքինը նրան հարկադրում է իր հետ ամուսնանալ»:

«Մի՞թե: Ո՛ր, այդ Շվարքինն ամենամեծ Schelm-ն² է և յեթե ձեռքս ընկնի, յոր կհրամայեմ 24 ժամվա ընթացքում դատել և մենք նրան կգնդակահարենք բերդի պարապետի³ վրա: Իսկ առայժմ պիտո յե համբերութիւն ունենալ...»

— Համբերութիւն ունենա՛լ, — գոռացի յես ինձ կորցրած: — Իսկ մինչ այդ կամուսնանա՛մ Մարիա Իվանովնայի հետ...

«Ո՛ր, — առարկեց գննելու: — Դա դեռ դժբախտութիւն է. նրա համար ավելի լավ կլինի առայժմ լինել Շվարքինի կինը. նա հիմա կարող է հովանաւորել այդ աղջկան, իսկ յերբ մենք նրան կգնդակահարենք, այն ժամանակ, աստված վողորմած է, կգտնվին և լավ փեսացուներ: Գեղեցիկ և յերիտասարդ աղջիկները տանը չեն մնում, այսինքն յես ուզում եյի ասել, վոր յերիտասարդ աղջիկն աղէկի շուտ կգտնի իրեն ամուսին, քան թե աղջիկը»:

— Ավելի շուտ կհամաձայնվեմ մեռնել, — ասացի յես կատաղած, — քան թե նրան գիջել Շվարքինին:

«Բա՛, բա՛, բա՛, բա՛, — ասաց ծերունին: — Հիմա յես հասկանում եմ, վոր դու սիրահարված ես Մարիա Իվանովնային: Ո՛ր, դա ուրիշ բան է: Սե՛ղձ տղա: Բայց այնուամենայնիվ յես չեմ կարող քեզ մի վաշտ ղեկավոր և մի հիւնդակ կաշակ տալ:

1 կոմունիկացիա (լատ.)—կոմունիկացիոն ուղիները հաղորդակցութեան այն ճանապարհներն են, վորոնք կապում են բանակի զբաղած վայրը իր մատակարարման հնակետի հետ:

² Schelm—չելմ (գերմ.)— խաբկախ, ստահակ մարդ:

³ Պարապետ (ֆր.)—պարիսպ, պատնէշ, պատվար (մեծ մասամբ բերդի, ամրոցի), հողաթումբ:

Սրբ պրշտականն անմիտ բան կլիներ. յես չեմ կարող դա վերցնել իմ պատասխանատվութեան վրա»:

Յես մնացի գլխիկոր. հուսահատութիւնն ինձ պատեց: Հանկարծ մի միտք անցաւ իմ գլխով. թե ինչ եր դա, ընթերցողն սոյն կտեսնի հետեւյալ գլխում, ինչպես ասում են հնամենի վրացաւիկները:

ԳԼՈՒԽ XI

ԽՌՈՎԱՐԱՐ ԱՎԱՆԸ

Կուշտ եր առուծն այդ պահին, թեև ի ծնե կատաղի. «Իմ քարանձավը, ասա՛, ինչո՞ւ չուրճ բերեցիր» — Հարցրեց նա սիրալիր:

Ա. Սուսարովով

Յես թողի գննելուս և շտապեցի դեպի իմ բնակարանը: Սալիկին ինձ գլխավորեց իր սովորական հորդորանքով: «Դու ել հալաւս ունես, տեր իմ, գլուխ դնել հարբած ավազակների հետ: Մի՞թե բոյարին՝ վայել՞ դործ է դա: Ո՛վ գիտե՛ ինչ կը դա գլխներին—ժամանակը չար է. վտուքով—գլխով կկորչես: Են ել մի բան եր, թե ասենք թուրքերի կամ չվեղների դեմ կռվի գնալիր. թե չե, ասելն ել ամոթ է՝ ախր ո՛ւմ վրա յես քըչում»:

Յես նրա խոսքը կտրեցի հարցով. ընդամենն ինչքա՞ն վող ունեմ: «Քեզ հերիք կանի,—պատասխանեց նա ինքնագոհ տեսքով:—Սրիկաներն ինչքան ուշադիր տնտղեցին ամեն լուծ ու պուճախ, յես ելի կարողացա թագցնել»: Այդ խոսքերի հետ նա գրգռմեց հանեց ձի յերկար, գործված քսակ՝ լի արծաթով: «Սալիկի՛նչ,—ասացի յես նրան,—տուր ինձ հիմա դրա կեսը, իսկ մնացածը վերցրու քեզ: Յես դնում եմ Բելոգորսկի բերդը»:

«Տեր իմ, Պյոտր Անդրեյիչ,—ասաց բարի դատարարապետ զողզոջուն ձայնով:—Աստժող վախեցիր. դու ի՞նչպես պիտի ճանապարհ ընկնես հիմա, յերբ ավազակների ձեռքից վող մի տեղ գնալ չի կարելի: Գոնե ծնողներդ խղճա, թե վոր ինքդ քեզ չես մեղքանում: Ո՞ւր պիտի գնաս: Ինչո՞ւ: Մի քիչ սպա-

1 Боярин—խոշոր ազնական հին Ռուսաստանում:

սիր, զորքերը կզան, բոլոր ավազակներին կբռնառնեն, եւ ժամանակ զնա ուր վոր ուղղում ես»:

Բայց իմ դիտարկութիւնը հաստատ եր: «Այլեւս ուշ ե խորհուրդներ տալ,—պատասխանեցի յես ծերունուն:—Յետ պետք ե զնամ, յես չեմ կարող չզնալ: Հոգ մի անի, Սաւելիչ. առաված վողորմած ե, յերեւի կտեսնակե՞նք: Բայց տես՝ չլինի ավառասան ու ժլատութիւն անեա: Քեզ համար ինչ վոր արեաք լինի, կզնես՝ թեկուղ թանգ զնով: Այդ վողերը յես քեզ եմ նվիրում: Յեթե յերեք որից չվերադառնամ...»

«Եդ ի՞նչ ես ասում, տեր իմ,—ընդհատեց ինձ Սաւելիչը:—Լինելու բ՞ան ե, վոր քեզ մենակ թողնեմ: Եդ մեկը դու յերազիդ ել չես կարող ինձից խնդրել: Համա վոր դու արեան վճուել ես զնալ, եւ ժամանակ յես թեկուղ վրտով կզամ քո յետեից ե քեզ մենակ չեմ թողնի: Լինելու բա՞ն ե, վոր յես առանց քեզ նստեմ պարսպի ներսում: Ի՞նչ ե, գովել եմ, հա՞: Քո կամքն ե, տեր իմ, բայց քեզնից ձեռք չեմ քաշի»:

Յես գիտեցի, վոր իդուր ե մի՞ճել Սաւելիչի հետ ե թույլ տվի նրան ճանապարհի պատրաստութիւն տեսնել: Կես ժամից յես նստեցի իմ լայն նոսրիքը, իսկ Սաւելիչը՝ անի վրտո ու կողմի, վոր նրան ձրի տվեց քաղաքի բնակիչներից մեկը, միջոցներ չունենալով կերակրելու նրան: Մենք ուղղվեցինք դեպի քաղաքի դարպասները. պահապանները մեզ բաց թողին. մենք դուրս յեկանք Որենբուրգից:

Սկսում եր մի՞նել: Ճանապարհս զնում եր Բերդակ կոչված ավանով, վորը Պուգաչովի հանդիմանն եր: Ուղիղ ճանապարհը ծածկված եր ձյունով, տակայն տախտատների վրա ամենուր նրկատելի ելին ձկնալորների ամեն ուր նորոգվող հետքերը: Ձիւն ընթանում եր խոշոր վաղքով: Սաւելիչը հազիվ եր կարողանում հեռվից հետեւել ե ամեն բոսի ձայն եր տարիս ինձ. «Կամա՞ց, տեր իմ, ի սե՛ր աստծո՞՝ կամա՞ց. իմ անիծյալ քոտորը հազիվ ե հասնում քո յերկար—վտանանի գլխի հետեւից: Ախր ո՞ւր ես շտապում: Լայլ եր, թե քե՞ֆի ելինք կանչվել, թե չե, արի տես, վոր կորստյան անդունդն եմք քչում... Պոտոր Անդրեյիչ, տեր իմ, Պոտոր Անդրեյիչ... Մի՛ սպանի... Աստի՛ճ իմ, տիրոջ յերեւանն ձեռքից զնա՞ց»:

Շուտով ատկայծեցին Բերդակի կրակները: Մենք մոտեցանք

խրավանդներին՝ ամանի բնական ամրութիւններին: Սաւելիչն ինձից հետ չեւ մնում, չընդհատելով իր աղերասանից պաղատանքը: Յես հույս ունեյի ավանի կողքովն արահով անցնել, յերբ հանկարծ կիսախավարի մեջ, ուղիղ իմ առջեւ տեսա հինգ զեղջուկների, մահալինքով դիմիւս: Դա Պուգաչովի հանդիմանի առաջավոր պահակախումբն եր: Մեզ ձայն տվին: Նշանաբանը չիմանալով, յես ուղղում եյի լուսայն անցնել նրանց մոտով, բայց նրանք խկույն եեթ շրջադառնեցին ինձ ե նրանցից մեկը ճանկեց ձիուս սանձը: Յես սուրս հանեցի ե խիցի գեղջուկի գլխին. գլխով փրկեց նրան, ասկայն նա յերեւոց ու սանձը ձեռքից թողեց: Մյուսները չփոթվեցին ե փոքր ինչ հեռու վախան. յետ ողալեցի այդ բոսիցից, խթանեցի ձիւս ու աղացա:

Վերահաս գիշերվա մութը կարող եր ինձ փրկել ամեն տեսակ վտանգից, յերբ հանկարծ, հետ նայելով տեսա, վոր Սաւելիչն ինձ հետ չե: Խեղճ ծերունին իր կաղ ձիով չեւ կարողացել պրծնել ավազակների ձեռքից: Ծարս ի՞նչ եր: Մի քանի բոսակ նրան սպառելուց հետո ե հալատախանալով, վոր նա բռնված ե, յես շրջեցի ձիուս գլուխը ե հետ դարձա նրան աղատելու:

Խրավանդին մոտենալով, հեռվից յես լսեցի աղմուկ, աղաղակներ ե իմ Սաւելիչի ձայնը: Յես ավելի արագացրի ձիուս ընթացքը ե շուտով նորից ընկա պահակող զեղջուկների մեջ, վորոնք մի քանի բոսից առաջ ինձ կանգնեցրել ելին: Սաւելիչը նրանց մեջն եր: Նրանք ծերունուն իջեցրել ելին ձիուց ե պատրաստվում ելին նրան կասրտել: Իմ մոտենալը նրանց ուրախացրեց: Աղաղակներով հարձակվեցին ինձ վրա ե մի ակնթարթում լսեցի հրամայելու՝ ձեզ հիմա՞ կախն, թե—սպասենք առավոտ լուսին»: Յես չընդդիմացա. Սաւելիչը հետեւեց իմ որինակին ե պահակները հանդիսավոր կերպով մեզ տարան:

Մենք կտրեցինք խրավանդը ե մտանք ավանը: Բոլոր խորճիթներում կրակներ ելին վառվում: Աղմուկն ու աղաղակները լսվում ելին ամենուր: Փողոցում յես բաղմաթիվ մարդիկ տեսա, բայց միտության մեջ վրջ վրջ մեզ չնկատեց ե հանձնա ինձ չնկատեց Որենբուրգի սպային: Մեզ ուղիղ տարան յերկու փողոցների խաչաձևման անկյունում դռնվող խրճիթը: Դարպասի

մոտ կային գինու մի քանի տակաոններ և յերկու թնդանոթ։ «Ահա և սրաւսը,—ասաց զեղջուկներին մեկը.—խտույն կտեղեկացնենք ձեր մասին»։ Նա մտաւ խրճիթը։ Յետ նայեցի Սալեւի չին. ծերունին խաչակնքում էր, քթի տակ աղոթք մղմնջալով։ Յերկար սպասեցի յես. վերջապես զեղջուկը վերադարձաւ և ասաց ինձ. «Գնա՛. մեր տերը հրամայեց ներս թողնել սպային»։

Յետ մտա խրճիթը կամ սրաւսը, ինչպես անվանում էյին զեղջուկները։ Ներսը լուսավորված էր յերկու ճարպամոմով, իսկ սրատերը սրատառել էյին վոսկեղով լեղթով. սակայն, յերկար նստարանները, սեղանը, թոկից կտրած լիացարանը, մեխից քարշ յերեսսրբիչը, անկյունում դրված ունելին և լայն թաբեքը՝ վրան կծուճներ,—սոսն ինչ այնպես էր, ինչպես սովորական խրճիթում։ Պուզաչովը նստած էր սրբերի պատկերների տակ, կարմիր կափտանը հագին, յերկարավուն դեղակը գլխին և ձեռքերը հանդիսավոր կերպով մեջքին դրած։ Ծինժու քննության տեսքով նրա մոտ կանգնած էյին մի քանիսն իր գլխավոր ընկերներից։ Յերեսում էր, վոր Որենբուրգից սպա դալու լուրը խռովարարներն մեջ մեծ հետաքրքրություն էր դարձեցրել և, վոր նրանք սրատառսովել էյին ինձ հանդիսավորությամբ դիմաւորելու։ Պուզաչովն ինձ ճանաչեց առաջին իսկ հայացքից։ Ներս կեղծ հանդիսավորությունը հանկարծ չքացաւ։ «Ա՛, ձերդ բարեծնդություն,—ասաց նա ինձ աշխուժությամբ։—Ի՞նչպես էք։ Բարի՛ լինի. ինչի՞ յեք յեկել»։ Յետ պատասխանեցի, վոր գնում եյի իմ դործով և վոր նրա մարդիկ ինձ կանգնեցրին։ «Իսկ ի՞նչ դործով»,—հարցրեց նա ինձ։ Յետ չգիտեյի՝ ի՞նչ պատասխանել։ Պուզաչովը յենթադրելով, վոր յես չեմ ուզում բացատրություն տալ վրաների ներկայությամբ, դարձաւ իր ընկերներին և նրանց հրամայեց դուրս գնալ։ Բոլորը հնազանդակեցին, բացի յերկուսից, վորոնք տեղերից չչարժակցին։ «Խոսի՛ր համարձակ,—ասաց ինձ Պուզաչովը.—սրանցից յես վոչինչ չեմ թաղցնում»։ Յետ նայեցի ինքնակոչի մտերիմներին։ Նրանցից մեկը՝ վտիտ ու կուզիկ մի ծերունի—ճերմակ մորուքով, աչքի ընկնող վոչինչ չոններ, բացի կապտադուխ ժապավենից, վոր պատել էր ուսովը, գորշ արմյակի վրայից։ Բայց յես համիտյանս չեմ մոռանա նրա ընկերովը։ Նա բարձրահասակ էր, մարմնեղ ու լայնաթիկունք, և ինձ թվաց մոտ բառասունհինգ տարեկան։ Թաւ, շեկ մորուքը, գորշ պսպղուն աչքերը, քիթը՝

առանց թաճակների և ճակատի ու այտերի վրայի կարմրավուն բծերը անմեկնելի մի արտահայտություն էյին տալիս նրա չեչոտ, լայն դեմքին։ Նա հապին ուներ կարմիր շապիկ, կիրգիզական խալաթ և կադակի չալվար։ Սոաջինը (ինչպես հետո իմացա) փախտական կապրալ Բելոբորոգովն էր. յերկրորդը՝ Աֆանասի Սոկոլովը (Խլոպուշա՝ կոչեցյալ) արտոբական մի հանցավոր, վորը յերեք անգամ փախել էր Սիբիրի հանքահորերից։ Չնայած այն զգացումներին, վոր սաստիկ հուզում էյին ինձ, իմ յերեակայությունը խիստ դադեցնում էյին այս մարդիկ, վորոնց մեջ արաբես անսպասելի ընկել էյի յես։ Սակայն Պուզաչովն ինձ ուշքի բերեց իր հարցով. «Ասա, ի՞նչ դործով ես դու Որենբուրգից դուրս յեկել»։

Արտասովոր մի միտք ծագեց իմ գլխում։ Ինձ թվաց, թե նախախնամությունը, վոր սրանով յերկրորդ անգամն էր ինձ բերում Պուզաչովի մոտ, առիթ էր տալիս իմ դիտավորությունն իրադործելու։ Յետ վճռեցի ոգտվել դրանից և զեռես անելիքս չմտածած, պատասխանեցի Պուզաչովի հարցին.

— Յետ գնում եյի Բելոբորոգի բերդը մի վորբուհու վորդկելու, վորին այնտեղ նեղացնում են։

Պուզաչովի աչքերը փայլատակեցին։ «Իմ մարդկանցից ո՞վ է համարձակվում վորբուհուն նեղացնել,—դուրսաց նա։—Յոթ գլուխ ել վոր նա ունենա, իմ դատաստանից չի աղատվի։ Ասա, ո՞վ է հանցավորը»։

— Եվարրինն է հանցավորը,—պատասխանեցի յես։—Նա բանտարկած պահում է այն աղջկան, վորին դու յերեցիկով մոտ հիվանդ տեսար, և զոռով ուզում է հետն ամուսնանալ։

«Յետ Եվարրինին խեղճի՛ կբերեմ,—ահապոր ձայնով ասաց Պուզաչովը։—Նա կիմանա, թե իմ որդի ի՞նչպես կարելի յե բռնություն բանեցնել և ժողովրդին նեղացնել։ Յետ կկատես նրան»։

1 Ի. Ն. Բելոբորոգով—նախկին հեռավոր՝ շարքային հասարակ գինվոր է յեղել ցարական բանակում, պուզաչովյան շարժման աչքի ընկնող մասնակիցներից, վոր ապստամբեցրեց Պերմի շրջանի դործարաններում աշխատող ճորտ-բանվորներին։

2 Խլոպուշա—դյուղացի, ապստամբության ամենաակնաւոր զեկավարներից մեկը, վոր Ուրալի դործարաններում ճորտ-բանվոր էր։ Գործարանից քանիցս կատարած փախուստների համար կառավարությունը խեղանդամ էր դարձրել նրան։ Առաջնորդել է Ուրալի ապստամբ բանվորներին դորախմբելու Գլխավորած է 1775 թ.։

«Հրամայիր մի խոսք ասեմ, —ասաց Սյուրպուչան խոսքոտ ձայնով:—Դու շտապեցիր Շվաբրինին բերդապետ նշանակել, իսկ հիմա ել շտապում ես նրան կախել: Դու կազակներին արդեն վերադարձել ես, ազնվականին նրանց պետ նշանակելով. դեհ, ել մի՛ վախեցնի ազնվականներին—առաջին չարախոսության հիման վրա նրանց կախաղան հանելով»:

«Չարեւոք ե նրանց վրո՛չ վաղձալ, վրո՛չ ել չնորհ անել, —ասաց կապույտ ժապավենավոր ծերուկը:—Շվաբրինին կախելը ցավ չէ, համա թե՛ վատ չի լինի և՛ պարոն սպային մի լավ հարցաքննել, թե ինչո՞ւ յե բարեհաճել չնորհ բերել մեզ մոտ: Յեթե նա քեզ թաղավոր չի ճանաչում, ապա հարկավոր չի քեզ մոտ դատաստան փնտռել. իսկ թե վրո՛ւ ճանաչում ե, ինչո՞ւ նա մինչև այսօր նստել և Որենքուրդում քո թշնամիները հետ միասին: Արդյոք չե՞ս հրամայի դրան դատաստանատուն տանել և այնտեղ կրակը մի լա՛վ թեթացնել. ինձ այնպես ե յերեւում, վրո՛ւ նորին վտղորմածությունը մեզ մոտ ուղարկված և Որենքուրդի հրամանատարների կողմից»:

Ծեր չարագործի տրամաբանությունն ինձ բավական համոզիչ թվաց: Իմ ամբողջ մարմնով մի դող անցավ այն մտքից, թե յես ո՛ւմ ձեռքումն եմ: Պուզաչովը նկատեց իմ հուզմունքը: «Հը՞, ձեռք բարեծնեղություն, —ասաց նա ինձ աչքով անելով:—Իմ ֆելդմարշալը, կասենաս՝ խելոք բան ե ասում: Դո խելքն ի՞նչ ե կտրում»:

Պուզաչովի ծաղրանքը վերադարձրեց իմ աշխուժությունը: Յես հանդիստ պատասխանեցի, վրո՛ւ գտնվում եմ նրա իշխանության տակ և վրո՛ւ նա աղատ ե ինձ հետ վարվելու, ինչպես ինքը կկամենա:

«Բարե՛, —ասաց Պուզաչովը:—Հիմա ինձ ասա, թե ի՞նչ դըրության մեջ ե ձեր քաղաքը»:

— Փառք աստուծո՛ւ, —պատասխանեցի յես. —տո՛ւն ինչ լավ ե:

«Լա՞վ ե, —կրկնեց Պուզաչովը:—Իսկ ժողովուրդը սովից կոտորվո՞ւմ ե»:

Ինքնակոչը ճիշտ եր ասում, բայց յես ըստ յերդման պատասխանության սկսեցի հավատացնել, վրո՛ւ այդ բոլորը դատարկ լուրեր են և վրո՛ւ Որենքուրդում ամեն տեսակի բավականաչափ պաշար կա:

«Տեսնո՞ւմ ես, —մեջ ընկավ ծերուկը, —վրո՛ւ նա քեզ յերեսառ յերես խաբամ ե: Բոլոր փախստականները միաբերան պատմում են, վրո՛ւ Որենքուրդում սով ու համաճարակ ե, վրո՛ւ այնտեղ լեչ են ուտում, այն ել փառք՝ յեթե ճարում են, իսկ նորին վտղորմածությունը հավատացնում ե մեզ, վրո՛ւ ամեն ինչ ասատ և այնտեղ: Յեթե դու ուզում ես Շվաբրինին կախել, ապա լավ կանես նույն այդ կախաղանից կախես և այս կտրիճին, վտղորեսդի վրո՛ւ վրո՛ւ չնախանձի»:

Անխիճալ ծերունու խոսքերը կարծես թե տատանեցին Պուզաչովին: Բարեբախտաբար Սյուրպուչան ակտեց հակառակել իր ընկերոջը: «Հելի՛ք, Նատ՛ամիչ, —ասաց նա:—Բեզ վրո՛ւ մնա՛ ամեն ինչ կխեղդես ու կմորթես: Ի՞նչ մի աժդահան ես: Տեսնում եմ, հրեն հոգիդ տալիս ես: Մի վտառք գերեզմանումն ե, բայց ուրիշները տունն ես քանդում: Դի՛՛չ արյուն կա խղճիդ վրա»:

— Ի՞նչ ե, դու սուրբ ես, ելի՛, —առարկեց Բեռքորդովը:— Եղ վորսեղի՞ց դու խղճմտանք ձեռք բերեցիր:

«Իհարկե, —պատասխանեց Սյուրպուչան, —յես ել եմ մեղապարտ և այս ձեռքը (այդ խոսքերի հետ նա սեղմեց իր վոսկրոտ բուռնքը և թեքեցր ճետ ծալելով մերկացրեց մաղոտ թևը), այս ձեռքն ել ե մեղավոր թախած քրիստոնեական արյան համար: Բայց յես հակառակորդիս եմ սպանել, և վրո՛ւ թե հյուրիս. բա՛ց ճանապարհի վրա և մութ անտառում և վրո՛ւ թե տանը, վառարանի վրա վեր ընկած. լախտով ու կոթակով, և վրո՛ւ թե կնիս չարախոսությամբ»:

Ծերունին յերեսը շուռ տվեց և քթի տակ մըթմըթաց. «Ճոթիւ՛ւմ քթածակե՛ր»...

— Ի՞նչ ես քչվիչում, պառա՛վ, —գոռաց Սյուրպուչան:—Յես քեզ ցույց կտամ ճոթած քթածակեր. սպասի՛ր, քո ժամանակն ել կղա, աստծո՛ւմ դու ել կանես քաղաթինների հոտը... Իսկ առայժմ ուշքդ վրադ պահի, քանի չեմ պոկել ցանցառ մորուրդ:

«Պարոն յենադարձե՛ր, —հանդիսավոր ձայնով խոսեց Պուզաչովը:—Հելի՛ք և վիճե՛ք: Յայ չե, յեթե Որենքուրդի բոլոր շենքեր մի միջնափայտից կախվելին ու վտառքեր ձգեյին. ցավն այն կլինի, յերբ մեր շներն իրար զզգեն: Դե՛, հաշովեցե՛ք»:

Սյուրպուչան և Բեռքորդովը վրո՛ւ մի բառ չտասցին և մըսալ նայեցին իրար: Յես անհրաժեշտ համարեցի խոսակցությունը փոխել, վրո՛ւ ինձ համար շատ վատ կարող եր վերջանալ,

և դառնալով Պուգաչովին, ասացի ուրախ դեմքով. «Նի՛խ, քիչ մնաց մոռանալի քեզ շնորհակալություն հայտնել ձեռք և քուրքի համար: Սուսնց քեզ յետ քաղաք չեյի հասնի և կսառչեյի ճանապարհին»:

Սորամանկությունս անցավ: Պուգաչովի դեմքը բնցվեց: «Պարտքը տալով՝ մեղքը լալով,—ասաց նա աչքով անելով և կոպերի կկոցելով:—Այլա մի պատմի ինձ հիմա, թե դու ի՞նչ դործ ունես այն աղջկա հետ, վորին Շվաբրինը նեղացնում է: Ձլինի՛ ջահել քրտիղ արեկանն է, հը՞»:

— Նա իմ հարսնացուն է,—սխառասխանեցի յետ Պուգաչովին, սեռնելով վոր տրամադրությունը դեպի լավը գնաց և կարիք չկա խելությունը թաղցնելու:

«Քո հարսնացուն,—գոռաց Պուգաչովը:—Ինչո՞ւ դու առաջուց չասացիր: Դե մենք քեզ կնչանենք և քո հարսանիքին ել քեֆ կանենք»: Հետո դառնալով Բելոբորոդովին. «Էսի՛ր, ֆելդմարշալ: Մենք նորին բարեօնորդության հետ հին բարեկամներ ենք. նստենք ընթերիք անենք. առաջնորդս չարս իրիկվա բարուց լավ է: Վաղը կտեսնենք, թե ինչ կանենք սրա հետ»:

Յես ուրախությամբ կհրաժարվեյի նրա առաջարկած պատվից, բայց ճարս ի՞նչ եր: Յերկու յերիտասարդ կաղակուհիներ՝ խրճիթի տիրոջ աղջիկները, սեղանը ծածկեցին սպիտակ սխոցով, հաց բերին, ուխա՛ և մի քանի շտոֆ գլինի ու դարեջուր, և յետ յերկրորդ անգամ սեղան նստեցի Պուգաչովի և նրա տարաստիկ ընկերների հետ:

Սրախճանքը, վորին յետ ակամա ականատես յեղա, տեեց մինչև խոր գիշեր: Վերջապես գլխովությունն սկսեց պատել զբուռցակիցներին: Պուգաչովը նիրհեց իր տեղում նստած. նրա ընկերները վեր կացան և ինձ նշան արին՝ մենակ թողնել նրան: Յես դուրս յեկա նրանց հետ միասին: Սլոպուշայի կարգադրությամբ պահակն ինձ տարավ դատական խրճիթը, ուր յետ դռա և Սավելիչին՝ այդտեղ ել ինձ նրա հետ թողին, դուռը դռից կողպելով: Դաստիարակս այնպիսի աղչության մեջ եր՝ տեսնելով այս բոլորը, վոր ինձ վոչ մի հարց չտվեց: Նա պառկեց միջան մեջ և յերկար ա՛խ ու վա՛խ եր անում. վերջապես նա խամփաց և յետ ընկա՛ խորհրդածությունների մեջ, վոր ամբողջ գիշեր վոչ մի բոպե ինձ թույլ չտվին նիրհելու:

1 Ուխա՛—ձկնասպաս:

Առավոտյան յեկան, Պուգաչովի անունից կանչեցին ինձ: Յես գնացի նրա մոտ: Նրա տան դռների առաջ մի կիրիտկա յեր կանգնած, թաթարական յերեք ձի լծած: Ժողովուրդը խոնավել եր փողոցում: Սրահում յետ հանդիպեցի Պուգաչովին. նա ճապարհի շրթեր եր հագել, մուշտակը վրան, կիրգիզական դազկը գլխին: Յերեկվա խոտակիցները չընդարատեցին նրան, դեմքերին ստորաքարչության արտահայտություն տալով, վոր անչափ հակասում եր այն ամենին, ինչին յետ ականատես յեղա նախորդեկին: Պուգաչովը ուրախ—ուրախ բարեկեց ինձ, և հրամայեց, վոր նրա հետ նստեմ կիրիտկայի մեջ:

Մենք տեղալորվեցինք: «Բերդորսկի բե՛րդը»,—ասաց Պուգաչովը լայնաթիկունք թաթարին, վորը կանգնած կառավարում եր յետաձի կիրիտկան: Սիրտս սաստիկ խիեց: Ձիերը շարժվեցին, դանդակը կարկաչեց, կիրիտկան սլացավ...

«Կա՛ց, կա՛ց», — լսվեց ինձ շատ Ծանոթ մի ձայն և յետ տեսա Սավելիչին, վորը մեղ դեմ եր վազում: Պուգաչովը հրամայեց կանգ առնել: «Տե՛ր իմ Պյոտր Սնդրեյիչ,—բղավեց դաստիարակս:—Նա ծեր հասակիս մի՛ ձգիր ինձ սրիկանե...»—Աա՛, քալթառ,—ասաց նրան Պուգաչովը:—Առավա՛ծ տվեց նորից տեսնվելիք: Արի՛, նստիր այստեղ՝ առջևում:

«Ծնորհակալեմ, տե՛ր իմ, շնորհակալ եմ, հարազատ հայրս,—ասաց Սավելիչը իր տեղը նստելով:—Աստված քեզ հարյուր տարի կյանք տա, վոր ինձ՝ ծերունուս մեղքացար և հանդատացրիր: Հավիտյան քեզ համար աղոթք պիտի անեմ աստծուն, իսկ նապաստակի մորթուց կարած մուշտակի մատին ել ձայն չեմ հանի»:

Այդ նապաստակի մուշտակը վերջապես կարող եր սաստիկ դալրացնել Պուգաչովին: Բարեբախտաբար ինքնակողք կամ լավ չլսեց, կամ ուշք չդարձրեց այդ անտեղի ակնարկին: Ձիերը վազեցին. փողոցում ժողովուրդը կանգ եր առնում և մարդիկ մինչև դեպին խոնարհվելով, վողջունում եյին: Պուգաչովը գլխով եր անում աջ ու ձախ: Մի բոպեյից մենք դուրս յեկանք ավանից և սլացանք հարթ ճանապարհով:

Հեշտ է պատկերացնել, թե յետ ի՞նչ զգացի այդ բոպեյին: Մի քանի ժամից յետ պետք է տեսնեյի նրան, վորին այլևս կոբած եյի համարում ինձ համար: Յես յերևակայում եյի իմ հանդիպման բոպեն... Նմանապես մտածում եյի և այն մարդու մա-

սին, վորի ձեռքումն եր իմ բախտը, և վորը հանդամանքներէ տարորինակ դասավորութեամբ խորհրդավոր կերպով կատարած եր ինձ հետ: Յես հիշեցի վրոթկոտ դաժանութեանն ու արյունառուշտ սովորութիւններն՝ ա՛յն մարդու, վորը պատրաստակամութեան հայտնեց իմ տիրելիի փրկարարը յինկու: Պուգաչովը չգիտեիր, վոր նա կատարեալ Միքոնովի աղջիկն և. կատարած Շվարքինը կարող եր նրան պարզել ամեն ինչ. Պուգաչովը կարող եր ճշմարտութեանն իմանալ և՛ այլ կերպ... Ի՞նչ կլինէր այն ժամանակ Մարիա Իվանովնայի վիճակը: Մարմնովս դող եր անցնում և մագերս բիղ-բիղ ելին կանգնում...

Հանկարծ Պուգաչովն ընդհատեց իմ խորհրդածութեանները, դառնալով ինձ աշարիսի հարցով.

«Ձերդ բարեկեցութեանն ինչի՞ մասին ե հաճում մտածել»:

— Ի՞նչպէս չմտածես, — պատասխանեցի յես նրան: — Յես սպա յեմ և ազնվական. դեռես յերեկ յես կուտամ ելի թո դեմ, իսկ այսօր քեզ հետ եմ գնում միկնուկն կիւրիտկայով և իմ ամբողջ կյանքի յերջանկութեանը քեզնից ե կախված:

«Ի՞նչ ե, — հարցրեց Պուգաչովը: — Ձլինի՞ վախենում ես»:

Յես պատասխանեցի, վոր արդեն մի անգամ նրանից ներում ստանալով, յես հույս ունեցի, վոր նա վո՛չ միայն կլինայի ինձ, այլ մինչև իսկ կողմի:

«Յե՛վ դու իրավացի յես, աստված՝ վկա՝ իրավացի յես, — ասաց ինքնակոչը: — Դու տեսա՞ր, վոր իմ տղաները քեզ խեթ-խեթ ելին նայում, իսկ ծերունին դեռ աչսոր ել արնդում եր, վոր դու լրտես ես և վոր պետք ե քեզ տանջել ու կախել, բայց յես չհամարձայնեցի, — ամեկացրեց նա ձայնն իջեցնելով, վորպէսզի Սաւելիչը և թաթարը չկարողանան իրեն լսել, — հիշելով թո մի բաժակ ողին, ու նապաստակի մուշտակը: Դու տեսնո՞ւմ ես, վոր յես դեռ աջնալիս արնախումը չեմ, ինչպէս իմ մասին պատմում են ձեր մարդիկ»:

Յես հիշեցի Բերդորսկի բերդի առումը, բայց հարկ չհամարեցի առարկել նրան և վո՛չ մի բանով չպատասխանեցի:

«Որենքորդում ի՞նչ են ասում իմ մասին», — հարցրեց Պուգաչովը քիչ լսելուց հետո:

— Դե ասում են, վոր քեզ հետ դժվար ե դուռն դնել. խոսք չկա, դու քեզ ցույց տվիր:

Պուգաչովի դեմքին դո՛հ ինքնասիրութեան յերևաց: «Հա, —

ասաց նա ուրախ տեսքով. — Թուրս կտրուկ ե, բա՛: Ձեր Որենքորդում գիտե՞ն արդոք Յուզենովի՞ կովի մասին: Քառասուն յենարալ ե սարմնված, չո՛րս բանակ ե գերի վերցված: Ի՞նչ ես կարծում, պրուսական թագավորը կարո՞ղ ե ինձ հետ չափել»:

Ավագակի անսպարծութեանն ինձ դիտարկելով թվաց: — Ինքը ի՞նչպէս ես կարծում, — ասացի յես նրան. — կարո՞ղ ես Ֆրիդլերիկի՞ հախից գաս:

«Ֆրիդլեր Ֆրիդլերովիչի՞: Ի՞նչպէս չե: Ձեր յենարանների հախից հո գալիս եմ, իսկ արանք քա՛նի անգամ են նրան ջարդել: Մինչև հիմա թուրս կտրուկ ե յեղել: Ժամանակ տուր, դեռ ի՞նչե՛ր կլինի, յերբ կշարժվեմ Մոսկվայի վրա»:

— Իսկ դու մի՞տը ունես Մոսկվայի վրա գնալու:

Ինքնակոչը մի քիչ մտածեց ու կիսաձայն ասաց. «Աստված գիտե: Տեղա նեղվածք ե. ձեռքս՝ կարճ: Իմ տղերքը խելքներին շատ են դոռ տալիս: Նրանք դողեր են: Յես պետք ե ականջս կախ պահեմ. առաջին անհաջողութեան դեպքում՝ նրանք իրենց չլինքը կարծացնեն իմ գլխի գնով»:

— Ա՛յ, տեսնում ես, — ասացի յես Պուգաչովին: — Լավ չի՞ վրնի, վոր ինքը ուր առաջ ձեռք քաշես նրանցից ու դիմես թագուհու վողորմածութեանը:

Պուգաչովը դառնորեն քմծիծաղ տվեց: «Վո՛չ, — պատասխանեց նա, — այլևս ուչ ե ինձ մեղա դալ: Ինձ համար ներում չի լինի: Կշարունակեմ, ինչպէս ակսել եմ: Ի՞նչ իմանաս: Մի գուցե և կհաջողվի: Գրիչկա Ուորեայեվը հո թագավորե՞ց Մոսկվայում»:

— Իսկ դու գիտե՞ս, թե նա ինչով վերջացրեց: Նրան դուրս նետեցին պատուհանից, մորթեցին, աղբեղին, նրա մոխիրը լցրին թնդանոթի բերանը և արձակեցին:

«Լսիր, — ասաց Պուգաչովը մի ինչ վոր վայրագ վոգելորութեամբ: — Քեզ մի հեքիաթ կասեմ, վոր տղա ժամանակս ինձ

1 Յուզենով—գյուղ, վորի մոտ 1773 թվին նոյեմբերի 9-ին Պուգաչովը դժբախտ ջախջախեց կատալարական մի սովոր դորամաս, վոր դեմքերալ Կառի հրամանատարութեամբ ուղարկված եր Որենքորդի պաշարումը վերացնելու նպատակով:

2 Ֆրիդլերիկ—Ֆրիդլեր Ֆրիդլերովիչ, ինչպէս նրան անվանում ե Պուգաչովը—պրուսական թագավոր Ֆրիդրիխ Մեծն ե (1712—1786), վոր հշանակոք զորապետի համբալ ունեւ XVIII դարում:

պատմել և մի ծեր կալմիկուհի։ Մի անգամ արծիւիը հարցնում է ազնաւին. «ասա՛, ազնաւի-թռչուն, այդ ինչի՞ցն է, վոր դու աշխարհըդ տալիս ես յերեք հարյուր տարի, իսկ յես՝ ընդամենը յերեսուն ու յերեք տարի։ — Այդ նրանից է, տեր իմ, պատասխանում և ազնաւիը, վոր դու տաք արյուն էս խմում, իսկ յես՝ լեշով ևմ անվում։ Արծիւիը մտածեց. յե՛կ վորձենք, մենք ել դրանով անլենք։ Լա՛ւի։ Թոան միասին արծիւին ու ազնաւիը։ Ահա նրանք տեսան մի աստիած ձի։ Ազնաւիը սկսեց կտցել ու գոլել։ Արծիւիը կտցեց մի անգամ, կտցեց մեկ ել, թեին զարկեց և ասաց ազնաւին. «վո՛չ, ազնաւ յեղբայր. քան թե յերեք հարյուր տարի լեշով անլել, ավելի լաւ և մի անգամ տաք արյուն իմեկ, հետո՝ աստիած վողորմած է։ — Վո՞նց է կալմիկները հեքիաթը»։

— Սրամիտ է, — պատասխանեցի յես նրան։ — Բայց ուրախությամբ ու կողոպտւումով ապրել, իմ խելքով, ասել է թե՛ լեշ կտցել։

Պուգաչովը նայեց ինձ զարմանքով և վոչինչ չպատասխանեց։ Մենք յերկուսս ել լռեցինք, յուրաքանչյուրս իր մտքերի մեջ ընկղմած։ Թաթարը մի տխուր յերգ սկսեց։ Սալեկիչը, նիրհելով ճոճվում եր իր տեղում։ Կիրիտկան սլանում եր ձմեռային հարթ ճանապարհով... Հանկարծ Յախի գետի զետի զարաւիին յես տեսա մի փոքրիկ գյուղ՝ ցանկապատով և զանգակաւնով — և քառարդ ժամից մենք մտանք Բելոգորսկի բերդը։

ԳԼՈՒԽ XII

Վ Ո Ր Բ Ը

Ինչպես մեր տան ինձորենին,
Վոր վոչ շուղեր ունի, վոչ՝ զաւարթ,
Ենպես ել մեր իշխանուհիլը —
Վոչ հայր ունի, վոչ մայր զթաւաւ։
Ո՛վ կզուքի արդյոք նրան,
Ո՛վ որհուրթուն կտա նրան։

Հարսանեկան յերգ

Կիրիտկան մոտեցավ բերդապետի տան պատշգամբիկին։ Ժողովուրդը ճանաչեց Պուգաչովի զանգակի ձայնը և խռնված վազեց նրա հետեից։ Շվարքինն ինքնակոչին ղեմավորեց պատշգամբ

յիկի առաջ։ Նա կազակի զգեստ եր հագել և մորուք թողել։ Դա վաճանք Պուգաչովին ոգնեց կիրիտկայից դուրս գալ, ստորաքար խոտքերով իր ուրախությունն ու ջանասիրությունն արտահայտելով։ Ինձ տեսնելով նա շփոթվեց, բայց չուտով հալաքեց իրեն, ձեռքը պարզեց, ասելով. «Դու ե՛լ մերն ես։ Վաղուց պետք է այդպես անելիք»։ — Յես յերեսս չուռ տվի նրանից և վոչինչ չպատասխանեցի։

Միքտս կսկծաց, յերբ մենք մտանք վաղուց ծանոթ սենյակը, ուր պատից դեռ կախված եր հանգուցյալ բերդապետի դիւլումը, վարպետ անցած ժամանակի տխուր դամբանագիր։ Պուգաչովը նստեց այն բազկաթոռի վրա, ուր յերեքամ նիրհում եր Իվան Կուզմիչը, իր ամուսնու քրթմնջոցի տակ քուն մտած։ Շվարքինն իր ձեռքով նրան ողի մատուցեց։ Պուգաչովը իմեց մի գալաթ և ինձ ցույց տալով, ասաց նրան. «Նորին բարեճննդությանն ել հյուրասիրի»։ Շվարքինը մոտեցավ ինձ իր մատուցարանով, բայց յես յերկրորդ անգամ յերեսս չուռ տվի նրանից։ Յերևում եր, վոր նա գլուխը կորցրել և։ Իր առվորական զգաստությամբ նա, իհարկե զլիտ ընկավ, վոր Պուգաչովն անբավական է իրենից։ Շվարքինը վախենում եր նրանից, իսկ ինձ անպատահությամբ եր նայում։ Պուգաչովը տեղեկացավ բերդի դուրթյան, թշնամու գորբերի վերաբերյալ պտտվող լուրերի և նման բաների մասին, և հանկարծ անսպասելի հարցրեց նրան. «Ասա՛, յեղբայր, այդ ի՞նչ աղջիկ է, վորին քեզ մոտ պահում ես հակողության տակ։ Հապա մի ցույց տուր ինձ»։

Շվարքինը մեռելի պես դունդաւեց։ — Տեր իմ, — ասաց նա դողդոջուն ձայնով... — Տեր իմ, նա հակողության տակ չե... նա հիվանդ է... նա վերել տեսյակումն և պտուկած։

«Դե տար ինձ նրա մոտ», — ասաց ինքնակոչը տեղից վեր կենալով։ Հրաժարվել անհնար եր։ Շվարքինը Պուգաչովին տալով Մարիա Իվանովնայի սենյակը։ Յես հտեցի նրանց։

Շվարքինը կանգ առավ սանդուխքի վրա։ «Տե՛ր իմ, — ասաց նա։ — Դուք իրավադոր եք ինձնից պահանջելու ամեն բան, ինչ վոր կամենաք, բայց մի հրամայեք կողմնակի մարդուն մտնել ննջարանը, իմ՝ կնոջ մոտ»։

Յես ցնցվեցի։ «Ուրեմն դու ամուսնացած ես», — ասացի յես Շվարքինին, պատրաստվելով պատառոտել նրան։

«Հանգի՛ստ, — ընդհատեց ինձ Պուգաչովը։ — Դա իմ դործն

ե: Իսկ դու,— չարունակեց նա, Շվաբրինին դառնալով,— խեղճիդ զոռ մի տա և մի կոտորատիլիր. նա քո կիներն ե, թե կիներ չեն, յես նրա մոտ տանում եմ ում կամենամ: Ձե՛րդ բարեծննդու-թյուն, յեկ իմ հետեւից»:

Սենյակի դռները մոտ Շվաբրինը նորից կանգ առավ և ասաց ընդհատվող ձայնով. «Տե՛ր իմ, նախադուռչացնում եմ ձեզ, վոր նա առատիկ ջերմի մեջ ե և յերկրորդ ուրն ե, վոր անդադար դառանցում ե»:

— Բա՛յ,— ասաց Պուզաչովը:

Շվաբրինն սկսեց տնտրել իր դրամները և ասաց, վոր բա-նալին հետը չի վերցրել: Պուզաչովը վոտքով խիսեց դռանը, կող-պեքը թռավ. դուռը բացվեց և մենք ներս մտանք:

Յես նայեցի և քարացա: Հատակին, գեղջկական պատառոտ-ված զգեստով նստած եր Մարիա Իվանովնան — դուստտ, նի-հար, գլղղված մաղերով: Նրա առաջ դրված եր մի կուժ ջուր, վրան հացի պատառ: Ինձ տեսնելով նա ցնցվեց ու աղաղակեց: Թե ինձ հետ ի՞նչ յեղավ այն ժամանակ՝ չեմ հիշում:

Պուզաչովը նայեց Շվաբրինին և ասաց դռն քմծիծաղով. «Լա՛ւվ հիւանդանոց ես ունեցել»: Հետո, մոտենալով Մարիա Ի-վանովնային. «Ասա՛ ինձ, աղաւնյակա, ինչո՞ւ համար ե քո ա-մուսինը քեզ պատժում: Ի՞նչով ես դու մեղավոր նրա առաջ»:

— Իմ ամուսինը,— կրկնեց նա: — Իմ ամուսինը չե՛ նա: Յես յերբե՛ք նրա կինը չեմ դառնա: Յես վճռել եմ՝ լավ ե մեռնել և կմեռնեմ, յեթե ինձ չազատեն:

Պուզաչովն ահեղ նայեց Շվաբրինին. «Յեկ դու համարձակ-վեցիր ինձ խաբե՞լ,— ասաց նա: — Իսկ դու գիտե՞ս, անախտան, թե ինչի՞ յես արժանի»:

Շվաբրինը ծունկ չոքեց... Այդ րոպեյին արհամարհանքն իմ մեջ խեղդեց ատելության և դաշրույթի ամեն մի գրացում: Յես նողկանքով եյի նայում աղնվականին, վոր ընկել եր վախտտական կաղակի վոտքերը: Պուզաչովը մեղմացավ: «Այս անգամ ներում եմ քեզ, — ասաց նա Շվաբրինին. — բայց իմացած լինեա, վոր ա-ռաջին իսկ հանցանքիդ հետ այս ել կհիշվի»: Հետո նա դիմեց Մարիա Իվանովնային և սիրալիբ ասաց նրան. «Դուքս յեկ, սի-րուն աղջիկ. ազատություն եմ պարգևում քեզ: Յես թաղավորն եմ»:

Մարիա Իվանովնան արագ նայեց նրան և գլխի ընկավ, վոր

առջևը կանգնած ե իր ծնողներին սպանողը: Նա դեմքը ծածկեց զույգ ձեռքերով և ընկավ ուշադնաց: Յես վրա հասա. բայց այդ րոպեյին շատ համարձակ սենյակ սողոսկեց իմ վաղեմի ծանոթ Պալաչան և սկսեց հոգ տանել իր որիորդի համար: Պուզաչովը դուրս յեկավ սենյակից, և մենք յերեքս իջանք հյուրասանյակ:

«Հը՛, ձերդ բարեծննդություն,— ծիծաղելով ասաց Պուզա-չովը: — Գեղեցկուհուն փրկեցի՛նք: Ի՞նչ ես կարծում, մարդ չուղարկե՞մ տերտերի հետեւից և չստիպե՞մ, վոր նա պսակի իր բարեկամուհուն: — Յես ել կդառնամ հարսանեհայրը, Շվաբրի-նը՝ խաչեղբայրը: Տուն-դուռ ծածկենք, իմենք ու մի լա՛ւվ քեֆ անենք»:

Ինչից յերկյուղ եյի կրում, այն ել կատարվեց: Շվաբ-րինը, լսելով Պուզաչովի առաջարկությունը, ինքն իրեն կորց-րեց: «Տե՛ր իմ,— կանչեց նա կատաղած: — Յես մեղավոր եմ, յես խաբեցի ձեզ, բայց Գրինյովն ել ե ձեզ խաբում: Այս աղջիկը յերեցկնոջ քոջ աղջիկը չե. նա իվան Միրոնովի աղջիկն ե, բերդապետի, վորին կախեցինք այս բերդը վերցնելիս»:

Պուզաչովը ինձ հառեց իր կրակոտ աչքերը: «Ա՛յս ինչ բան ե» — հարցրեց նա ինձ տարակուսանքով:

— Շվաբրինը քեզ ճիշտն ասաց,— պատասխանեցի յես հաս-տատ:

«Դու ինձ այդ բանը չես ասել», — նկատեց Պուզաչովը, վորի դեմքը մոռցվեց:

— Ինքդ դատիր,— պատասխանեցի յես նրան,— արդյոք կա-րելի՞ յեր քո մարդկանց մոտ հայտնել, վոր Միրոնովի աղջիկը կենդանի յե: Ձե՞ վոր նրանք կբղկտեյին աղջկան: Վոչի՛նչ չե՛ր փրկի նրան:

«Այդ ել ճիշտ ե,— ծիծաղելով ասաց Պուզաչովը: — Իմ հարեցողները չեյին խնայի խեղճ աղջկան: Լավ ե արել սանա-մեր-յերեցկինը, վոր խաբել ե նրանց»:

— Լսիր,— չարունակեցի յես, տեսնելով նրա բարյացակամ վերաբերմունքը: — Ի՞նչ անումով կանչեմ քեզ՝ չգիտեմ ու չեմ ել ուզում իմանալ... Բայց տեսնում ե աստված, վոր յես ուրախ կլինեյի իմ կյանքով յերախտահատուլյց լինել քեզ այն ամենի հա-մար, ինչ դու արեցիր ինձ համար: Միայն՝ մի՛ պահանջիր այն, ինչ հսկառակ ե իմ պատվին ու քրիստոնեական խղճին: Դու իմ բարերարն ես: Ավարտիր ինչպեա վոր սկսել ես. բա՛յ թող ինձ

խեղճ վորքուհու հետ՝ գնանք, ուր վոր աստված մեզ ճանապարհ
ցուցց կտա: Իսկ մենք, ո՛ւր ել վոր դու լինես, լի՛նչ ել վոր քեզ
հետ պատահելու լինի, ամեն ուր ասածուն աղոթք կանենք քո մե-
ղաբարտ հոգու համար...:

Կարծես թե Պուլգաչովի դատան ակրտը զգացվեց: «Ե՛հ, թող ջո ասածը լինի, — ասաց նա: — Մահապատիժս՝ մահապատիժ ե, չնորհս՝ չնորհ: Այդպես և իմ սուլորությունը: Ա՛ռ ջո գեղեցկուհուն, տար, ուր վոր կուզես և թող աստված ձեզ սեր ու համաձայնություն չնորհի»:

Այդ խոսքերի հետ նա դարձավ Շվաբրինին և հրամայեց, չոր նա անցաթողի տա ինձ, իր իշխանության տակ գտնվող բոլոր ուղեւորներով ու բերդերով անցնելու համար: Շվաբրինը միանգամայն խորտակված, կանգնել եր ինչպես քարացած: Պուգաչովը դնաց բերդը դիտելու: Շվաբրինը նրան ուղեկցում եր, իսկ յես Բնացի ճանապարհի պատրաստությաններ տեսնելու պատրիակով:

Յես վագեցի դեպի աննյակը: Դո՞նեքը փակված է յին: Յես
բաղխեցի: «Ո՞վ է», — հարցրեց Պարաշան: Յես ասացի ամուսնս:
Դո՞նեքի աչն կողմից լսեց Մարիա Խվանովնայի անուշ ձայնը:
«Քիչ սպասեցեք, Պյոտր Անդրեյիչ: Յես չորեքս եմ փոխում:
Գնացեք Ակուլինա Պամֆիլովնայի մոտ. յես իսկույնն աշնտեղ
կգամ»:

Յետ Հնարդանդալեցի և զնացի Հայր Գերասիմի տունը: Նա եւ, յերեցիկինն եւ դուրս վազեցին ինձ դիմաւորելու: Սալեիկն արդեն նախազգուշացրեւ եր նրանց: «Բարե՛ ձեզ, Պյոտր Անդրեեիկ, —ասաց յերեցիկինը: — Աստված ելի արժանացրեց միմյանց տեսության: Ի՞նչպե՞ս եք: Իսկ մենք, ղե եմ ե, ամեն ոք հիշում ենք ձեզ: Բայց Մարիա Իվանովնան՝ իմ աղօնակա, եւ ի՞նչ ասես, վրո չքաչեց առանց ձեզ... Մի ասացեք տեսնեմ, սիրելիս. դուք ի՞նչպե՞ս տարեցիք դործը Պուզաչովի հետ: Ի՞նչպե՞ս յեղալ, վր նա ձեր գլուխն եւ չկերալ: Բարի, շնորհակալ ենք չարագործից դոնե դրա համար»: — Հերիք խոսես, պատա՛վ, — բնդհատեց Հայր Գերասիմը: — Ինչ վր գիտես՝ դուրս մի տա: Ձի՛ք փրկություն ի բազում բարբառելն: Տե՛ր իմ, Պյոտր Անդրեեիկ, համեցեք ներս, խնդրում ենք: Վաղո՛ւց, շա՛տ վաղուց ե չենք տեսնուիլ:

Յերեկան լինե՞լ Կյուրասիոյ — աստուծո՛ւ ինչ վտր տվել

էր և միտաւամբանակ անդադար խոսում եր: Նա ինձ պատմեց, թիւ
Զվարթրինն ինչպես ե իրենց հարկադրել նրան հանձնել Մարիա
Իվանովնային. ինչպես Մարիա Իվանովնան լաց ե դիչել և չի կա-
մեցել նրանցից բաժանուել. ինչպես Մարիա Իվանովնան իր հետ
մշտական կապ եր ունեցել Պալաչկայի միջոցով (Ժիր աղջիկ ե,
վորը ուրյապէնիկին ել հարկադրում ե իր խոսքով չարժուել). ինչ-
պես նա խորհուրդ ե տվել Մարիա Իվանովնային ինձ նամակ
գրել և ալին: Իմ հերթին յես կարճատոտ պատմեցի իմ պատմու-
թյունը: Տերտերն ու յերեցիկներ յերեսներին խաչ եյին հանում,
լսելով, վոր Պուլխանովին հայտնի յե նրանց խաբէյությունը:
«Մեզ հետ ե խաչի զորությո՛ւնը, — ասում եր Ակուլինա Պամֆի-
լովնան: — Տեր ասում, ղո՛ւ փրկես փորձանքից: Ի՞նչ եմ ա-
սել, Ալեքսեյ Իվանիչը, խոսք չկա, պտուղ ե, հա՛»: — Հենց այդ
րոպէին ղուռը բացվեց և ներս մտավ Մարիա Իվանովնան՝
Ժախտը գունատ դեմքին: Նա հանել եր իր դեղճկական զգեստը և
հագնւած եր առաջիկա նման՝ պարզ ու դուրեկան:

Յետ արագ բռնեցի նրա ձեռքը և յերկար ժամանակ վոչ մի բառ չհարողացաւ արտասանել։ Մենք յերկուսս ել լուռ ելինք բռուն հռովմունքից։ Մեր հյուրընկալներն դգացին, վոր իրենք սովելորդ են և դուրս գնացին։ Մնացինք մենակ։ Ամեն ինչ մոռացված էր։ Մենք զբոսցում ելինք և չեյինք հազնետմ խոսե-
ռացված էր։ Մենք զբոսցում ելինք և չեյինք հազնետմ խոսե-
լուց։ Մարիա Իվանովնան ինձ պատմեց ամեն ինչ, վոր նրան
պատահել էր բերդէլ առման ողբից։ Նա նկարագրեց իր վիճակի
ամբողջ տարասիր, բոլոր այն տանջանքները, վոր ինքը կրել էր
գարշելի Շվաբրինի կողմից։ Մենք հիշեցինք և նախկին յերջանիկ
ժամանակը... Յերկուսս ել լաց յեղանք... Վերջապես յես ական-
ցի բացատրել նրան իմ դիտավորությունները։ Նրա համար այ-
լևս անհնար էր մնալ մի բերդում, վոր գտնվում էր Պուգաչովի
իշխանության տակ և կառավարվում Շվաբրինի ձեռքով։ Չէր
կարելի մտածել նույնպես և Որենբուրգի մասին, վոր կրում էր
պաշարման բոլոր աղետները։ Այսպէսով նա չունէր և վոչ մի
հայրադատ մարդ։ Յես նրան առաջարկեցի գնալ գյուղ՝ իմ ծնող-
ների մօտ։ Սկզբում նա տատանվեց. նրան հայտնի յեր հորս ան-
բերի մօտ։ Սկզբում նա տատանվեց. նրան հայտնի յեր հորս ան-
բարյացակամությունը և դա վախեցնում էր։ Յես հանդատարի
նրան։ Յես գիտեցի, վոր հայրս իր համար յերջանկություն կհա-
մարի և իր պարտականությունը կհաշվի ընդունել հայրենիքի
համար ընկած վաստակավոր ռազմիկի աղջկանը։— Սիրելի Սա-

րիա Իվանովնա, —ասացի յես վերջապես:—Յես քեզ իմ կիներն եմ համարում: Ձարմանալի հանդամանքներն անխցելի կերպով կապել են մեզ: աշխարհում վոչ մի բան չի կարող մեզ անջատել:— Մարիա Իվանովնան ինձ լսում եր սրբազ, առանց շինծու ամոթխածության, առանց հեռաբախտ առարկումների: Նա զգում եր, վոր իր բախտը կապված ե իմի հետ: Սակայն նա կրկնեց, վոր այլ կերպ, քան իմ ծնողների համաձայնությամբ, նա չի լինի իմ կինը: Յես բնավ չառարկեցի նրան: Մենք համբուրվեցինք ջերմ, անկեղծ—և այսպիսով ամեն ինչ մեր մեջ վճռված եր:

Մի ժամից հետո ուրյադնիկն ինձ մի անցաթուղթ բերեց, ստորագրված Պուգաչովի խզբազրով և նրա անունից ինձ նրա մոտ կանչեց: Յես Պուգաչովին տեսա ճանապարհ ընկնելու պատրաստ: Չեմ կարող ասել, թե յես ինչ զգացի, յերբ հրաժեշտ տվի այդ սոսկալի մարդուն, վորը հրեջ եր ու չարագործ բոլորի համար, բացի միայն ինձնից: Ինչո՞ւ ձեռքը չառել: Այդ րոպեյին մի ուժգին կարեկցություն ինձ քարշում եր դեպի նա: Յես բուռն կերպով ցանկանում եյի նրան դուրս կորզել չարագործների շրջանից, վորոնց նա առաջնորդում եր, և վրկել նրա գլուխը՝ քանի դեռ ժամանակ կար: Շվաբրինը և ժողովուրդը, վորոնք խոնաված եյին մեզ մոտ, խանդարեցին ինձ արտահայտել այն ամենը, ինչով լի յեր իմ սիրտը:

Մենք բարեկամաբար բաժանվեցինք: Պուգաչովը ամբոխի մեջ տեսնելով Ակուլինա Պամֆիլովնային, մատով սպառնաց նրան և խորիմաստ կերպով աչքով արեց. հետո նստեց կիբիտկան, հրամայեց քչել դեպի Բերդա և յերբ ձեռքը չարժվեցին, այն ժամանակ նա մեկ ել դուրս շրջվեց կիբիտկայից և կանչեց ինձ. «Մնա՛ս բարով, ձերդ բարեճննդություն. գուցե՛» յերբևիցե տեսնեմք: — Իրոք մենք տեսնվեցինք, սակայն ի՞նչ պարագաներում...

Պուգաչովը մեկնեց: Յերկա՛ր յես նայեցի սպիտակ տափաստանին, վորով ընթանում եր նրա յեռածի կառքը: Ժողովուրդը ցրվեց: Շվաբրինը ծլկվեց: Յես վերադարձա քահանայի տունը: Ամեն ինչ պատրաստ եր մեր ուղևորման համար. յես չեյի ուզում այլևս դանդաղել: Մեր բոլոր ունեցած—չունեցածը տեղավորված եր բերդապետի հին սայլակի վրա: Կառապանները մի ակնթարթում լծեցին ձեռքը: Մարիա Իվանովնան զնաց իր ծնողների գերեզմաններին հրաժեշտ տալու. նրանք թաղված եյին յեկեղեցու

յետեր: Յես ուզում եյի ուղեկցել նրան, բայց նա խնդրեց ինձ իրեն մենակ թողնել: Մի քանի րոպեյից նա վերադարձավ, լուռ ու խաղաղ արտասվելով: Սայլակը պատրաստ եր: Հայր Գերասիմը և նրա կինը դուրս յեկան տան պատշգամբիկը: Մենք յերեքով նստեցինք կիբիտկան. Մարիա Իվանովնան Պալաչայի հետ և յես: Սավելիչը բարձրացավ, նստեց կառապանի կողքին: «Գնա՛ք բարով, Մարիա Իվանովնա, աղունակս. զնա՛ք բարով, Պյոտր Անդրեյիչ, մեր աչքի լույս,—ասում եր բարի յերեցիկներ:—Բարի ճանապարհ, աստված ձեզ յերկուսիդ ել յերջանկություն տա»: Մենք շարժվեցինք: Բերդապետի տան պատուհանի մոտ տեսա կանգնած Շվաբրինին: Նրա դեմքը մոայլ չարություն եր արտահայտում: Յես չեյի կամենում ցնծալ ջախջախված թըշնամու հանդեպ և աչքերս ուրիշ կողմ դարձրի: Վերջապես մենք դուրս յեկանք բերդի դարպասներից և հավիտյան թողինք Բելո-դորսկի բերդը:

ԳԼՈՒԽ XIII

Ձ Ե Ր Բ Ա Կ Ա Լ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Մի՛ զայրանաք, տեր իմ, պարտքս ե պահանջում
Ուղարկել ձեզ բանտը, հիմա անմիջապես:
— Խնդրեմ, յես պատրաստ եմ. սակայն հույս ունեմ,
Նախ թույլ կտաք ինձ դործը պարզարանեմ:

Կնյամսին

Այդպես անակնկալ կտարվելով սիրած աղջկա հետ,—վորի մասին դեռևս առավոտյան այնպես ցավալիկ անհանդիստ եյի,— յես չեյի հավատում ինքս ինձ և կարծում եյի, թե ինձ հետ պատահած ամեն ինչ դատարկ յերազ եր: Մարիա Իվանովնան մտադրազ նայում եր մերթ ինձ, մերթ՝ ճանապարհին և թվում եր, թե դեռ ուշքի չի յեկել ու չի հասկալ իրեն: Մենք լուռ եյինք: Մեր սրտերը չափից դուրս հոգնատանջ եյին: Աննկատելի կերպով յերկու ժամից մենք հասանք մերձակա մի բերդ, վոր նույնպես Պուգաչովի իշխանության տակ եր: Այստեղ մենք փոխեցինք ձեռքը: Տեսնելով, թե ինչ արագությամբ են լծում ձիերին, թե ինչ փութիտո պատրաստակամություն ե ցույց տալիս մորուքավոր կազակը, վորին Պուգաչովը պարետ եր կարգել,—յես հատկացա, վոր շնորհիվ մեզ բերդը կառապանի շատախոսության, ինձ ըն-

դունում են վորպես բախտի բերամար արքունիքում չնորհ դառած մի բարձրաստիճանատիրի:

Շարունակեցինք մեր ճանապարհը: Սկսեց միջեկ: Մենք մտնում էինք մի փոքրիկ քաղաքի, ուր, մորուքավոր պարետի ասելով մի ուժեղ զորախումբ եր դառնում, վորը դնում էր ինքնակոչին միանալու: Պահակները մեզ կանգնեցրին: Այն հարցին, թե ո՞վ ե զարկա, կառապանը բարձրաձայն պատասխանեց. — «Թազավորի խնամին իր տանտիկնոջ հետ»: Հանկարծ, հուսարների բազմությունը մեզ շրջապատեց սարսափելի հայհոյանքով: «Դու՛րս արի, դե՛ր խնամի, — ասաց ինձ բեխավոր վախժխաորը¹: — Այ թե բուրդը բարեբար կհանե՞նք — քոնե ել, քո տիկնոջն ել»:

Յես դուրս յեկա կիրթակայից և պահանջեցի, վոր ինձ տանեն իրենց պետի մոտ: Տեսնելով, վոր յես սպա յեմ, գինյորները դադարեցրին հայհոյանքը: Վախժխաորն ինձ տարավ մայրի մոտ: Սավելիչն ինձնից հետ չեւ մնում, քիթ տակ քրթմնջալով. «Ե՛ս ել քու թազավորի խնամին: Մից յեկանք՝ մրջուրն ընկանք... Տե՛ր աստված, արդյոք ինչո՞վ կվերջանա ես բոլորը»: Կիրթական դանդաղ հետևում եր մեզ:

Հինգ րոպեից մենք մոտեցանք պայծառ լուսավորված մի տնակի: Վախժխաորն ինձ թողեց պահակի հետ և դնաց իմ մասին հայտնելու: Նա խսկույն և եթ վերադարձավ, հայտարարելով ինձ, վոր նորին բարձր բարեծննդությունը ժամանակ չունի ինձ բնդունելու և, վոր նա հրամայել է բանտ տանել ինձ, իսկ տիկնոջն իր մոտ բերել:

— Դա ի՞նչ է նշանակում, — խալեցի յես կատաղած: — Մի՞թե նա գժվել է, ի՞նչ է:

«Ձեմ կարող իմանալ, ձե՛րդ բարեծննդություն, — պատասխանեց վախժխաորը: — Միայն թե նորին բարձր բարեծննդությունը հրամայեց ձեռք բարեծննդության բանտ տանել, իսկ նորին բարեծննդության տիկնոջը հրամայված է նորին բարձր բարեծննդության մոտ տանել, ձե՛րդ բարեծննդություն»:

Յես նետվեցի դեպի մուտքը: Պահակները չփորձեցին ինձ քանել և յես ուղղակի ներս ընկա մի սենյակ, ուր հինգ վեց հոգի հուսարական սպաներ բանկ եյին խաղում: Թուղթ բաժանողը

¹ Վախժխաոր-հեծյալ զորախմբի ավագ:

մայրն եր: Մեծ եր իմ դարձանքը, յերբ նրան նայելուն պես ճանաչեցի Իվան Իվանովիչ Չուրինին, վորը ժամանակով թղթախաղի մեջ տարավ ինձ Սիմբիրսկի պանդոկում:

— Մի՞թե կարելի բան է, — կանչեցի յես, — Իվան Իվանովիչ, արդյոք դո՞ւ յես:

«Բա՛, բա՛, բա՛, Պյոտր Անդրեյիչ: Այս վո՞ր քամին բերեց քեզ: Վո՞ր տեղից ես դալիս: Բարե, յեղբայր, բարե: Չե՞ս ուզում արդյոք թուղթ դնել»:

— Շնորհակալ եմ: Սվելի լավ է հրամայիր, վոր ինձ բնա-կարան տան:

«Ինչի՞դ ե պետք բնակարանը: Մնա ինձ մոտ»:

— Ձեմ կարող. յես մենակ չեմ:

«Դե ընկերոջդ ել ախտեղ բեր»:

— Յես ընկերոջ հետ չեմ. յես... մի տիկնոջ հետ եմ:

«Տիկի՛ն: Այդ վո՞ր տեղից ես դու նրան ճանկել: Եհե՛, յեղբայր» (Այս խոսքերի հետ Չուրինն ախտե նշանակալից սուլեց, վոր ամենքը հրճացին, իսկ յես բոլորովին չփոթվեցի):

«Դե՛, — շարունակեց Չուրինը, — թող աղաքես լինի: Բնակարան կստանաս: Բայց ամսո՞ւ... Մենք մի լավ քեֆ կանեյինք, ինչպես անցյալ անգամ... Հե՛յ, տղա: Հասալ ինչո՞ւ ախտեղ չես բերում Պուզաչովի պատվական սանամորը. չլինի՞ համառո՞ւմ է: Ատե՛ր նրան, վոր չվախենա, բարինը շատ լավ մարդ է, վոչընչով չի վիրավորի նրան: Ու մի լավ դարկե՛ք չլնքին»:

— Ի՞նչ ես անում, — ասացի յես Չուրինին: — Ի՞նչ Պուզաչովի սանամայր, ի՞նչ բան: Նա հանդուցյալ կապիտան Միրոնովի աղջիկն է: Յես նրան դուրս եմ բերել դերությունից և հիմա ուղեկցում եմ մինչև հորս դյուղը, ուր և կթողնեմ նրան:

«Ի՞նչպես: Ասել է թե հիմա քո մասի՞ն եր, վոր ինձ գեկուցեցին: Աստված սիրես, այս ի՞նչ է նշանակում»:

— Հետո կպատեմ ամեն ինչ: Իսկ հիմա, ի սեր ասածո, հանգստացրու խեղճ աղջկան, վորին քո հուսարները սրտաճաք արին:

Չուրինն խսկույն կարգադրություն արեց: Նա ինքը դուրս յեկավ փողոց ներողություն խնդրելու Մարիա Իվանովնայից՝ ակամա թյուրիմացության համար և վախժխաորին հրամայեց քաղաքում ամենալավ բնակարանը նրան հատկացնել: Յես մնացի Չուրինի մոտ գիշերելու:

Մենք ընթերցելնք և, յերբ յերկուսով անացինք, յես նրան սրատմեցի իմ արկածները: Չուրբինն ինձ լսում եր մեծ հետաքրքրությամբ: Յերբ յես վերջացրի, նա գլուխը շարժեց և ասաց «Յեղբայր, այս բոլորը՝ լավ. մի բան ե վատը. մի՞թե սատանան ե դողում քեզ ամուսնանալու: Յես, վորպէս աղնիվ սալա, չեմ ուզում քեզ խաբել. ուրեմն հավատա ինձ, վոր ամուսնությունը խելառություն ե: Ասա՛, մի՞թե կարող ես դու կնոջ դարդ քաշել և յերեսխաներ խնամել: Ե՛հ, թըրի եդ բանի վրա: Ինձ լսիր. ձեռք քաշի կապիտանի աղջկանից: Սիմբիրսկի ճանապարհը յես մաքրել եմ և անվտանգ ե: Վաղն և եթ նրան մենակ ուղարկիր քո ծնողների մոտ, իսկ ինքդ մնա իմ ջոկատում: Կարիք չկա, վոր դու վերադառնաս Որենբուրգ: Նորից կընկնես խռովարարների ձեռքը և այլևս դժվար թե մեկել ել գլուխդ ալըծացնես: Այսպիսով, սիրային հիմարությունն ել ինքն իրեն կանցնի և ամեն ինչ լավ կլինի»:

Թեպետ յես լիովին համաձայն չեյի նրա հետ, ասկայն դժա-
ցի, վոր պատուո պարտքս պահանջում ե իմ ներկայութիւնը թա-
գուհու զորքի մեջ: Յես վճռեցի հետեւել Զորքինի խորհրդին՝
Մարիա Իվանովնային ուղարկել գյուղ և ժնայ նրա ջոկատում:

Սաղեկիչն յեկապ շորերս հանելու: Յես հայտնեցի նրան, յիւր
մշուս որն և եթ արատրաստ լինի ճանապարհ ընկնելու Սարկա
Իմանութնայի հետ: Նա ուղղամ եր համարել:

«Ի՞նչ եւս ասում, տեր իմ: Յես ինչպես թողնեմ քեզ: Ո՞վ պիտի հոգ տանի քո մասին: Ի՞նչ կաանն քո ծնողները»:

Գիտենալով իմ վերակացուի համառությունը, յետ մտքումս
դրի փաղաքջանքով ու անկեղծությամբ համոզել նրան.—Իմ լա-
